



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

891.99

2-28

C. 23. 1. 5.

REPUBLICAN PARTY

STATE OF NEW YORK
IN SENATE
January 10, 1892

REPORT OF THE
COMMISSIONERS OF THE LAND OFFICE



ALBANY:
ANDREW D. WHELAN, PRINTER

1892

10 NOV 2011

891.99

2 - 28

ՅԱԻԵՐԳՔ ՀԱՅՐԵՆԵԱՑ

Գ Ր Ե Ց

Հ Ա Յ Ո Ր Գ Ի Ն

Հարստության
ճանապարհը — Գանձեր

« Պատմությունը սրբակ դրնէ այն Հայուն՝
Որ ցա՛ն անկեղծ սիրեց աշեր Հայունն... »

Ս . ՖԷԼԷԿԵԱՆ



Գ Ա Հ Ի Ր Է

ՅՊԱԴՐ . Ե . ԽՈՐՈՍԵԱՆԻ

1902

8 APR 2014


37949

8888888888888888



5317-88

ԽՕՍԲ ՄԲ ՄԻԱՅՆ



Զիկա՛յ մարդկային կեանքի մէջ ՍԷՐ ա՛յնն-
 քան սիրելի, ա՛յնքան վսեմ, ա՛յնքան պաշ-
 տելի՛ յնս Աստուծոյ, քան ՍԵՐ Հայրենեաց .
 ՍԵՐ՝ որուն քարճուքիւնը, քան զամենք զեր
 ի վեր, ւստրական ընդ միայն կրնայ զգալ . . .

Աստրականի ընդ հայրենաստեղծ սիրտէն
 քիսած են այս ՅԱԻԵՐՎՆԵՐԻ՝ արցունքով զըր-
 ւած եւ ճշմարիտ Հայրենաստեղծերու նմիր-
 քած, զի՛

«Վիրաւոր Հայր ունի սիրն աշխն,
 Հայեր, ո՛նի, շա՛ս կան, քայց յե՛ն վի-
 րաւոր . . .

Ա՛ն որ վերջ չունի, Հայ չքամիր ակնը,
 Վիրաւոր Հայ ընդ մնի սիրն աշխն »

ՀԱՅՈՐԴԻ

ԱՌ ՈՂԲԱՅԵԱԼ ՄԱՅՐ ԻՐԲ

ՅԻՔԻՆ ԼՈՒՍՈՒՅԻՐ Մ․ Շ․․․

Հանդուցեալ ի Տէր, յամին 1889 Յուլիս 17

Ետիբէ:

ՀԱՅՈՐԴԻՆ

Պայծառ Արփոյն Լուսաբեր
Անոյ՛ Անունդ յորջորջեց
Եւ առաւօտ յօրաբեր՝
Մայրի՛կ, Արեւդ հարածեց :

Պանդուխտ և՛որ կեանքն է յիսուր .
Պանդուխտիկ յոյսն անհավառ յը .
Բայց թէ ա՛յնքան անգո՛ւր էր՝
Մա՛յր, ուր Քեզի սար սեւ հողեր . . .

Բայց Դուն երկիւնքն ընտրեցիր ,
Խաչիդ կեանքը փակեցիր .
Զաւակներուդ սերն սոյր՝
Յիսուսին զոն մատուցիր :

Արդ՝ իբրեւ խննկ աչդ զոնիդ՝
Ողբերն անա՛ Քու որդիդ՝
Կեզ ձօնե , Մայր կարողին ,
Ա՛ն , Երբի՛րէ՛ Յիսուսին :

Ըսե՛ , — Զաւիկդ սարսգիր ,
Զոր ա՛յնքան շատ սիրեցիր ,
Բաժին միայն կարս կեանքին՝
Յա՛ւ ու արցունք մընացին . . .

ՆՈՒՐ ՀԱՄԱԿՐԱՆԱՑ

ԱՌ ՀԱՅՐԵՆԱՆՈՒԷՐ

Հ Ա Յ Ո Ր Գ Ի Ն

ԱՇԽԱՏԱԿԻՅՆ «ԱՐՇԱՆՈՅԱՆ»

Մուժ գիշեր մ'էր • ու ամեն կողմ խաւար կար,
Լուս էր երկինք • լուս էր յայնժամ ողջ աշխարհ,
Յափշտակուած մինչ մտախոհ կայի ես,
Կը խորհէի Հայոց վիճակ վշտակէզ:

Սարսուռ բերող ձայն մը հասաւ ականջիս,
Չայնը եկաւ, զարկաւ ծերուկ քնարիս •
Ոյր թուլացած փտած թեկերը բեկան,
Խեղճուկ քնարս զարձեալ ողբոց առաւ ձայն:

Այս ձայն կուգար Աւարայրի դաշտերէն,
Ուր որ Հայոց հարազատներ կը ննջեն •
Ուր հայ փառաց արեւ պոյճոս պահի զեռ,
Մուժ մուժ ամպոց տակ ծածկուած կիսամեռ,
Որ օր մ'ելլէ զերթ արշալոյս սոսկեռու,
Ծաղէ հայոց երկրին վըրայ կենսաբոյր •
Եւ պտամուծիւն պսակ զնէ այն հայուն,
Որ շատ անկեղծ սիրեց արեւը հայուն •
Իւր թանկագին կեանքը թ' զոհ խարուկին,
Իսահակայ նման առաւ սրտաղին •


Այլ ինչ քան զայն վսեմ պարտիք վսեմ սէր,
 Երբոր որդին հօր մօր կ'ըլլայ անձնուէր:
 Հոս է անկեալ պարկեշտ ազգի մը փրկանք,
 Հոս է Սստուած, հոս է ազգի մ'ազատ կեանք:

Ձայն սաստկացաւ, ալ չդիտցայ թէ ո՞յր ձայն,
 Այսչափ սրտանց խօսի ողբերգն հայկական,
 Ըսի թէ — այս մուսայ մի է ողբերգու,
 Որ հայ աւերց մէջը նստած ինչպէս բու,
 Կ'ողբայ Հոյոց փառքն ու պարծանքը վսեմ,
 Զոր բնաջինջ ըրաւ մեր բազմը դժխեմ:

- Ձայն մը եկաւ Մասեաց խորէն ստակազին,
 « Ի՛նչ զոր խնդրես, է հարազատ «ՀԱՅՈՐԴԻՆ»,
 « Որոյ սրտն մէջ հայրենեաց հուր վստի,
 « Զի չ'մարիր ճշմարիտ հուրն հայրենի,
 « Նա Սստուածոյ տաճարին քովը նստած,
 « Վասն հայրենեաց կ'ազօթէ միշտ ձեռնամամ,
 « Գանդի Աստուած արդարութիւն է բոլոր,
 « Նորա արցունք պիտի կշտէ գէթ մի օր,
 « Եւ վարձատրի, փոխան մէն մի արտասուաց,
 « Որ մէն մ'արցունք բլլան արեւք հայրենեաց:

ՍԻՄՈՆ ՅԵՆԷԿԻՍԱՆ

Դահիրէ 30 նոյ. 1901



ԿՅՍՈՐԱԿԱՆԸ

Յո՛ւրա էր... Երկինք պատեր էին սեւ ամպեր...
 Սե՛ւ առաւօտ... լուսնալու անդ կը մթնէր...
 Անհուն ցաւեր, սըխուր խոհեր, վիշտ հազար
 Սրախ խորը կը կուռէին անդադար:

Հեղձամղձուկ թըռաւ հտառչ մ'իմ սրտէս...
 — Ա՛հ, ո՛ւր, Ս՛ստուած, ո՛ւր զիս ա՛յսպէս հալածես —
 Ու չորս կողմէս բիրտ, ապառուժ բերաններ՝
 «Մի՛ցէ — ըսին — Հոյոց Սստուած կ'ապրի՞ դեռ...»

Արհաւիրքներ յա՛նկարձ շուրջըս պատեցին,
 Ճիւղաղ գէժքեր բոլորտիքըս դուռնային,
 Պըղտատնի՞ն էին արդեօք ողիներ՝
 Որ դժխքի խորէն էին դուրս խուժեր:

Մառախուղ սեւ. սառնամանիք անաւոր
 Պատեր էին լեռ, դաշտ, անտառ, սար ու ձոր,
 Զիկա՛ր երբէք յուսոյ նըշոյլ մ'որ ծագէր,
 Ամենուրէք ամայութիւն պատեր էր:

Կալանաւոր մ'էի ցաւոց տակ ընկճուած ,
Լոկ Հայրենեաց յիշատակովն սիրովուած ,
Մա՛հ թէ աքսոր... ո՞րն ինձ պիտի վիճակուէր ,
Գիտնալ միայն Երկնից Տէրը կարող էր :

Արտասուչից աչքերս երկինք վերուցած՝
Սիրտ մ'ունէի՝ սառնամանեաց մէջ այրած ,
Ո՛չ ցուրտն ու բուք , ո՛չ սաստիկ ձիւնը ձմրան՝
Ո՛չ , իմ սրտիս հուրը մարել չի կրցան :

«Աստուած - ըսի - տառապելոց պաշտպանն ես ,
Արիւն կ'անցնի սրտէս , արցունք աչքերէս ,
Դեռ Աստուածեան բազուկները չե՛ս շարժեր ,
Տէ՛ր , կի՛տ , տես , թշուառութեան չտին անցեր...»


Սիրելիներ անպտապար ու նոթի ,
Եւ կաշկանդուած սարտախի մէջ ու վշախի ,
Եւ Դու , Ա՛ստուած , որ բովանդակ գութ ես , Սէ՛ր
Դեռ յապաղե՛ս զազրեցնել այս ցաւեր :

Բա՛ւ է , Ա՛ստուած , ողորմութեանդ թափէ՛ ցող
Նըշողն յուսոյ տո՛ւր որ ցոլայ սակեշող ,
Սառնամանիքն այս ցուրտ ձմրան թող հալին ,
Շուրջըս պատող Լէզէոններ թո՛ղ փշրին :

Ճառագայթէ՛ լոյս մ'այս տխուր մթութեան
Փարքը ու անուշը թո՛ղ վայլի յաւիտեան ,
Դու ամպերէն որոացող Աստուածն ես՝
Որ խաւարէն ճիւղերք մը կը հանես :

— «Բալէ՛ - հնչեց ձայն մը վսեմ , գերաբուն -
Ա՛յդ է ճամբադ , սիրով տար այդ ցաւերուն ,
Մի՛ վըհատիր , ե՛ս եմ Աստուած Հայերուդ ,
Պիտի տեսնես լոյսն այս խաւար օրերուդ :

Այդ ցաւերը գլխուդ պըտակ են փըշեայ ,
Խաչդ ա՛ն , գրկէ՛ , կ'է , բարձրացիր Գողգոթա ,
Սիրով ըմպէ՛ կեանքիդ բաժակն այդ լեղի ,
Ու Յարութեան լոյսը շուտով կը ծագի :»



ՏԵՍԱՑ ԵՍ ՁԻՆՔԸ



Տեսայ ես զինքը մեր Տօնի օրերն ,
Նըգուն ու ժպտուն , դէմքն էր ծիածան ,
Իր ետին ձըգած սիրուն տատրակներ՝
Ամենքն ալ հրեշտակ՝ ձի՛շտ իրեն նըման...
Տեսայ ես զինքը... — Հայ մայրիկն էր ան :

Տեսայ ես զինքը՝ վարդ մ'էր նազինիկ ,
Թերթիքն հազրէվարդ՝ բաժկի մը նըման ,
Իրա՛ւ , վա՞րդ էր ան , շուշա՞ն , կամ ; յասմի՛կ...
Բոյր սըխուէր չորս դին՝ բուխտակ մ'աննըման...
Տեսայ ես զինքը... — Հայ բուսակն էր ան :

Տեսայ ես զինքը՝ պայծառ լուսնի պէս,
Ասաղիկ մ'էր արդեօք, միթէ լուսընկա՞ն,
Կամ ասո՞ւպ մըն էր՝ թռիչքով լուսաղէս՝
Շողն ետին ձրգած՝ ակօսի նըման...
Տեսայ ես զինքը... — Հայ լուսնակն էր ան:

Տեսայ ես զինքը՝ աչքերը մեղոյշ,
Սիրաը հուր ու բոց՝ սիրոյ վառարան,
Երբ մ'ունէր բերանն — Հայրենիք քնքոյշ՝,
Ի՞նչ անոյշ էր երբ կը ձգէր իր ձայն...
Տեսայ ես զինքը... — Հայ աղջիկն էր ան:

Տեսայ ես զինքը՝ կարմիրներ հագած,
Կարմիր այտերով կեղւի պէս նըռան,
Կարմրուկ որաներ իր ուսը բարձած՝
Նարմիկ քայլերով գառնար իր ոտան...
Տեսայ ես զինքը... — Հայ Տիկինն էր ան:

Տեսայ ես զինքը, պարիկ մ'էր թեթեւ,
Պար բռնէր՝ կայտէր, մազերն էր զեղձան,
Ծաղիկներ շարած իր գլխուն վերեւ՝
Ամրիձ, անարատ, Հայ հովտին շուշան...
Տեսայ ես զինքը... — Հայ գուռանն էր ան:

Տեսայ ես զինքը... թեւեր լուսավառ,
Լուս ցաթէր գէճքէն, վարտերն սոկեման,
Դէպի վեր Մատիս սլանայ բոցափառ՝
Սիրոյ, Միութեան ասար անկէջ պարզամ...
Տեսայ ես զինքը... — Հայ Ոգին էր ան:

Տեսայ օր մըն ալ... ան օրը չ'ըլլա՞ր...
Աչքերն արցունքոտ, մարած էր իր ձայն,
Ողբին ու կոծին սիրա չէ՛ր դիմանար...
Քանդե՛ր, կործանե՛ր էին ամեն բան...
Տեսա՛յ ես զինքը... — ՀԱՅՍԱՍՏՆԵՆ էր ան:

Ն Ժ Գ Ե Հ Հ Ա Յ Ո Ր Գ Ի Ն

Հայորդիին արեւն անցեր,
Յուսոյ ճրագ մըթագներ,
Կեանքին պայծառ լոյս խաւարեր,
Միայն իր սիրտն է մնացեր...

Շող չի՛ կաթեր երկինքէն,
Ցող չի՛ ցողեր ամպերէն:

Հայորդիին սիրտն է արօփուն,
Հայրենիքի արեւուն,
Օտար երկինք, օտար երկիր
Օտա՛ր կուտան լոյս արփուոյն,

Շող չի՛ կաթեր երկինքէն,
Ցող չի՛ ցողեր ամպերէն:

Հայորդիին ձայնն է մարեր,
Անոր պլպուլն է լռուր,
Ծաղկին թերթիքն են թափթփեր,
Վարդ մանիշակ թարշամեր,

Շող չի՛ կաթեր երկինքէն,
Ցող չի՛ ցողեր ամպերէն :

Հայորդիին ո՛վ կը լռէ՛
Աչքին արցունքն ով սրբէ,
Հետու Հայոց սուբր հողերէն՝
Հայորդին կեանքն ո՞ւր դանէ . . .

Շող չի՛ կաթեր երկինքէն,
Ցող չի՛ ցողեր ամպերէն :

Հայորդիին սուղ է պատեր,
Սե՛ւ հողիներ . . . քա՛ր սիրտեր . . .
Ա՛հ, սե՛ւ հողեր, ցամա՛ք լեռներ
Հայրենիքի կազմե՞ն սէր . . .

Շող կը կաթէ՞ երկինքէն,
Ցող կը ցողէ՞ ամպերէն . . . :


Հայորդիին վիշտն ա՛լ հերի՛ք . . .
Չայն մը արւէ՛ք, Հայ ո՛րդիք,
Ըսէ՛ք՝ թէ միշտ նոր աւելնող
կը բարբոթի՞ Հայրենիք . . .

Թէ չող կաթէ՞ երկինքէն,
Ցող կը ցողէ՞ ամպերէն :


53/7-88

Հայորդին թէ անժամանակ՝
Բռնաւորի լուծին տակ,
Օտար երկրում անյոյս մեռնի,
Թէ իր կորչի՛ յիշատակ,
Ցուրա շիրմին մէջ իր սակորներ
Պիտի կայտուն երբ լռեն՝
Թէ Հայրենիքն է ազատուեր
Անգութ դահճի ձեռքերէն . . .

Հայորդիին՝ Գերեզմա՛ն,
Բայ, Հայ դուկին՝ Հայաստա՛ն,
Երկինք չողերն հո՛ն կաթեն,
Ամպեր ցողերն հո՛ն ցողեն :



Ո Ր Ք Ա Ն Լ Ա Յ Ի Ե Ս . . .



Որքա՛ն լացի ես . . . ա՛հ, չե՛ս գիտեր դուն՝
Երբ անգութ ձեռքեր՝ դաշտերը սիրուն
Արււն ներկեցին կարմիր վարդի պէս . . .
Ա՛հ, գիտե՛ս արդեօք՝ որքա՛ն լացի ես . . .

Որքա՛ն լացի, երբ լուսնեակդ ու արև
Աղօս փայլեցան քու գլխուդ վերև
Ու քեզ նըւիրուած քընարն իմ ձեռքս
Ասին . . . ա՛հ, գիտե՛ս, որքա՛ն լացի ես . . .



Ա՛հ, որքա՛ն լացի քու սէրդ աննման .
Դէպ երկինք ուղղած բողոքներուս ձայն .
Երբ տեսայ վարդերդ, յակինթն ու նարգէս
Թօշնած . . . ու գիտե՞ս, որքա՛ն լացի ես . . .

Երբ զողորիկ անուշդ, սիրո՛ւն Հայաստան,
Վերուցի՛ն քեզմէ, զըրին Գլուխտխտան,
Եւրոպն անտարբեր երբ դարձուց երես՝
Գիտե՞ս թէ՛ որքա՛ն լացի ես ըզքեզ . . .

Ու խուժանն այն թուրք զըտած տապարէզ
Վանք, Եկեղեցի այրեց դէն ու դէս . . .
Հայ արեան շողին երբ ամպերու պէս
Ծածկեց երկինքը . . . որքա՛ն լացի ես . . .

Երբ տեսայ Հայոց քնքոյշ այն կոյսեր՝
Քուրդին մատնըւած ձեռքը կարեւիէր,
Վարդ այտեր թօշնած՝ թալուկ մահուան պէս՝
Կոյսերն այն անմեղ, որքա՛ն լացի ես . . .

Աղետարշ ողբոց այրւոյն ու որբին
Երբ սար, լեռ ու ձոր արձագանգ տային՝
Ա՛հ, միթէ դադրա՞ն արցունքն աչքերէս . . .
Թո՛ղ երկինքն ըսէ, որքա՛ն լացի ես . . .

Բայց դուն, Հայաստա՛ն, դեռ պիտի սպրիս
Սիրուն հարսի պէս նորէն զարդարուիս . . .
Թո՛ղ խնդա՛ն Հայերն, համբուրե՛ն զքեզ,
Ես ալ խնդամ քիչ մ'որքան լացի ես . . .

Ո՛րքան ես լացի . . . Թո՛ղ քիչ մը խնդամ . . .
Ափսո՛ս . . . իմ օրերս անցնին տարածամ . . .
Վախնամ թէ՛ մեռնիմ ու չի տեսեմ քեզ
Ու դուն չիմանաս որքա՛ն լացի ես . . .

Ըսէ՛ք թէ հեռու հայրենի հողէն,
Հեռու սիրելեաց անոյշ գրգանքէն,
Ըսէ՛ք, Հայ եղբարք, իմ Հայաստանին,
Թէ սիրան արիւնտս քեզ լայ ՀԱՅՈՐԴԻ՛ն :

ԻՄ ՈԳԻՍ

(Նամանոզութեամբ ԱլԳԵՒԵՍ ԵՐ ՄԻԼԵՒԻ)

« La Vision » ին

Գպրոցական մըն էի դեռ չա՛տ փոքրիկ,
Երբ գիշեր մը սենեկիս մէջ առաքնին՝
Գրասեղանիս տուեւ լըտիկ ու մնջիկ
Նստած գոտերս կը սերտէի առանձին . . .
Խեղճ աղեկ մը քողիկս եկեր կը նստէր՝
Սուեր հագած, եղբօր պէս ինձ կը նմանէր :

Մեկամաղձոս՝ բայց սիրուն էր ա՛ն գէճքով ,
 Գիրքիս նայեց՝ զոր կարգայի մըտածկոտ ,
 Ու ճակատը ձեռքիս վըրայ հակելով՝
 Լուս մունջ մընաց մինչև ծաղեց առաւօտ ...
 Խոհուն էր միշտ , գէճքին վըրայ սիրունիկ
 Ժըպիտ մը մերթ կը նշմարուէր անուշիկ :

Անտառիկին մէջ կ'երթայի միշտ ման գայ՝
 Երբ նոր եղայ ես տասնը՛նիւց տարեկան ,
 Ընկողմանած , հո՛ն , թուփի վրայ՝ օր մըն ալ
 Ծառերուն տակ տեսայ ինձ գէճ յանդիման
 Պատանեակ մը՝ որ հո՛ն եկեր նստեր էր՝
 Սեւեր հագած՝ եղբօր պէս ինձ կը նմանէր .

Մէկ ձեռքը վին , փնջիկ մը միւս ձեռքին մէջ՝
 Աչքն ինձ ուղղած ողջոյն արւաւ կաթողին .
 — Ըսի , — « Ճամբուն մէջ , ո՛հ , շատ կայ ելեւէջ ... » —
 Ու յա՛նկարծ կէս մը դառնալով իր աջ գին՝
 Բլուր մը սիրուն , հո՛ն , բարձրացած քիչ հեռին ,
 Ինձ ցոյց արւաւ սուր ծայրիկովն իր մտաին :

Օր մ'ալ դեռ նոր վառուած սիրով Հայրենեաց՝
 Խոհերուն հետ սենեկիս մէջ առանձին ,
 Ազգիս արխուր վիճակին վրայ մըտայած՝
 Դառն արցունքներ այսերս ի վար վաղէին ,
 Տեսայ նժդեհ մ'որ մէկ անկիւնն էր քաշուեր
 Սեւեր հագած՝ եղբօր պէս ինձ կը նմանէր :

Մըտահո՛գ էր , մըտայլ գէճքով արարգին ,
 Երկինքը միշտ ա՛ն ցոյց կուտար մէկ ձեռքով ...
 Իսկ միւս ձեռքը վըրան դըրած իր կուրծքին՝

Համակուած էր կարծես բուն իմ ցաւերով ...
 Բա՛յց , հառաչ մը միայն բերնէն դուրս թաւ ...
 Երազ մըն էր կարծես ... յա՛նկարծ ցնդեցաւ :

Հասակ մը կայ , մարդըս կ'ըլլայ եռանդոտ ...
 Խնջոյքի մէջ , օր մը , բաժակ ի ձեռին ,
 Գաղափարաց աշխարհքն ինկած , փոյթ , տենդոտ ,
 Վերջին մըտերը կը քամէի բաժակին ,
 Կոչնական մը գէճիկս եկեր նստեր էր՝
 Սեւեր հագած՝ եղբօր պէս ինձ կը նմանէր :

Վերաբիւրն տակ ցնցոտիներ կը ցնցէր ,
 Ծիւ ծիւ եղած նուրբ բնեղներ թանկագին ,
 Ճակաին նսրօտ էր կապեր չոր դափնիներ ,
 Վըտիտ թեւով կ'ուզէր դպչել իմ ձեռքին ...
 Ու իմ բաժակ դարնուելով իրենին՝
 Զատնախուսեցաւ ձեռքին մէջ նոյն վայրկենին :

Տարի մ'անցաւ ... արխուր ու մութ գիշեր մ'էր
 Ծուներ էի գրեթե անկողնի մը սնարին մօտ ,
 Ու՛ր հայրս նս'ր իր վերջին շունչն էր արւեր ...
 Գլխուն վըրայ կը պլպլար լոյս մ'աղօտ ,
 Որբ մը տեսայ որ հո՛ն եկեր նստեր էր՝
 Սեւեր հագած՝ եղբօր պէս ինձ կը նմանէր :

Գլխուն վըրայ դըրած էր ա՛ն փուշ պըսակ ,
 Ալ չէ՛ր փայլեր լոյսը սեւուկ աչքերուն ...
 Միթէ վշտաց ամօքի՛չն էր այն հրեշտակ՝
 Ո՛ր իր վինը դեռին ձըզած , ախրամոյն
 Մեռելական սնարին մօտ ինձի հետ
 Կոծ կը բառնար՝ զիս դիտելով ակնոգէս :

Ճանչցայ թէ՛ ո՛վ էր անձանոթն այն արևուր . . .
 Ա՛ն իմ ողջոյն կեանքիս ամէն վայրկեանին
 Արատասովոր տեսիլն էր ա՛ն՝ որ միշտ լուռ
 Կուգար իմ դէմըս կը կանգնէր անմեկին . . .
 Ո՛վ ալ ԸԼԼար սակայն՝ հրեշտակ կամ դեւ,
 Հո՛ս, հո՛ն, այլու՛ր, ա՛ն . . . Ոգիս էր իմ վերու :

Միաքըս դըրի՛ — ա՛լ ժամանակն հասած էր —
 Իմ երկրէս դուրս երթալ աշխարհ մը հեռու,
 Նոր օդ չնչել եւ կամ . . . մեռնիլ կարելիէր
 Ու անվըճատ բախտ մ՛ինձ չինել յուսատու . . .
 Կըթոտ սոքով սակայն առի իմ քայլեր,
 Ու՛ր որ դացի, իմ Ոգիս ալ իմ հետս էր :

Ու՛ր որ դացի լայնածաւալ երկնից սակ,
 Սիրտս ու աչքերս յողնեցուցի արբազգած . . .
 Աչքիս արցունքն ո՛չ չափ ունէր, ո՛չ քանակ . . .
 Ու կազ Չանձրոյթն իր ցուպին վրայ կը ընձամ՝
 Կը քայլէր զիս անդադար իր ետեւէն,
 Ա՛ն խիզճ չ՛ունէր . . . չէ՛ր շտապներ ամօթէն . . .

Ու՛ր որ դացի, ես նեղուեցայ ծարուով . . .
 Ծարա՛ւն էր ա՛ն, ծարաւն Հոյսոց աշխարհի . . .
 Շրջապատուած երազներու ստուերներով՝
 Ու՛ր որ դացի՛ անոր կարօտն զդացի . . .

Գացի, տեսա՛յ սիրտով գալարուն . . .
 Կեանքը Հայուն տեսա՛յ թշուառ, երերուն . . .
 Ու զժբայսս մը դէմըս կ՛ելլէր, կը կանդնէր՝
 Սեւեր հագած՝ եզբօր պէս ինձ կը նմանէր :

. . . Ա՛ն, ո՛վ ես դուն, որ անբաժան իմ կեանքէս՝
 Ու՛ր որ երթամ, ճամբուս վըրայ իմ հետս ես . . .
 Չէ՛մ կարծեր որ դուն իմ բախտս ես անողոք . . .
 Ժըպիտներուդ մէջ նշմարուիս դուն ա՛յլ սք,
 Արցունքներըդ՝ զոր կը թափես դու՞ ռենին . . .
 Ու երբ քեզ ինձ միշտ կը տեսնեմ անմեկին՝
 Նախախնամող էակին Չայնն իմ սիրեալս
 Կ՛ըսէ թէ՛ Դուն իմ ցաւերուս ընկեր ես . . .

Եւ ո՛վ ես դուն՝ որ օրոցքէս մինչ ցայսօր
 Ընկեր եղար . . . բայց չի կրցա՛ր ինձ օգնել . . .
 Մանկութենէս մինչեւ եղայ արեւոր՝
 Դու անունովդ ես չի կրցի քեզ կոչել . . .
 Ըսէ՛, եզբա՛յրս, ըսէ՛, ո՛ն մի տանջեր զիս . . .
 Սեւեր հագած՝ եզբօր պէս ինձ կը նմանիս . . . :

* * *

— Ո՛չ չոր հրեշտակ մ՛եմ ես, ոչ ալ մարդկային
 ճակատագիր եւ կամ Ոգի մ՛երկնային,
 Ո՛չ Աստուած մ՛եմ, ո՛չ ալ ոգի մը անդուլթ . . .
 Եզբա՛յրդ եմ ես ու կարեկից ցաւերուդ :
 Ժիշտ իմ անունս ըսիր . . . Ես քու եզբա՛յրդ եմ,
 Ու՛ր որ երթաս քու հետդ եմ, քեզ կը սիրեմ .
 Ճ՛որքան ապրիս, մինչեւ իջնաս գերեզման՝
 Դու շիրմիդ ալ միայն ե՛ս եմ պահապան . . .
 Երբ վիշտերուդ մէջ կը նեղուիս՝ ի՛նձ դիմէ,
 Եզբա՛յրդ եմ ես, սէքըս ցաւերդ կ՛ամօքէ . . .
 Բայց չե՛ս կարող ձեռքրդ ձեռքիս մէջ գնել —
 ՀԱՅ ՈՐԳԻ՛ն եմ . . . զիս չես կարող շօշափել . . . :

ԽԵՂՃ ՄԱՏՈՒՆ ՏՈՒՆԸ

Տըխուր օր մ'էր Դեկտեմբերի ամսըան,
Յուրաք սաստիկ, դուրսը ստոսած ամէն բան,
Առաւօտ էր, լոյսը դեռ նոր կը ցաթէր,
Մատօին տանն օջախ մութուն էր վառուէր:

Պապիկ, ջօջիկ (1), թոռու լաճիկ, հարս, աղջիկ,
Խօնջային (2) շուրջ անդաւորուած կըլտրիկ՝
Ուսգուրա (3) մը նորուկ եփուած ոսպապուր
Տաքուկ աաքուկ կուլ կուտային կուշա ու կուս:

Զօջ Մատօին ուրախութիւն չափ չ'ունէր
Սուրբ Յակօբին ըղտրդ օր մ'էր մընացեր,
Որ հարեւան գիւղի Թուչիկ Տէրաէրին
Նաչխուն աղջին (4) աուն հարս բերէր թոռնիկին:

(1) Մաւ. մեծ մայր. 2. փայտե սեղան, 3. պը-
ղնձե ակօր, 4. աղջիկը:

— « Խուրպանդ եղնիմ, ա՛խ, անուշիկ թոռնիկ ջան,
Ըհա՛ պապուդ մին ոտք իջեր գերեզման,
Պապեմ — կ'ատէր — թագգ ու պըտակդ եւ էգուն (1)
Թող գայ Տէրաէրն « Հողուոց » կարգոյ իմ գլխուն: »

Բէս Մատօին սիրտը գուր (2) էր ու արդար,
Տարիքն ու թսուն, դուռ դրացուն բարերար,
Մեծ ու պղտիկ, աղքատ, հարուստ ու անանկ՝
Ամենն անոր տային պտաիւ մեծարանք:

Խալըսեցան, ելան ճաչէն ու « Հայր մեր » ն
Դողդոջ բերնով ասեց հալւոր տանուաէրն,
Օրերը կարճ, գոլձերն երկար ամենուն՝
Պէտք էր մնէր (3) հարսանիքի օրերուն . . .

Գիւզին մէջը յանկարծ բրդաւ վաճնասուն,
Բաշը—բօղուխ թուրքեր գուրսը լեփլեցուն՝
« Գեալուր, խընդի'ր » պոռչըտէին մէկ բերան,
Ամենուն ձեռք թող, թուր, դաշոյն ու հրացան:

Արունկըզակ անօրէններ գութ չ'արին,
Խըսարեցին (4) աունն ալ անրախա Մատօին,
Կոտորեցին գոուիքն ու ներս խոժեցին,
Սուրը սրաին խեղճ Մատօին թափ աըլին:

1. Առտուն: 2. Ուղիղ: 3. Հասկեր: 4. Պաշա-
րեցին:

« Ա՛խ , ջա՛ն Մատո , վա՛խ , քէ՛օն եղնիմ , Մա՛տո ջան »

Պօռաց Ջօջիկն՝ ընկաւ վըրան իր էրկան ,
Անմեզ հաւորն արիւնի մէջ ծըմբողած (1) .

« Թոռնի՛կ » — ասաց , եւ է՛լ խօսիլ չի կարաց :

Զի թողուցին պառաւ Ջօջիկ լաց լինի ,
կպցին (2) զլիւուն ու բաժնեցին երկուքի . . .
Վաթսուն տարուան սէր սիրական պլլըրուած՝
Երկինք ելան բողոքելու առ Աստուած . . . :

Թոռնի՛կն էլ , վա՛ն , ջան Թոռնիկն էլ սպանւեց .
Ջալլազ թուրքին թուրն անոր էլ չի՛ խնայեց ,
Սուրբ Յակոբէն առաջ Գարրիէլ մեծ հրեշտակ՝
Երկինքի մէջ զլիւուն կապեց լուս պըսակ . . . :

Զիվան ջիվան բոլոր արդէք ջարդուեցան ,
Տա՛ք տա՛ք արեան շողիքն երկինք բարձրացան ,
Հոռերն է՛նքան անուշ բուրեց Աստուծուն՝
Որ զըմմէնն ալ կարող դասեց Սուրբերուն :

Մատօի տունն իսկի մէկ մարդ չի մնաց ,
Թեւ , ոտք , գրլուխ , հո՛ս , հո՛ն էին ձգձգուած ,
Հարս , կոյս աջդի , իրենց պատւի թունդ պաշտպան՝
Զրհոր նեւուան ու խեղդամահ ըստանուան . . .

1. Ողեսպառ եղած : 2. Զարկին :

Բանը-բողոքն , վայրենի թուրք ու աքաբ (1)
Թալան արին մօլ ու էրզադ , եզ , գավար ,
Կըրտի տըւին , տունն էլ մոխիր դարձրեցին ,
« Փա՛տիչանըմ , բինլէ՛ր հաշա » պոռչանցին :

Մատօի անն տե՛ղն իսկ հիմի չէ՛ մնացեր ,
Սուրբ Յակոբին , կ՛ասեն , հո՛ն լուս է՛ իջեր ,
Խեղճ Լուսիկն էլ , նախշուն աջդին Տէրաէրին՝
Սեւ խաչ կանգներ իր սիրական Թոռնիկին . . .

Ա.Ռ. ԽԱԶՆ

Գիտեմ՝ ով կտո՛չ , միակ յոյսն ես ամենուն ,
Բայց սի՛րա կ՛ուզես սիրա մը սիրով լիաթաղուն ,
Սիրատարած թեւեր պարզած ձախ ու աջ՝
Կ՛ուզես լըսել Բեզ խանդավառ մի հառաչ . . .
Հառաչաքներ , ա՛հ , միշտ կան
Բայց խո՛ւլ է մեր սիրոյ ձայն :

1. Զինուոր :

Դռներն ամեն փակեր էին սառ ու ձիւն ,
Հայ գիւղացին կծկըտած էր ամանն անկիւն ,
Հարսին , աղջկան թօշներ էին վարդ օյակեր
Մեղսոյ աչքեր հոթութենէն մարմըրեր . . .

Երկու օր էր , այդ խեղճեր
Հո'ց ալ չէին ճաշակեր . . .

«Աստու՛ած» - գոչեց - յանկարծ ձայնով գողգոջուն ,
կաթիլ մ'արցունք կաթեց աչքէն գիւղացուն ,
Չորս դին նայեց , ձայն մը ձրգեց ցաւազին ,
Լոյսն էր մարեր իր հացալից արնակին .

Եզ , սայլ , խոփ , մած ու արօր
Թալաններ էր Քուրդ գինւոր :

«Հերի՛ք, Աստուած - գոչեց - հաշուիմ ու մաշուիմ,
Չոր հացիկ մը չ'ունիմ որ սամ իմ լածին ,
Ա՛ն աչքս ելլէ՛ր , չի տեսնէի՛ իմ հարսին
Թերմաջ շորերն այս ձմրան ցուրտ ու բուքին . . .

Աստու՛ած , հողես քեզ խուբոյան ,
Ա՛ն ու իջնամ գերեզման . . . »

Կըմեց խեղճը , բայց իր սրտին խուլ հոնչ իւն
Չարդ որ փըշուր բրաւ սիրտերն ամենուսն . . .
Չորս կողմն առին հարս ու աղջիկ , լած , մանկիկ ,
Մըխիթարանք հազար աւելին սիրացուիկ . . .

— «Մի՛ լաց եղնիր , հայրիկ ջան » ,
Տրդաքն բօին մէկ բերան :

Հէք գիւղացին աչքը բացաւ լալազին ,
Տեսաւ բոպիկ ոտքերը խեղճ թռռնիկին . . .
Կիսամերկ էր , չ'ունէր լօգիկ , ո՛չ կապայ ,
Կը գողգողայ ցուրտէն մարմինն անխընայ . . . —

Անյոյս սրտի մ'ի՞նչ բերկրանք
Կ'ազդէն սիրոյ ըսփոփանք :

Գրկեց . պագու խնձոր այտերն այդ մանկան ,
Տաք արցունքներն անբիծ ճակատէն սահեցան ,
— «Մի՛ լաց եղնիր — մնչեց հորէն — Հայրիկ ջան ,
Դուն կ'ըսէիր , Աստուած է մեր պահապան » :

« — Դո՛րդ , ո՛րդիջան . ասացի՛ ,
Բայց կը կեցուի՞ անօթի . . . » :

Յա՛նկարծ մնջիկ ձայն մ'ականջին փոփսայ
Հայ գիւղացուն աչքերուն մէջ լոյս ցոլաց . . .
— « Ա՛խ , Տէ՛րտէրջան — ըսաւ — ա՛խ , գո՛ւն աս .
Չ'եղնի՞ դերդիս Աստուած դերման զրկեց քեզ . . .

Յաւերբս շա՛տ , Տէ՛րտէրջան ,
Ո՛վ ինձ եղնի օգնական . . . »

— « Աստուա՛ծ — ըսաւ Տէրտէրը մի վե՛ն ձայնով -
Յոյս ունեցիր , յուսահատիլ չէ՛ բարով ,
Լուսաւորիչ քաշեց անեզ չարչարանք
Բայց խորտակեց սատանային չար կապանք .
Կ'անցնի Մեծ-Պահք , գայ Զատիկ ,
Սուրբ Յարութեան աւետիք » :

Ըսաւ Տէրաէրն , ու տիրն մէջ գլուղադուն
 Անձայն կերպով բան մը զըրաւ փառիւլուն :
 Գըթաւ սիրտեր խրկեր էին օգնութիւն ,
 Գիւղին Տէրաէրն հաներ էր մասն ամենուն :

— « Հա' , հայրիկջան , դէ' հայր'ը —
 Ըսաւ անբիժ' երախան —
 Անցածն օր դուն չ'առացի'ր ,
 Աստուած է մեզ օգնական » :

ՎՏԱՐԱՆԴԻՒՆ ՅՈՅՁԸ

Տաք արեւուն տակ ցուպիս կրթընամ՝
 Թշուառ մ'եմ , ինկած չոր լեռներու մէջ ,
 Ու'ր երկինքն այրած , երկիրն է մրկած՝
 Կ'ելլեմ ու կ'իջնեմ հազար ելեւէջ . . .
 Տաք արեւուն տակ ցուպիս կրթընամ :

Կաթիլ մը ջուր ցուրտ չ'ունի'ն այս լեռներ՝
 Որ գէթ չի մեռնիմ . . . ծարաւս անցընեմ . . .
 Աստուած դիս ինչո՞ւ մի'նակ է թողեր՝
 Որ հոս լուս ու մառնջ մաշուիմ , հառաչեմ . . .
 Կաթիլ մը ջուր ցուրտ չ'ունի'ն այս լեռներ :

Ըստիտիանք մըն է ինձ համար այն օր՝
 Երբ լեռներն անցնիմ , հարթըւին դաշտեր ,
 Տեսնեմ հո'ն Հայ մը՝ ինձ պէս վերաւոր ,
 Ա'ն իմո՞ւ ես անոր պինդ կապեմ վէրքեր՝
 Ըստիտիանք մըն է ինձ համար այն օր :

Վերաւոր Հայ մը ունի սիրան աւիւն .
 Հայեր , ո'ն , շա'ա կան , բայց չե'ն վերաւոր . . .
 Ձե'ն գիտեր անոնք՝ ինչ է Հայ արիւն . . .
 Ա'ն օր վէրք չ'ունի , Հայ չ'ըսուիր անոր ,
 Վերաւոր Հայ մը ունի սիրան աւիւն :

Անապատի մէջ ճնճղուկ մ'եմ դարձեր . . .
 Կա'ն չառ թռչուններ՝ բայց չե'ն երամուս ,
 Սուրան , սուտանին իմ շուրջս անաարբեր ,
 Գիտեն դիս հետուանց , հեզնեն թէ ինչպէս
 Անապատի մէջ ճնճղուկ մ'եմ դարձեր :

Հեռո՛ւ , անդուլներ , օ'ն , հեռո՛ւ ինձմէն .
 Գուք արիւն չ'ունի'ք , ո'չ սերտ , ո'չ աւիւն ,
 Կեանքերնուդ Մատեան ձեր ծընած օրէն
 Զնջեց իր մէջէն Հայրաբեան անուն . . .
 Հեռո՛ւ , անդուլներ , օ'ն . հեռո՛ւ ինձմէն :

Փառք , վայելք , հաճոյք թո՛ղ ձեզի մընան ,
 Ձեր յաղթանակն են հեզնոս ծիծաղներ ,
 Հո'յ սերտ , հո'յ հոգի թո՛ղ երկինք ինդան ,
 Վիշա , ցաւ Հայ ճակարհն մի'այն են զարգեր ,
 Փառք , վայելք , հաճոյք թո՛ղ ձեզի մընան :

Օ՛ն , խնդացէ՛ք դուք , որքան որ կ'ուզէք .
 Խնդացէ՛ք թէ Հայն ինկու տարածամ . . .
 Անկման մէջ Հայուն բարձր է իսկ արժէք ,
 Ըստրուկներ էք դուք , չարի՛ն բարեկամ . . .
 Օ՛ն , խնդացէ՛ք դուք , որքան որ կ'ուզէք :

Տաք արեւուն տակ ցուպիս կրթընամ՝
 Թո՛ղ թշուառ մ'ըլլամ չոր լեռներու մէջ .
 Հողերն ոտքիս տակ թո՛ղ մընան մրկամ .
 Թո՛ղ ելլեմ իջնեմ հաղար ելիւէջ ,
 Հայ սիրով սակայն եմ միշտ դովացամ
 Տաք արեւուն տակ ցուպիս կրթընամ :

ԱՌ ԾԱՂԻԿՆ ՀԱՅՐԵՆԵԱՅ

Ի՞նչ կ'ուզեա ինձմէն , քնքո՛յչ դու Մաղիկ ,
 Վարդին կը նմանիս հայրենի երկրիս ,
 Ինչո՞ւ կոհոնիդ նազննի թերթիկ
 Թողմեր է , թռչնե՛ր . . . — Ըսէ՛ , ցա՞ւ մ'ուռիս :

Ո՞վ մինչեւ այստեղ քեզ բերաւ ձրգեց .
 Ո՞վ խըլեց ըզքեզ ցանկալի ծիղէզ ,
 Ըսէ՛ , ի՞նչ տեսար . . . ձեռքն ի՞նչ ըրաւ քեզ ,
 Ձե՛ռքն՝ որ կորգեց քեզ թաւուտ թըփիկէզ :

Կարծես թէ խամբած խոտի ճըղիկ մ'ես՝
 Կխամես ինկած . . . բայց խորը ծոցիդ
 Հիւթ մ'ուռնիս պահած . . . Կեանք տռնել կ'ուզես ,
 Ըսէ՛ , այդ հիւթը գաղանի՞քն է սրտիդ :

Թրթրակ թերթիկներդ՝ փայլուն ու սպիտակ ,
 Դո՛ւն Անմեղութեան Դըրոշմն ունին դեռ ,
 Բայց գողգոջ յուսով մ'ինչո՞ւ քու բաժակ
 գունաա ու վըճառ լքուի կարելիէր . . .

Խօսէ՛ , Հայրենեա՛ցս իմ Պատգամարերդ ,
 Ըսէ՛ , մի՛ վախնար , տարաբա՛խտ Մաղիկ ,
 Դաղանիք մ'ուռնին քու գալար տերեւներդ ,
 Խօտքեր են կարծես բույսմունքդ անուշիկ . . .

Օ՛ն , աղէ՛ , խօսէ՛ , ձայն տուր համարձակ ,
 Աւանդասպանն եմ քու գաղանիքներուդ . . .
 Տե՛ս , շուրջս է լըսին , անձս է միայնակ ,
 Թո՛ղ , հրճու իմ հոտովն այդ թերթիկներուդ :

Բայց թէ գաղանիք մը չ'ուռնիս ըսելիք ,
 Մի՛ յուզուիր երբէք , ո՛հ , մի՛ վրդովիր ,
 Դուն իմն Հայրենեաց Մաղիկն ես գողարիկ ,
 Նկո՛ւր , վերաւոր սրտիս վրայ հանդի՛ր . . .

Հո՛ն նիրհէ՛ յուշիկ՝ սուրբ երազներով ,
 Հո՛ն հանդի՛ր մինչեւ իջնամ գերեզման . . .
 Ա՛ն տաւեն թերթիքդ երկնից ցողերով
 Արփոսէ՛ , սիրս՛ւն վարդ , սե՛ւ հոգիս վըրան . . .

ԵՍ Կ՝ՈՒՂԵՄ ՅԵՆԵՆԸ

Ես կ'ուզեմ տեսնել նոր մէկ սոկեդար՝
Որ ճնունդ առնէր բեղուն ու պայծառ ,
Երկիրը պատէր , նոր մ'ելլեր հինէն՝
Ինչպէս Ղազարոսն իր գերեզմանէն :

Ես կ'ուզեմ տեսնել մեր Գողթան երգեր՝
Որ պարզած թեթեւ սոկեդոյն թեւեր՝
Սաւառներն դիմեն դէպի Հայրենիք
Ու Հայոց կոյսեր պար բանեն յաշիկ :

Կ'ուզեմ տեսնել մեր հին սէրն ու հաւատ
Ու հայ զէմքերու այն անբիծ ճակատ՝
Որ ճերմակ քողիւր ձրղած կուսական՝
Կանգնեն հին խանդով նորոգ Հայաստան :


Կ'ուզեմ ես տեսնել որ ամէնն անցնէր
Ու Փրկչի ձեռքին տակ նոր վերածնէր ,
Յաղթական կոթողն , հանդէպ թշնամւոյն՝
Բարձր ի գլուխ պանծար , փայլէր Հայ անուռն :

Կ'ուզեմ տեսնել որ Պալատ , դասարան
Փայլին սոկեղող կաջովն Յիսուսեան
Ու յուսաձաձանչ մականն ի ձեռին
Հայ Իշխան կանգնէր գլուխ իր Ազգին :


Ես կ'ուզեմ տեսնել Կարին , Մուշն ու Վան ,
Մասիսն , Աբաղածն , Ուրմեայն ու Սեւան ,
Սրտով միտցած , ինկած ճնդան վրայ
Խնկանոյշ երգեն նոր երգ Ովսանեա :

Ես կ'ուզեմ տեսնել այն Ժամանակներն՝
Ուր եկեղեցւոյ , Ազգի մշակներն
Անբիծ ձեռքերնին պարզած վեր՝ Երկինք՝
Մարութ հաւ սաքով թափէին քրտինք :

Ո՛ւր կեանքն էր մանուկ , Մահն ալ յոյս մ'ունէր ,
Ո՛ւր Սիրոյ Ողին աշխարհք լոյս սփռէր ,
Պարտիկը դողար , սորտէր գաւաճան . . .
Ես կ'ուզեմ տեսնել ա՛յդ կեանքը միայն :



ԱՌ ՈՂԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅ



Ողջո՛յն ղեզ , ո՛վ Հայաստանեայց Թագուհի ,
Է՞ր տըխուր ես , ինչու աչքերըդ ծաւի
Կը մարմըրին . . . ինչո՞ւ սիրտդ է այլայլակ . . .
Ի՞նչ կը խնդրես այս միգամած երկնից տակ :

Իմ մայրս ես դուն, բա՛ց թեւերըդ, գրկէ՛ զիս,
 Ծոցիդ մէջը ձայնիկն անուշ է Գնարիս,
 Թո՛ղ ես երգեմ, դուն քու ցաւերըդ մնչէ՛,
 Հեռու քեզմէ, ո՛հ, իմ այս կեանքն՝ ա՛լ կեանք չէ՛:

Իմ մայրս ես դուն, դուրդուրանքով զիս ծընար,
 Սրտիս մէջը կրակ մը գըրիւր բոցավառ,
 Թո՛ղ այդ կրակով այս կեանքին մէջն ես այրիմ,
 Բայց զաւակդ եմ, թո՛ղ որ ծոցիդ մէջ մեռնիմ:

Երազիս մէջ՝ տեսայ ծաղիկ մը դեղնած,
 Ծիւ մը կանաչ լրեն քովիկն էր ծըլած,
 Ան իր թուփին վըրայ յուշիկ կ'օրօրուէր.
 Կոկոն մը նոր իր ծըղիկէն դուրս կ'ելլէր:

Անցայ հովիտ մ'ուր թռչնիկ մը սիրունիկ՝
 Նո՛ր կորուսեր էր ձագուկներն իր փոքրիկ...
 Ցաւերուն մէջ այն թռչնիկը չէ՛ր անյոյս:
 Կը դայլայլէր ու կ'ողջուէր արշալոյս:

Կ'անցնի ծաղիկն՝ այլ ծիւ կուտայ կոկոնին,
 Մեռնին ձագերն՝ այլ վա՛ս է յոյս թռչնիկին,
 Մարդն ալ վերը Աստուած. վարը յոյս մ'ունի...
 Կը մեռնի մարդն՝ այլ յոյսն է միշտ կենդանի:

Իմ յոյսս ես դուն, որ օրօցքէս մինչ ցայսօր,
 Ո՛ւր ալ ըլլամ, մինչեւ յաշխարհ հեռաւոր,
 Գողզըղալով իբր ի մօտոյ՝ հեռուէն՝
 Ծոցիդ մէջը կ'ուզեմ զարթնուլ իմ քունէն:

Օ՛ն անգը ուրեմն, ս'վ Հայրենեացս Իսկուհի,
 Վանէ՛ վիշտերդ, ու քու աչքերըդ ծաւի՛
 Զայդ լուսիններ ամբիժ ձակաիդ տակ պայծառ,
 Փըպիաներուդ հրապո՛յրն ըլլան խանդավառ:

Իմ մայրս ես դուն, դուրդուրանքով զիս ծընար,
 Սրտիս մէջը կրակ մը գըրիւր բոցավառ...
 Թո՛ղ այդ կրակով այս կեանքիս մէջն ես այրիմ,
 Բայց, զտ՛ւակդ եմ, թո՛ղ որ ծոցի՞դ մէջ մեռնիմ...

ԿՈՐՍՈՒԱԾ ՀՐԵՇՏԱԿԸ

(ԹՍՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ ՅՐԱՆՍՆԵՐԷՆԷ)

Կլորիկ գէմքով մի փոքրիկ Հրեշտակ,
 Հեռու՛ն՝ խաբարչուկ թողած իր խմբակ,
 Յեթերս անդ ի վեր՝ թռիչքով գողզողիկ՝
 Դեռ նո՛ր էր առած սըլացքն անդրանիկ:

Բայց մեռուորիկ իր այն փոխուստով՝
 Երկնից սոսմաններն յանկարժ անցնելով,

Փոքրիկ Գարրիէլն անխոհեմաբար
Ինկաւ գողգոջոս գէպի վար՝ յաշխարհ :

Հո՛ն , ու՛ր ամէն մարդ մընայ վարանամ
Հո՛ն , ու՛ր կը տիրեն մեղքերն անիծած ,
Ի դու՛ր այն ճամբան դանալ կ'աշխատէր՝
Որ զինքը նորէն Երկինքը տանէր :

Յոգնած ու գաղբոս , թեւերն անկենդան ,
Ա՛լ անյուսութեան մէջ ինկած էր ան ,
Երբ խրճիթի մը դանակը բացաւ ,
Ներս մըսաւ գաղտուկ մ'ու հոն հանգչեցաւ :

Տեսաւ որ այնտեղ անմեղ մի գտարիկ ,
Իր սիրտորոքը պարզելով սրտիկ ,
Մընողացն համար կ'աղօթէր լըսին
Առջեւը կանդնամ Փրկչի պատկերին :

Մաքին մէջ մէկէն լոյս մը ծագեցաւ . . .
Անրիծ մրմունջին գնաց փարեցաւ
Ու իբր ովսաննա երգով մ'երջանիկ
Իր թոխքն առաւ ուղղակի Երկինք :

ՀԱՅՈՒՀԻՆ

(ԻՐԱԿԱՆ ԴԵՊՔ 1895 ԻՆ)

Առաու մըն էր . . . ձմրան առաու մը ձիւնոս . . .
Կի՛ն մ'էր թէ կոյս , կազն ի կազը , հեւ ի հեւ ,
Աչքերն արցունք , գեմքը գալուկ , վարանոս՝
Կ'երթար , կապոց մ'առած բազկացը ներքեւ :

Գեղեցիկ էր ան՝ իր խարտէշ մագերով՝
Ուսերն ի վար անփոյթ կերպով թափթըված ,
Շըջազգեստ մը միայն հագած , բաց զլիսով
Ինկաւ դեախին , աչքերն ազուիկ մարմրած . . .

Կանուխ էր գեւ , ցուրտը սաստիկ , ձիւնն առաւ ,
Չայն ձուռն չի կար . . . սուգը չորս կողմն էր պատեր . . .
Հո՛ս սառն արիւն , հո՛ն գիտիներն գայկապատ . . .
Ո՛րը անչունչ , որն հոգեվար կը հեծէր . . .

Թէ ո՛ր քաղաքն էր այն , խնդրեմ , մի՛ հարցնէք
— Սաստիկ էր հո՛ն , Հովանմբերին ձիւնն ու բուք . . .
Նոյն ամսուն մէջ կատարուած էր՝ թէ յիշէ՛ք՝
Անթիւ Հայոց ջարդերն անյութ չարաչո՛ք . . .

« Կի՛նը » — ըսի իսկոյն ծերուկ Տէրտէրին՝
 Որ անվեհեր գիակները ժամատուն
 Փոխադրելով « հուզոց » կարգար առանձին՝
 Զի Տէրտէրներն էին փակուեր իրենց տուն . —

« Կի՛նը » Տէրտէր, տես սա խեղճ կի՛նն հերարձակ՝
 Որ կազն ի կաղ հիմայ վաղէր խուճապով .
 Զի զիմացա՛ւ, այդ տեղն ինկաւ անճարակ ,
 Օ՛ն , Փութացի՛ր , վերցընել տո՛ւր զայն շուտով : »

Տէրտէրն իսկոյն , կարծի մը պէս արագ՝
 Վազեց , վերցուց , բերաւ յանձնեց ժամատուն ,
 Ու դեղ , գարման մատուցելով , թէյ մ'ալ տաք՝
 Դեղնած դէմքին կարծես եկաւ քիչ մը զոյն :

Աղէկըտուր յանկարծ ճիչով մը սակայն
 Ինկաւ դեռին , զսլ սրուեցաւ վշապին ,
 Աստու մը ցուրտ , կարծես սարսուռն էր մահուան ,
 Շուրջս պատեց այդ տարաբաղդ թշուառին :

Կըտոր կըտոր եղան սիրտերն ամէնուն . . .
 Ե՛ս ալ լացի , ա՛հ , լացի ես խենդի պէս . . .
 Զ՛է՛ր գիմացուէր անոր կսկիծ ողբերուն . . .
 Զ՛իլէր միաքէս ոյն տեսարանն աղէկէզ . . .

Ճանչցայ ո՛վ էր այդ խեղճ աղջիկն յուսահատ ,
 Հարուստ Տան մը կոյս Շուշանն էր մէկ հաարիկ . . .
 Բայց ի՛նչ ի՛նչ : Վողոցն ինկած՝ վայրավատ ,
 Կլուխը բաց վաղէր՝ սոքերը բոպիկ . . .

— Երբ նախընթաց օրն ու գիշերը ողջոյն՝
 Սուր ու սուսեր կը տեղային հայոց վրայ ,
 Երբ Լազն ու Քուրդ , գիշերն ի բուն , խանութ տուն ,
 Կը թալնէին ու կ'այրէին անխընայ ,

Երեք Քիւրտեր՝ իբրև վերջին մէկ աւար ,
 -- Զի ջարդերուն չար հրամանն ա՛լ դողբած էր --
 Մըտեր էին տունն աղջկանն այն թշուառ ,
 Երկու եղբարքն ու հայրն ու մայրն սպաններ :

Ըսպառնացեր էին խեղճին կոյս պատուին ,
 Բայց ա՛ն ծնողքին սոսկալով Թա՛ր արիւնէն՝
 — « Մի՛ — դոչեր էր — մի՛ հոս , ի սէր Ալլահին ,
 Իսլամ եմ ես , օ՛ն , հեռանանք այս տեղէն . . . »

Թողէ՛ք , երթամ՝, աննեմ սաւանըս (*) վերէն
 Ելլե՛նք , երթա՛նք այս արիւնոտ տեղէն դուրս ,
 Ճակախ գիրը ա՛յս է եղեր Աստուծմէն՝
 Դուք ու Ալլահն ինձ կը մընաք միակ յոյս . . . » :

Ու փութալով իբրու սաւանն աննելու՝
 Վեր կը թռի , կ'առնէ փոքրիկ մի կապոց ,
 « Աստուած կ'ըսէ Աստուած՝ կենաց եւ մահու »
 Ու վերէն վար կը նետէ զինքն ի փողոց :

Աստուածն Հայոց պահեր էր կեանքն անմեղին ,
 Ելեր , կանգներ , վաղեր , կուգար Ս . Տաճար ,

(*) Հայաստանի կաեսանց վերարկուն :

Սիրտով մարմնով ճմլուած՝ մօտ տաճարին ,
 Չէր դիմացեր , ինկեր էր խեղճն անբարբառ :

— « Երանի՛ր քեզ ո՛վ Հայ Սպարտուհի ,
 Որ կուսութեանը վաճանով յաղթական՝
 Իբր Ամազոն զերդ կիւրոսին ամենի
 Զախջախեցիր վայրագ կերբը քրդական :

Ծնողքդ ու եղբարքդ Հայ ազգին նահատակ ,
 Ու դուն անոնց զըլխուն պըսակ լուսափառ ,
 Երկնից մէջ դուք զարդն Աստուծոյ Աթոռին ,
 Թող խնդայ , չարն՝ ո՛րքան կուղէ , վատարար : »

Աւա՛ղ... վերջին վայրկեանն էր ա՛լ կոյս կեան-
 քին...
 Անրիժ հողին մունջ տատրակի մը նըման ,
 Թաւ երկինք... դնաց , փարեցաւ Յիսուսին...
 Տէրտէքն ու ես լացինք միայն իր վրան...

ՉՄԵՌՆ ԵՎԱԻ...

Զրմեան եկաւ իր սաստկաշունչ հողմերով ,
 Տեղաց ձիւնը իր ցուրտ ու բարկ խաւերով ,
 Սա՛նն է պատեր չորս կողմըս , սա՛նն անողոք ,
 Սա՛նն ամէնուն սիրտը , ո՛հ , սա՛նն ամէն ոք...

Բայց իմ վիշտերըս զիս կ'այրեն անգագար ,
 Հո՛ւր են անոնք սիրտիս մէջը բոցավառ...
 Ե՛րբ պիտի դայ զըւարթ դարունն հեշտաբոյր՝
 Պարզել սիրտիս սեւամաղձոտ վարագոյր :

Զրմեան եկաւ ու ձմրան հետ ցուրտ լուրեր
 Անակնկալ զիս կը խոցեն կարեւէր ,
 Բնութիւնն ինքնին գիւնուեր է խեղճ Հայուն դէմ ,
 Ճակատագիրն անոր՝ թախի՛ծն է դժխեմ...

Հո՛ս մարդկային ձեռքեր կ'ընեն քար ու քանդ ,
 Հուր ու արիւն հո՛ն կը հեղուն աստ եւ անդ ,
 Անգթութիւն հո՛ս կը բանայ գերեզման ,
 Ու հո՛ն տարերք աւերումներ կ'սպառնան :

Քեզ սիրելի ո՞ր Անուանն է այն , ո՞վ Տէր ,
 Աս Որ ուխտիւք կարդան Հայոց շրթունքներ . . .
 Լուսաւորչի Աստուած՝ թէ Հինն Ենովան՝
 Որ վրիժառու Ձեռքով փրկես Հայաստան . . .

Ձրմեան եկաւ իր ցաւերովն յարածուն . . .
 — Ո՛հ , Հայն արդէն ե՛րբ ունեցաւ իր գարուն —
 Ձրմեան Հայուն չ'անցնիք , կը մնա՛յ յաւիտեան . . .
 Միայն թէ ծագես Գըթութեան լոյս մ'Աստուածեան :

Լըսէ՛ , Աստուած , սա՛ աղիկէզ ձայներուն
 Անպատասպար գէթ Հայ որբին ու այլուոյն . . .
 Պատարա՛ց են անոնք Անուանդ անաւոր՝
 Որ արիւնն'ով կը մատուցուին տմեն օր . . .

Ձրմեան եկաւ , ստոնամանիքն անհամբոյր ,
 Բիւրանքներ լեռներու վրայ , մահարոյր
 Դառն օրհասին կ'սպանեն լուս , նըւաղկոտ
 Ու չիկայ բնաւ ձեռք մ'օժանդակ , սիրա գրիտա . . .

Լուսաւորչի անոնք որդիքն են օրհնած ,
 Սուրբ Գրիգորին՝ զօր սիրէիք Դու , Աստուած ,
 Ա՛յս երկնից առիւ ա՛լ չի մընաց անոնց յօյս՝
 Բայց թէ անոր սիրուն ծագես մի՛ նոր լոյս :

Տէ՛ր Զօրութեանց , կաղմէ՛ բանակդ յաղթական
 Լուծէ՛ վըրէժն ա՛յլ ևս թափուած Հայ Արևոն . . .
 Տըկարին մէջ թո՛ղ կաատարուի՛ Զօրութեանդ
 Ու սարսա՛փ սոյ Բոնաւորին Բու Անուանդ :

Ձրմեան եկաւ ցրտասարսուռ սառներով ,
 Թող գա՛յ գարունն ալ պաղպաջուն ցողերով ,
 Տաճարներուց Խաչն արձակէ թո՛ղ շողեր ,
 Ովսաննաներ թող ձօնեն Քեզ Հայ շրթներ . . .

Ու ա՛յն ատեն , եթէ մեռած իսկ լինիմ ,
 Օտար երկիր թէ գտնուի իմ շիրիմ ,
 Գերեզմանէս անչուչտ կ'ելլէ կը թըռչաի
 Հայոց լերանց վըրան օդին ՀԱՅՈՐԳԻ :

ԱՄԱՆՈՐԻ ՎԱՐԴԸ

Արեւը ձմրան անփայլ է , արմոյն ,
 Մըշուչն է պատեր դաշտերը ողջոյն
 Եւ արդէն սառած լեռներուն վըրան
 Մըբրիկն անողոք անդուլ կուգայ ման :

Ձմրան սառներէն պարտէզս ալ թօշներ ,
 Տրտում ու արխուր կ'ողբայ կարեվներ
 Ու երբ բոյր մ'առնել սիրտըս փափաքի՛
 Այդ բոյրն ալ յանյարձ օդը կը ցնդի . . .

Բայց դուն սառի վրայ, վա՛րդդ Ամանորի,
 Ոյր մըշուշին տակ բաժակըդ բացուի,
 Բսէ՛ ինձ՝ ի՛նչպէս ծըլիս, կը ծաղկիս,
 Այդ ցուրտ հողին վրայ ինչպէ՛ս դուն կ'ապրիս :

Բսէ՛, այն հանգիստը ուրկի՛ց ըստացար,
 Հանդիսա՛ զոր անանեմ ճակարից վրայ պայծառ,
 Բսէ՛, ո՞վ աքառ այդ գիրքըդ առկուն
 Ո՞վ ըսաւ քեզ թէ՛ պիտի գայ գարուն...

Ա՛հ, Երանի՛ թէ՛ ետ ալ քեզ նրման,
 Այս օրերուն մէջ իմ թշուառութեան,
 Սիրտ մ'ունենայի խաղաղ ու հանդարտ
 Կոկոն մ'ըլլայի, բացուէի մի վարդ :

Արհամարհէի ցաւ, վիշտ ու մորմոք
 Հեղնէի սուգը, ողբ, լաց, ամէն հոգ,
 Թո՛ղ սրտային ձմրան ցուրտ հողմեր,
 Թո՛ղ ձիւնը անդար՝ ո՛րքան որ կուզէր :

Ու ետ թուփից վրայ յաւէտ յարածուն
 Մընայի մեջիկ գարնան օրերուն...
 Յոյս ունենայի, յոյս մ'այնչտի, ա՛նհո՛ւն
 Թէ ինձ համար ալ կա՛յ երջանկութիւն...

ԱՌ ՄԻՄՆԱՆԱԳՆ

Ա՛հ, ծիծեռնա՛կդ ուղեւորիկ,
 Թեթեաթոխ ու վհնրոտ,
 Երբ կը փչէ աշնան հովիկ՝
 Բսէ՛, դուն ու՞ր կ'երթաս փութկոտ :

Երբ կը ձըգես Հայոց լեռներն,
 Հրածեղտ կուտաս մեր օրերուն,
 Երբ կը թողուս մեր երազներն
 Հայրենարազ՝ մեր սրակերուն,
 Երբ հեռանաս մեր յարկերէն՝
 Ո՛ր քու բունիկըդ կազմեցիր,
 Մեր առճարաց զըմբեթներէն՝
 Ու՛ր ձագուկներդ ամիտփեցիր
 Ա՛հ, ծիծեռնա՛կդ ուղեւորիկ,
 Թեթեաթոխ ու վհնրոտ,
 Երբ կը փռչէ աշնան հովիկ՝
 Բսէ՛, դուն ու՞ր կ'երթաս փութկոտ :

Անապատներ՝ քեզ ապաստան
 Կ'ընտրես՝ ազատ ճուղեկու
 Եւ կամ լեռներն արարական՝
 Հո՛ն ցաւերուդ հեա մընչելու...

Արդեօք չըքեղ վայրե՞ր կ'ուզես ,
 կամ , պաշտանե՞ր արքայական՝
 Ու՛ր երգերուդ տաս ասպարէզ . . .
 Եւ կամ դաշտե՞ր լերկ ու խոպան . . .
 Ա՛հ , ծիծեռնա՛կդ ուղեւորիկ ,
 Թեթեւաթռիչ ու վեհերոտ ,
 Երբ կը փրչէ աշնան հովիկ՝
 Ըսէ՛ , դուն ու՞ր կ'երթաս փութկոտ :

Երբ սըրաթռիչ սաւառնելով
 Դու կը փախչիս մեղմէ հեռու .
 Երբ կը սուրաս ճըւճըւալով
 Կ'անցնիս ծովերն այն ահարկու ,
 Ո՞ր աստղն արդեօք սուր թեւերուդ
 Կ'առաջնորդէ ա՛յնքան ճշդիւ ,
 կամ , ո՞ք ոգի՞ն քու էիչերուդ
 կը ձայնակցի ա՛յնքան սերտիւ . . .
 Ա՛հ , ծիծեռնա՛կդ ուղեւորիկ ,
 Թեթեւաթռիչ ու վեհերոտ ,
 Երբ կը փրչէ աշնան հովիկ՝
 Ըսէ՛ , դուն ու՞ր կ'երթաս փութկոտ :

Ու՛ր որ կ'երթաս դու , ծի՛ծեռնակ ,
 Լուրեր կուտա՞ս Հայաստանէն
 կամ երգերովդ իբրեւ խօսնակ
 Ողջոյն տանի՞ս Հայորդիէն . . .
 Ա՛հ , ծիծեռնակ , կ'անիծեմ քեզ՝
 Թէ Հայրենեացս համար լըռես ,

Լեռ ու ծործոր անհուն դաշտեր՝
 Թէ՛ Հայաստան չի դայլայլես . . .
 Գընա՛ ուրեմն , ո՛վ իմ թռչնիկ ,
 Թեթեւաթռիչ ու վեհերոտ .
 Ու երբ փրչէ գարնան հովիկ՝
 Լաւ լուրերով դարձի՛ր փութկոտ :

ԱՌ ԱՐԵԳԱԿՆ

Ըսէ՛ Արեւ , ո՞ր Ձեռքն արդեօք հրաշապէս
 Մարախի՞կ հսկայ քեզ բոցերով զարդարեց ,
 Ու երկնքի կամարն անձիբ քու սրածայր
 Թեւերուդ գէմ պարզեց անձայր ասպարէզ :

Ճառագայթներըդ հրաբողբոջ կեանք կուտան ,
 Բեղմով խաւարք հալածական վարեցան ,
 ծառն ու ծաղիկ բողբոջն իրենց քե՛զ պարտին ,
 Հըրաչքն ես Դուն՝ հըրաչքներուն մէջ բնութեան :

Երբ կը ծագիս՝ վիշտերն ամէն կ'ամոքին ,
 Ուրախութիւնն ու յոյսն ես Դուն մըշակին ,

Գարունն, ամառն, ինչպէս աշուն ու ձմեռ
Քեզմով իրենց յատուկ փառքով պճնուին :

Երբ կը ծագիս՝ մրմունջք առ էն կը սլանան,
Ու լոյսերովդ հանուրք համբուն կը խայտան,
Մագէ՛, Արեւ, աշխարհ լըրիւ թո՛ղ հրճուի,
Նո՛ր կեանք, նո՛ր լոյս, թո՛ղ եւ հայերն ըստանան :

Նը-իբական լերանց վրայէն պաղպաջուն՝
Լոյսդ անդրանիկ Հայոց ծագես սրտերուն՝
Էջմիածին, Մասիս, Ուրմեայն, Արագած
Քե՛ւ նախընծայ իրենց ձօնեն այելուն :

Ու Դո՛ւն, Արե՛ւ, ամէն օր դո՛ւն առաջինն՝
Որ կը տեսնես թշուառ վիճակն Հայ ազգին,
Ինչպէս երբեմն անոր փառաց պըսակներ
Փողփողէիք նըշողներովդ ոսկեծին :

Ճառագայթէ՛, Ա՛րեւ, նախկին քու շողեր,
Ու ոսկեախ պըրոյմէ Հայոց սեւ դաշտեր,
Տո՛ւր քու բողբոջ Արզարութեան Արեւին՝
Որ ա՛լ սրբէ Հայոց թափած արցունքներ... :

Ժ Պ Ի Տ Ի Ն Հ Ր Ա Ժ Ե Շ Տ

—*—

Թէ՛ զտնայի ժըպիտ մ'անանց, անթառամ,
Միշտ պարպատուն սրտի այն քողն հրճուական,
Կը սքողէի անով աչքիս արցունքներ,
Որոնք յաճախ թափեն զեղո՛ւն կայլակներ :

Կ'ամփոփուէի հողիս մէջ յաւիտեան,
Անհոպ, անփոյթ կը մնայի անասան,
Ու մանկան պէս՝ որ կը քընէ անուշիկ՝
Կը մտնայի ցաւերս ամէն սրտմաշիկ :


Բայց Հինաւուրցն՝ Որուն անունն է Ո՛ր էն,
Այդ պաշտելի յոյսը հանեց մեր սիրտէն...
Անրոյժ վէրքէ ժըպիտն հիմայ կը փախչի,
Անհուն վիշաղ թեթեւ ժըպիտ մ'ալ չ'ունի... :

Խառնուեցա՛ւ ա՛ն Դառնութեան Բաժակէն՝
Ջոր մահացեալ Աստուածն ըմպեց լիովին,
Իր հետն առաւ, տարաւ Աշխարհ մը վերին :
Ու բաժակը միայն թողուց մեզ բաժին :

Ուստի՛ բարեաւ մընա՛, ժըպի՛տ Դու սիրուն,
 Բարեաւ մընա՛ մինչեւ վերջը Դարերուն...
 — Բայց երբ յուշքո՛վդ ալ հողի մը չի սփոփուի,
 Ուրեմն ինչո՛ւ մարդն աշխարհիս մէջ կ'ապրի :

ՔԱՐՆԱՆ ԻՐԻԿՈՒՆԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՂԵՐՈՒՆ ՄԷՋ



Իրիկունը գարնան զըւարթ օրերուն՝
 Սաղարթներուն ներքեւէն խիտ ծառերուն՝
 Կը տեսնես որ երկնից կամարն կարմըրեր
 Ու զեփեւոին հետ յոյսն ալ հո՛ն թեւ առեր՝
 Նո՛ր խանդ, նոր իղձ կուտայ Հայոց սիրտերուն՝
 Իրիկունը գարնան զըւարթ օրերուն :

Իրիկունը գարնան զըւարթ օրերուն՝
 Երբ ման կուգաս հղերքն ի վեր ջուրերուն,
 Կարծես անոնք հայլիներ են ջինջ, պայծառ՝
 Որոնց մէջ փայլ կ'առնեն երկինք լուսավառ
 Ու ճօճելով կ'ելլեն, կ'իջնեն մուն առ մուն
 Իրիկունը գարնան զըւարթ օրերուն :

Իրիկունը գարնան զըւարթ օրերուն՝
 Երբ խաչն ու եզ խայտան վըրան մարգերուն
 Մայիւններու միացած ձայն կոչնակի
 Երբ Հայ գեղջուկը հրաւիրէ աղօթքի,
 Հո՛ն կ'աղօթէ, կարծես, բնութիւնն ալ ողջոյն
 Իրիկունը գարնան զըւարթ օրերուն՝

Իրիկունը գարնան զըւարթ օրերուն՝
 Երբ պար բռնեն կոյսերն Հայոց դրդասուն,
 Հո՛ն քրքմացան գաշտերու վրայ կայտուելով՝
 Երբոր երգեն կուսի քնքոյշ ձայներով՝
 Նոր խանդերով վառուին սիրտերն ամէնուն
 Իրիկունը գարնան զըւարթ օրերուն՝

Իրիկունը գարնան զըւարթ օրերուն՝
 Մեքուկն ալ յեց իր թոռնրկան ուսերուն՝
 Կը զգայ սիրտին մէջը կրակ մը բորբոքած
 Հին յուշքերով նոր կեանք մ'իբ մէջ վերածնած
 Երբ կը տեսնէ ետեւին Հայ քաջերուն
 Իրիկունը գարնան զըւարթ օրերուն :

Օ՛ն, ամէնքդ ալ, ըլլա՛յ գարուն թէ աշուն
 Հայ կարիճներ, ու Դուք կոյսեր փափկասուն,
 Պար բանեցէք, թո՛ղ թունդ առնէ Հայաստան,
 Զոր ու ծործոր, գաշտ, ս սր ու գ սր թո՛ղ ցնծան :

Հերի՛ք լացի՛ք՝ ի՛նչ որ լացի՛ք ամէն օր՝
 Ա՛լ հանեցէ՛ք ձեր ձորձերը սըգաւոր՝
 Ձեր ցաւերը թողէ՛ք դժբաղդ ՀԱՅՈՐԴԻՈՅՆ,
 Ան ձեզ համար արցունք թափէ օրն ի բուն:

ՆԱԶԵՆՍԻԿԸ

(ԻՐԱԿԱՆ)

Ձըմեռ օր մ'էր Բարկենդանի օրերուն,
 — Չ'ելլեր միաքէս թօնուտ այդ օրն ու արմոյն —
 Դեռ չէ՛ր կէս օր, կին մը՝ նոր հարս մէկ տարուան,
 Աչքն արցունքոտ, ու դիրկն առած երախան՝
 Պատկառ դէմքով մ'ու դեղւուն քայլերով,
 Մինչ պաշարուած էի եւ իմ խոհերով,
 Ե՛կաւ, կեցաւ դէմքս՝ անշարժ ու լըռին
 Ու վարանոտ աչք մը նետեց իր չորս դին...:

Սեւ էր հագած, սե՛ւ սըգաւոր կնկան պէս,
 Սեւ էր օրն ալ, ամէն բան սեւ դէն ու դէս,
 Դէմքն սպիտակ՝ սեւերուն մէջ՝ սիրամոյն,
 Թրջուած էր արցունքներովն աչքերուն,

Ինչպէս վարդ մը՝ թուփին վրայ նոր բացուած՝
 Գարնան անսյշ ցողերովը թրջուած՝
 Ձոր ձեռք մ'անդուլթ բրցընելով ճղղիկէն՝
 Կ'իյնայ դետին, կը թափթըփի կօկոնէն:

Ձէի՛ ճանչեր... ո՞վ էր այդ կինն յուսահատ,
 Ի՞նչ պահանջէր՝ որ ա՛յսպէս մուռնջ ու վըճատ՝
 Արձանի պէս դէմս կանգնած՝ կ'ըսպասէր
 Որ իմ բերնէս նախ կարեկից բառ մ'ելլէր՝
 Բայց անհամբեր մանկիկը դեռ երկամուտ՝
 Ծոցին մէջէն ձայն բարձրացուց ճիչերու:
 Մօրն արցունքն ալ խառնըւեցաւ խեղճ մանկան,
 Մայր ու մանկիկ լալ ըսկըսան մէկ բերան...:

— Ո՛հ, դադրեցու՛ր լացդ, ըսէ՛, ի՞նչ կուզես զուն
 Հարցուցի եւ խզուկ ձայնով մ'երբերուն
 Ու հեկեկին խառնըւած ձայն մ'իւր բերնէն
 — «Հա՛ց մը» — ըսաւ ու շիկնեցաւ ամօթէն...
 Խեղճ մանկիկը կա՛թը կ'սւղէր իր մօրկան՝
 Մայրն ալ թրշուտա հա՛ց կը խնդրէր կեանական...
 Սյրի էր կինն իր մանկամօրդ հասակով
 Ու ծոցին մէջ իր նորածին մանկիկով...:

Հինդ օր առաջ Բուրդ մ'այս կընոջ ամուսնոյն
 Վերջ տըւեր էր դեղածիծաղ օրերուն,
 Դժբաղդ մարդը գացեր էր հաց ձարելու՝
 Բայց իր կեանքը զո՛հ տուեր էր քուրդերու...:

Երեք օր վերջ՝ քաղաքին մօտը իր մարմինն
 Արժանացաւ Տէրտէրի մը «Հողուոց»ին,
 Շընոր՝ մ'էր այս զոր ըրին ջոջ իշխաններ
 Բաղաք բերել մարմինն հընար չէ՛ հղեր... :

Անբախտ այրին ա՛յսպէս անոք ու անտէր՝
 Շըւարած էր... խեղճ մանկիկովը ի՞նչ ընէր...
 Հեռու երկիր հայր մ'ունէր ծեր, աղքատիկ,
 Ի՛նքն ալ հիմա թողուած աղքատ ու մենիկ,
 Իր կեանքին մէջ չ'էր մուրացած տունէ տուն
 Զի ողբացեալ այրն, աղքատ՝ բայց օրն ի բուն
 Աշխատելով, կը դուրդուրար իր վըրան...
 Գէթ կը գտնար չոր հացիկ մը օրական :

Ա՛հ, խեղճ կընոջ չ'էր գիմացուեր արցունքին՝
 Որ կը թափուէր բերնին մէջը նորածնին...
 Ժըպիտի սեղ վիշտ ու կտթի սեղ արատուք՝
 Բամինն էին, ա՛հ, այդ մանկանն ողորմող...
 Լըքուած սրտի ցամքած խօսքերն ի՞նչ օգուտ՝
 Երբ լացողին հանդէպ չի կա՛յ ո՛չ մի գութ...
 Բայց զըթացի՛ հա անոր վըրայ ու լացի,
 Բան մ'ալ զըրի ափին մէջն ու ճամբեցի :

Այլ սին սփոփանք մը կը բաւէ՞ր հէք այրւոյն,
 —Ո՛հ անշուշտ ո՛չ, զի անոր ցաւն էր անհո՛ւն...
 Յաւերն անհուն միշտ կը սփոփեն երկու բան—
 Անհուն բարիք, եւ կամ, հանդիստը մահուան—

Անհուն է ցաւն երբ մարդ կ'ապրի կարեւր
 Մահն ալ անգութ՝ երբ աչքն անոր չի՛ փակեր
 Ըշմարտութի՛ւն... զոր հա սակայն ճանչցայ ուշ...
 Ըշմարտութի՛ւն... որ ցարդ տանջէ ուշս ուրուշ... :

Սիրալս յուզուած, ես ձրգեցի ամէն դործ,
 Պէտք է — ըսի— երթամ ընեմ ամէն փորձ՝
 Որ դէթ առ ժամն այս մանկամարդ խեղճ այրին
 Ըսփոփանքի ձայն մը լըսէ իր վիշտին...
 Գացի գըտայ ՄԵՐ ԷՖԷՆՏԻՆ ես շուտով,
 Յայտնեցի գործն իրեն փափուկ կողմերով,
 Ըսի —մեծ գործ մ'էր զըթուլթեան, թէ հաճէր
 Դժբաղդ կէնը իր տան խնամոց տակ առնէր :

Զոջ ԷՖԷՆՏԻՆ ունեւոր էր, շա՛տ հարուստ :
 Բարերարի համբաւն ունէր ամէնուստ,
 Յարգ ու պատիւ քաղաքի մէջ անխըտիր,
 Կը վայելէր, վարքով, բարքովն անբասիր :
 Իր աղօթքին, ծովին, պահքին միշտ զգոյշ,
 Ազգին գործերն ալ գրաւած էին իրեն ուշ,
 Մեծ դերդաստան, հարսներ, թոռներ իր չորս զին
 —Զինքն ամէն մարդ կ'անուանէր ՄԵՐ ԷՖԷՆՏԻՆ :

Բարեսիրտ էր ՄԵՐ ԷՖԷՆՏԻՆ, շա՛տ զըթոտ,
 —Գըլխո՛ւս վըրայ —ըսաւ ձայնով մը փութկոտ—
 Ա՛յսքան մարդիկ տանըս մէջը հաց կ'ուտեն,
 Աստուած արւեր, ամէն բարիք կը վայլեն :

Ես ինձ զաւակ կ'ընեմ այդ կի՛նն, հող մ'ընե՛ր...
 Ստուգած ա՛յ որ զխնար սէրըս զըրաւել :
 —Ա՛հ, էֆէ՛նախ, օրհնեա՛լ ըլլաս զուն— ըսի,
 Ու խեղճ կի՛նը իր տունը խկոյն խրկեցի :

Ուրտխտ թիւնն ա՛լ չտի չունէր իմ սիրախ,
 Անհուն հրճուանք թըսիչք տուին իմ չորս զխ...
 Ա՛լ այդ թշուտոն ազա՛տ էր իր ցաւերէն,
 Ա՛լ էֆէնճի՛ն զայն հարս հանէր իր սունկն :
 —Ստուգած պահէ էֆէնճի՛ն իմ Ազգիս—
 Ըսի ու փոքը հազար արւի իմ անձիս՝
 Որ արժանի գործ մը տեսայ զրթութեան,
 Անկեալ կընոջն հայթայթելով ապագան... :

Անշուշտ կի՛նն ալ ամօքած էր իր կըսկիծ,
 Յոյս մը ունէր թէ՛ նորածինն իր անրիծ՝
 էֆէնճի՛ն շընօրհներովն օր քան զօր
 Պիտի մեծնար, ըլլար կայտառ, զօրաւոր...
 Գոցի, տեսայ օր մը սիրուն նազենին—
 —Այս էր անունն այդ տարաբախտ այրիին—
 Դեղեցիկ էր, համբոյր, խայտսկն ու զըւարթ
 Իր կօկոնին փայրած իբրու փափուկ վարդ :

—Տե՛ս, նազենիկ —ըսի— հանդի՛ստ ես հիմայ,
 էֆէնճի՛ն Աստուած երկայն օրեր տայ :
 Բարեխիրա է, նայէ՛, խօսքէն զուրս չ'ըլլաս,
 Օր մ'ատուածով երջանիկ կի՛ն մը կ'ըլլաս... :

Ձերդ մանիչակ կապուակեցան իր այտեր...
 Կարճեա իրեն լաւ չ'ազգեցին իմ խօսքէր,
 Փախաւ, դնաց ու փոկուեցաւ տաճնին,
 Ա՛լ անդամ մ'ալ ես չի տեսայ նազենին :

Չորս օր ետքը նազենին գիր մ'էր ուզեր,
 Յորում հազար անէճք գլխուն էր թափէր,
 Իր պատւին էր բռնացեր Մե՛ր էֆէնճի՛ն :
 Ազջիկն հերոս գլխուն զարկեր էր ՈՍԿի՛ն
 Ամբարիշտին ինքն անձնատուր չ'է՛ր եղեր,
 Ամբողջ տունը սաքի վըրայ էր հանէր...
 Վաթաուն սարուան Մե՛ր էֆէնճի՛ն չ'էր խպնած,
 Գուրդէ մ'եւել վտա, անամօթ, լիրբ ու ցած... :

Հետեւեալ օրն անշուք գազազ մ'այդ տունէն՝
 Ոյր մոյր կը ասնէին փողոցէն,
 Մէկը չի կա՛ր... ո՛չ տիրացու, ո՛չ Տէրաէր,
 Անձնատպանի գազազ մըն էր այն անտէր
 Նազենի՛կն էր, տարաբախտի՛կն այն անմեղ...
 Պատուոյն փրկանք՝ թո՛յն էր առեր, մահուա՛ն գեղ...
 Մանկիկն ալ իր մօրը կաթէն թոյն առած՝
 Դագազին մէջ, իրեն քովի՛կն էր գրուած... :

Վա՛հ, մետա՛ր գուն նա՛զենիկ, բայց Ուրուականդ
 Չիս չարաչար կը չարչըրկէ անվրկանդ
 Արգահատանքն որ ունեցայ քաւ անձիդ՝
 Գիտե՛մ, գահիճն եղաւ անմեղ քու կեանքիդ... :

Ներէ՛ որ զքեզ անուանեցի ԱՆՁՆԱՍՊԱՆ
 Ո՛չ... նահատակն ես զուն պատուոյդ սրբութեան
 Քեզի նման մեռա՛ն, գացին շատ կոյսեր
 Պատին իրենց պաշտպանելով անվեհեր :

Թէ զերեզմանդ անշուք մընաց, Նա՛ղենիկ
 Թէ սեւ հողիդ չըսաւ Տէրտէրն իր օրհնիք :
 Թէ դագաղիդ վըրայ չ'ինկաւ շիթ մ'արասուք,
 Թէ չ'եղաւ մէկն՝ որ գէթ օր մը պահէր սուգ,
 Եւ այն անգութն՝ որ Արեւուդ վերջ տըլաւ՝
 Խուռնին ու մոմը թէ քու հողոյդ շատ տեսաւ,
 Սերովբէներն ամբիծ հողիդ, Նա՛ղենիկ,
 Սուրբ երգերով աօին, տարին վեր՝ Երկինք... :

ԱՂՕԹԲ ԱՌ ԱՍՏՈՒԱԾ

...Հայերն ա՛յսպէս նահատակուի՞ն դեռ, ո՛վ Տէր,
 Ու տակաւին արիւնտարի՞ն մեր սիրակը,
 Սիրած Հայուդ մին չեւ վերջինն ալ մեռնի՞
 Եւ Աստուածեան բազուկդ դեռ չի շարժի՞ :

Տէ՛ր, ե՛կ ու տե՛ս, տըխուր կոյտերն աւերին՝
 Որ Հայ արեամբ զաչտերն Հայոց ներկեցին...
 Ա՛լ լըտէ՛, Տէ՛ր, անմեղ կանտնդ ճայներուն
 Ու Հայ որրոց սրտակեղեք ողբերուն :

Անպատասպար անոնք, թշուառ, անօթի...
 Հո՛ս սարսափի մէջ պաշարուած, հո՛ն վիշտի,
 Խե՛ղճ կը մեռնին, Ա՛ստուած, եւ Դու համակ սէր
 Կը յապագի՞ս դարբնեցընել այդ ցաւեր :

Տէ՛ր, ե՛կ ու տե՛ս... տե՛ս Բու Սիրոյդ վրկաներ
 Որ Հայրենեաց սիրոյն կրեցին տանջանքներ...
 Ու դահիճներն երբ արիւննին ծըծեցին՝
 Անոնք իրենց աչքերն երկինք վերուցին :

Հայաստանի գեղածիճազ զաչտաց վրայ
 Ինկան, ո՛վ Տէր, ինկա՛ն՝ յօ՛չ յօ՛չ արիւնլուայ...
 Թո՛ղ լուս մընայ աշխարհ, թո՛ղ մահն ալ լո՛ւ
 Սակայն անոնց արիւնն առ Քեզ բողոքէ :

Տէ՛ր, ե՛կ ու տե՛ս, անգթութեան այդ զոհեր...
 Այր, կի՛ն, տըղայ, ամբիծ ճակատով զիրդ կոյսեր
 Փոսերու մէջ նետուած՝ անթա՛ղ մնացին,
 Սիրելիներ չի փակեցին աչքերնին... :

Գաջուհիներ իրենց պատուոյն միշտ պաշտպան
 Դառըն մահուան մատնըւեցան անպայման,
 Ու լերանց վրայ տիրող զոռող ժայռերէն՝
 Դըլորեցին զիրենք անդունդ՝ վեհօրէն :

Մեռա՛ն անոնք, բայց սըղաւոր քոյրերնին՝
Տարիներու ծանր բեռներ կը տանին,
Կըթա՛, ո՛վ Տէր, որ Գահոյքիդ բարձրութեն
Ազատութեան Յուսոյ ծաղիլը տանեն :

Արդարութեանը կը հաւատանք, ո՛վ Աստուած
Համբերո՛ղ ես, զի Դուռն Տէ՛րն ես յախտեանց,
Բայց կ'ուզես որ մենք ալ խղիւղ համբերենք՝
Մինչև օրհնեալ Կամբիդ սուրբ Չոյնը լըսենք :

Դուռն Աստուած մ'եա՛ որ հըղօրներ կըրծանես,
Ու մէ՛կ խօսքով բռնաւորներ տապալես,
Լէզէտներն իրիւս փոշի կը ցրուես,
Ու Հայաստանն օր մը Հայոց կը յանձնես :

Ինկամ, լքուած յողովրդեան մը համար
Հատաչանքներս ընդունէ՛, Տէ՛ր բարերար,
Ճառագայթէ՛ լոյս մը մեր մութ օրերուն,
Ու միշտ օրհնեալ ըլլան Գու փառքդ ու Անուն :

ԳԷՊԻ ԼԵԱՌՆ ԶԻՐԵՆԵԱՑ

Արչալոյս էր արծաթածալ թեւերով,
Վերջալուսինն շիջանուտ էր փայլն յեաին,
Մինչ Մովսրեան լեռներն երկներփ քօղերով՝
Նոր հարսերու պէս պատկառօտ ու լըսին՝

Կըսպատէին սոկեղիսակ Արեւին՝
Որ շող կաթէ վերելքն ի վեր լեռներուն
Եւ նըշանակ խաղաղութեան Չիթենին
Փայլինազարդ փթըթի յպառն, սաղարթուն :

Ճիշտ ա՛յն պահուն՝ սարերն ի վար Սաղէմին՝
Արտահեշտիկ կ'իջնէր Խմբակ մ'Արեղեան
Ու Գեթսեման գարնանագեղ՝ խնդագին
Բերէր ողջոյն Գերեզմանէն Տիրուհեան :

—Արեւ ցաթէր սոկեթեզան թեւերով,
Ոսկի շողեր կանաչներուն էր սրակեր,
Ու Չիթենեաց լեռն Յիսուսի լոյսերով՝
Նորէ՛ն, կարծես, նո՛ր փառքերով նորոգուեր :

Հո՛ն , լեռն ի վեր , դէպ արեւելք , հեւ ի հեւ .
Արեղաներն , հո՛ն , քայլ կ'առնեն քրտնալից ,
Հո՛ն սաղմոսկունք , հո՛ն ալելուք թեւ ի թեւ .
Սլանան , թռչաին շուրջն Աստուծոյ Գահոյից :

Տըխուր Մեծ-Պահքն Հայր սուրբներուն սեւազգեաց ,
Սեւ ալքերուն տակ ծածկուած սըքեմին ,
Տօն , Տաղաւար կնդրուկներով հոտոտուած՝
Մոռնալ կուտան խեղճ կիրակին ՏՆՏԵՍԻՆ

Ու հրապուրիչ գեղգեղներով « ՀՐԱՇԱՓԱՌ » ,
Եպիսկոպոս ոսկեճամուկ զարդարուած ,
Շողակնայեա Սաչ , Գաւազան , զոյգ բուրվառ
Հանդէս կազմեն խունկով , մոմով փառապանծ :

Ուխտաւորաց սիրտն է համակ խանդավառ ,
Աչքերնին լի՛ սուրբ , ջերմեռանդ արցունքով ,
Կարծես Յիսուսը կը անսնեն բոցավառ՝
Որ համբառնայ ըստորափառ թեւերով :

Սուրբ լերան վրայ Վըրան Կարառ Տաճարիկ՝
Պատարալի հո՛ն բարձրանան մրմունջներ
Ու Հանքարձնակ Տօնը կանխած Ս . Զատիկ՝
Ուխտաւորին կը բորբոքին եռանդներ :

Տաքուկ Արեւն երկնից կեդրոն բարձրացած՝
Մարդուն ճակատէն կը թափէ տաք քրտինքներ
Եւ Արեղանն օրհներգներով աւլցուած՝
Վանք կը դառնայ դարձեալ Մեծ-Պահք ողջունել :

ՅՈՅՍ ԱՌ ԱՍՏՈՒԱԾ

(Ազատ քարգմանութիւն Երանսեւեկէ)

Աստուած . — զոր ցարդ մարդ չի ճանչցաւ թէ ո՞վ ես ,
Բայց սըսելով ալ չ'ուրացաւ նա ըզբեղ ,
Ըզբեղ՝ ուր կեանք ու լոյս կուտաս ամէնուն
Ու երբ ուզես կը յանձնես սեւ հողերուն . —

Ըսէ՛ , ինչո՞ւ կը թողուս որ կասկածներ
Գու անաւոր Շուրջըդ դառնան անվեհեր . . .
Ինչո՞ւ , Ա՛ստուած , եւ ի՞նչ հաճոյք կըզգաս Դու ,
Երբ կ'ենթարկես մեր հաւսաքը փորձերու :

Աստուն կանուխ երբ մարդ զարթնու իր քունէն՝
Ըզքեղ կարծէ փեսնել ամպոց ետեւէն ,
Ուր ախեղերքն իրեն աչքին՝ մեծափառ՝
Անձայրած իր Տաճար թըւի լուսավառ :

Երբ վերստին ուշն ու ուրուշն ամփոփէ՝
 Յանձին իրեն դարձեալ գրեզ նշմարէ ,
 Տրուում թէ զուարթ , ինչպէս սուգի մէջ մանուան
 կա՛մքդ է միայն որ անօրինէ ամէն բան :

Բայց գերագոյնն է մարդկային հանճարին
 Գու Իսկութիւնըդ հաստատել երկնային . . .
 Մանկանացուն թէ հողուոյն մէջ խանդ մ՛ուռնի՝
 Յեղեղե՛լն է Գու Ի՛սկ Անուշդ կենդանի :

Ասուած ըսեն Բեզ , կամ Որ Էն , կամ , Յիսուս ,
 Արդարութիւն , ճշմարտութիւն եւ կամ Յոյս ,
 Ամէն ձեռքեր սակայն առ Բեզ կ'ամբառնան ,
 Թէ Հեթանոս , թէ Քրիստոնեայ թէ Պրահման :

Երկրի վրայ Մանկանացուաց է՛ն ըստրուկն՝
 Սրաին խորէն Բեզ կը ձօնէ իր կնդրուկն
 Երբ իր թշուառ օրերուն մէջ յեղակարծ
 Յուսոյ նըշոյլ մը կը տեսնէ կեղտակարծ :

Բեզ փառք հազար կուտայ աշխարհ բովանդակ ,
 Մոզկին վրայ Բեզ կը գեղեղեղ եւ սոխակ ,
 Ու կաթ մ'անձրեւ երբ կը ցօղես ամպերէ՝
 Օրհնից մրմունջք բարձրանան բիւր շրթներէ :

Ամէն գործերդ ըսքանչելիք են համբուն ,
 Անհուն գանձէդ բան չի՛ պակսիր ո՛չ մէկուն ,
 Ամէնքը Բեզ միահամուս կ'աղօթեն
 Դուն ամէնուն ժպտիս երբ Բեզ ծնրադրեն :

Ինչո՞ւ սակայն , ո՛վ Էութիւն Դու անճառ ,
 Ինչո՞ւ բարուոյն քով գըրեր ես նուեւ չար ,
 Որուն ի տես միշտ գեղեցիկն ու վրսեմ՝
 Սարսափելով կը հեռանան տարագէմ . . . :

Երբ երկրի վրայ մահկանացուք համօրէն
 կը հաչակեն թէ՛ կա՛յ Աստուած մը ՈՐ Էն ,
 Ու կը հաւատան թէ՛ Գու ծոցէդ Աստուածեան
 Սէ՛ր կը բղխի , Գո՛ւ թ ու Բարիք ամենայն՝

Ուրեմն ինչո՞ւ պայծառ լոյսի մէջ , ո՛վ Տէր ,
 կը գործըին այնքան անեղ չարիքներ ,
 Որ մրմունջներն արգարներու շրթանց վրայ
 կը մարմըրին աղէաներով անխընայ . . . :

Գու հիտաքանչ գործերուդ մէջ , ո՛ն , ինչո՞ւ
 կա՛ն շատ ապրերք՝ անհամաձայն իրարու . . .
 Ինչո՞ւ ոճիրք , ինչո՞ւ այնքան ան ու վան ,
 Ինչո՞ւ , ո՛վ Տէր , հանդէպ կեանքի նսու մահ . . . :

Գու Գըթութիւնդ անհուն էր Տէր Բարերար ,
 Երբ այս աշխարհը սքանչելի ու թշուառ
 Դուրս ելաւ իր անգուղներէն սղբալով ,
 Չարն ու բարին իրեն հեռը բերելով :

Բայց քանի՛ որ ա՛յս եղաւ կամքդդ վերին՝
 Որ մահացուք ցաւով , վիշտով պաշարուին ,
 Չե՛ն ներեր որ այդ տառապալ մարդկութիւն
 Գէթ ընդ ազօտ նշմարէ զ՛վեղ՝ Լո՛յս անհուն ,

Ինչո՞ւ սակայն ներևո՞ւ որ՝ մարդ արարած
Անձուկ միտքով դուշակէ թէ՛ կա՛յ Աստուած —
Կրնա՞յ միթէ խեղճ ու թշուառ մարդկութիւնն
Հասու ըլլալ այդ անպարոյր Աստուծոյն . . . :

Մարդն՝ եթէ Բու արարածդ էր անպիտան
Եւ Անհունիդ մօտենալու անարժան ,
Թո՞ղ թոյլ տայիր , Բնութիւնն ըզքեղ ամփոփէր
Ու մահացու աչքէ ըզքեղ քողարկէր :

Դուն նոյն Աստուածը կը մնայիր՝ միշտ հըզօր ,
Հողմին , մրրկին ու շանթին մէջ ահաւոր ,
Բայց դէթ կեանք մը՝ Իսկութեանդ անդիտակ՝
Մարդուն վիշտերը կ'ամօքէր բովանդակ . . . :

Եթէ ազօթք , ցաւ տառապանք կամ կսկիծ՝
Չեն հասնիր մինչ Բու լուսաշող Գահոյից՝
Փակէ՛ դռներն Անհունութեանդ երկնային ,
Բու Մեծութեամբդ եղիր Աստուած մ'առանձին :

Բայց մահածին թէ մեր վշտերն ու ցաւեր
Կրնան զբաւել Աստուածային Գութդ ու Սէր ,
Թէ լուսափթիթ զաշտերուդ մէջ երկնային՝
Մերթ կը լսես մեր ողբերուն ցաւագին՝

Ա՛լ խորտակէ այդ կամարներն երկնապանծ
Որ հէք մարդուն զՔեզ կ'ընեն անթափա՛նց
Ա՛լ պատռէ՛ քօղն՝ որ կը ծածկէ այս աշխարհ՝
Ցոյց տո՛ւր ըզՔեզ Աստուած մը մեծ եւ արդար :

Պիտի տեսնես , ս'վ Տէր , թէ մարդն այս թշուառ
Հաւատք մ'ունի առ Քեզ ու Սէր մ'անըսպառ ,
Թէ ամէնքն ալ՝ իրարմէ միշտ անբաժան՝
Ովաւննաներ պիտի ձօնեն Գե՛ղ միայն :

Վերջ պիտի տայ մարդուն համար ամէն սուգ ,
Ալ երկրի վրայ պիտի դադրին արտասուք . . .
Անոնք զըւարթ ցողերու պէս ամառուան՝
Կնդրկարոյր պիտի երկինք բարձրանան :

Ձայներ միայն պիտի լըսես սրբասաց՝
Որ հրեշտակացդ ալէլուին միացած՝
Պիտի սլանան վեր առ Գահոյսդ լուսեղէն ,
Պիտի օրհնեն Քեզ՝ որ միայնդ ես ՈՐ էն :

Եւ ովսաննայ այս երգերուն մէջ , ս'վ Տէր ,
Պիտի տեսնես այլեւս դադրած այն ձայներ՝
Որ պիղծ բերնով նախատինքներ տեղային
Ահեղ Անուանդ՝ որմէն Սըովբէք պատկառին :

Մահն իսկ ինքնին , մահն անողօք , դանդաղուն
Խուլ հոնչիւն մը խառնելով այդ ձայներուն ,
Անդնդոց մէջ՝ կատաղութեամբն անպայման ,
Միշտ դահալէժ պիտի մընայ յաւիտեան :

Վ Ա Ղ Ա Մ Ե Ռ Ի Կ Հ Ա Յ Ա Ղ Ջ Ի Կ Ը

(1902 Յունվար 28)

Ա՛հ, անգութ աշխարհ, զիս հալածեցի՛ր,
 Հասակըս սիրուն սև հողին արևի,
 Թարմ թերթիկներով վարդ մը զիս բացիլ,
 Բայց բոյր չի տըւած զիս թարչամեցիլ...
 Դեռ նո՛ր նըշանուած, սրտիս կուսական
 Մարեցի՛ր, անգութ, սիրոյս վառարան...
 Անբախտ անձիս հետ սա՞ դըրիբ պայման՝
 Որ չի վայելում կեանքի զրգարան :
 Բայց իմ կոյս կեանքիս այս կանթեղը վառ
 Թէ կործանեցիք զուն անգըթաբար,
 Հողիս Աստուծոյ սիրով խանդավառ
 Երկնի՛ց թող վայլէ առադաստ պոյձաս :
 Հո՛ն կեանքն է անմահ, հոն սէրն է անանց,
 Հո՛ն, հողերու սակ, վայել՛ր կան թաղուած...
 Վիշտ, ցաւ ու մորմնք մահուան թո՛ղ մընան
 Կոյս սիրտ, կոյս հողի թող երկինք խնդան :
 Սրբ, երթա՛յք բարե՛աւ, սիրո՛ւն անուրջներ,
 Չեղ թողում աշխարհս եւ իր սին յոյսեր... :
 --Ըսէ, ո՛վ մայրիկ, իմ նըշանածիս՝
 Որ Երկինքի մէջ գայ ու զրկէ զիս :

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՇՏԵՐԻՆ

Ո Ի

Հ Ա Յ Մ Շ Ա Կ Ը

Հայաստանի սո՛ւրբ դաշտեր,
 Բերկրանքն անյոյս սիրտերուն,
 Ո՛րքան կարօտ եմ մնացեր՝
 Ձեր կենսածիր հողերուն :

Կուգայ գարուն, դաշտերն հազնին կանաչներ,
 Կակուղ գորգեր սքիսեն քնքոյշ ծաղիկներ,
 Հառիկ ցորենն հասկ կը կապէ լեկլեցուն
 Ու բեղմնուոր ճաճանչներովն արևուն՝
 Կը ներկուի սիրուն գոյնով սակեղև՝
 Որուն նըման չէ՛ տեսնուեր ո՛չ մէկ սեղ :

Հայաստանի սո՛ւրբ դաշտեր,
 Բերկրանքն անյոյս սիրտերուն,
 Ո՛րքան կարօտ եմ մնացեր՝
 Ձեր կենսածիր հողերուն :

Անո՛յշ անո՛յշ փրչէ հովիկն հլւսիսակ ,
 Կը աատանին սիրուն հասկերն յաջ , յահեակ ,
 Ու բաղմաթիւ հատիկներով ահաղձուն՝
 Կը պըսակեն վատտակն անխոնջ գիւղացւոյն :
 Ժիր մըշակներ տաւտուն շա՛տ կանուխ՝
 Լոյս չի ծագած կ'ելլեն կ'անցնին գործի գլուխ ,
 Մի աջ մի ձախ կը ճօճեն սուր գերանդին ,
 Ոսկերողրով հասկերն յերկիր կը փռուին :

Հայաստանի սո՛ւրբ գաշտեր ,
 Բերկրանքն անյոյս սիրտերուն ,
 Ո՛րքան կարօտ եմ մնացեր՝
 Ձեր կենսածիր հողերուն :

Որաները գաշտերուն մէջ կորնթարդ
 Բուրգերու պէս կը բարձրանան բարդ ի բարդ ,
 «Մայլակն՛րը — կը դուստ ջով ասնուտէր —
 «Հա՛պա, աը՛ղեք, շո՛ւտ, լրձեցէ՛ք սո կոներ ,
 «Փողւըտեցէ՛ք ի՛նչ որ կայ, հո՛ս, գաշտին վրայ ,
 «Իրիկնամուտ չեղած պէտք է տուն մանայ . . . » :

Հայաստանի սո՛ւրբ գաշտեր ,
 Բերկրանքն անյոյս սիրտերուն ,
 Ո՛րքան կարօտ եմ մնացեր՝
 Ձեր կենսածիր հողերուն :

Սայլերուն ձախնչ չորս դին կուտայ արձագանդ
 Եղներ կրքին ծանրութեանը բնտան սակ ,
 Այբ, կին, աղայ, աղջիկ, հարուստ պաշարով ,
 Տուն կը մանան երգող ցնձուն ձայներով :

Հո՛ն, պարզ մրմունջ մ'անկեղծ սրտէն գիւղացւոյն,
 Բոյրերուն հեռ մրանալով կուտակերուն ,
 Կը բարձրանայ վեր, առ Գահոյսն Աստուածեան ,
 «Օրհնեա՛լ ըլլայ Աստուած, օրհնեա՛լ յաւիտեան» :

Հայաստանի սո՛ւրբ գաշտեր ,
 Բերկրանքն անյոյս սիրտերուն ,
 Ո՛րքան կարօտ եմ մնացեր՝
 Ձեր կենսածիր հողերուն :

Յ Ծ Ն Ո Ւ Ն Գ Փ Ր Կ Զ Ք Ն

«Փառք ի բարձունս Աստուծոյ»

Ձմրան երկինքն է ամպոտ ,
 Արև, լուսին գեղեւիտ ,
 Ձմրան լոյսն է ախրամոյն ,
 Չորս կողմ պատէ սառ ու ձիւն ,
 Բայց ի՛նչ անոյշ ա՛յս ձայներ . . .
 —Չէ՛, գարնան չին պլպուլներ՝

Որ առաւում ողջունեն ,
 Վարդ , կամ , շուշան հաստեն :
 Հրեշտակներ են որ կ'իջնեն
 Յերկիր ի վար երկինքէն ,
 Կ'երդեն Հաշակրզ Սիրոյ՝
 « Փա՛սք ի բարձունս Աստուծոյ ,
 Եւ յերկիր խաղաղութիւն ,
 Եւ ի մարդիկ հաճութիւն » :

Թէպէտ ամէն կողմ խաւար ,
 Թէպէտ ի խոր քուն աշխարհ ,
 Հովիւք թէպէտ խաչներուն
 Լուսուն մընան ծաղկելուն ,
 Բայց երկնահրաշ ս'ա ի՞նչ լոյս ...
 — Չէ՛ , դարնան չէ՛ արշալոյս՝
 Որ դայթալել սայ ինչնոյն ,
 Բոյբ , կամ փըթիթ վարդենոյն :
 Յիսուս Մանուկն է ծըներ ,
 Կեռ , ձոր ու դաշա լոյս սփռեր .
 Կ'երդեն Հովիւք ընդ Ձուարթունս՝
 « Օրհնութիւն Քեզ ի բարձունս՝
 Օրհնեա՛լ՝ Աստուած մեր եւ Տէր ,
 Օրհնեա՛լ՝ որ ծնոր վասըն մեր » :

ՔՈՂՈՔ ՄԵ ԱՌ ԱՍՏՈՒԱԾ
 ԵՒ
 ՅՈՅՍ ԱՊԱԳԱՅԻՆ

Այս աղագուն երկրի վերայ , ո՛վ Աստուած ,
 Ա՛յս հողին վրայ , հիմա լըքուած ու ցամքած
 Թէ Քու Ձեռքդ է առաջնորդողն հէք Հայուն ,
 Ո՛հ , այդ Ձեռքը որքա՛ն սիրէ հայ արիւն ...
 Տե՛ս թէ ի՞նչպէ՛ս կը դեղեւի Հայաստան
 Ու Դուն ինչպէ՛ս մութ քողերով ծածկեա զայն ,
 Կարծես անոր վիշտ , ցաւն , արցունքն ու մորմոք
 Աստուածենի Գըթոյդ չ՛ազղեն բընաւ հոգ ...
 Եւ զոր դըրիր « հանուրդ աղղաց վեհագոյն »
 Վրիժակ Բազկիդ ներքեւն հեծէ տխրամոյն ...
 — Ո՛չ ապաքէն Դուն անոնց ես վրէժխնդիր՝
 Որ թըշուառին ցաւերուն չե՛ն կարեկցիր ... :

Հայն ըզքեզ միշտ ճանչցաւ Աստուած Գըթութեան ,
 Ըզքե՛զ պաշտեց շատ կանուխ քան Եւրոպան ...
 Սատուրնական երբ Տօները վատչըէր
 Կը բաղխէին թաղաւորաց պալատներ՝
 Հայ ազգն համակ Քու սիրովը խանգավա՛տ՝
 Քեզի համար կեանքն ու արիւնը կուտար ...

Սակայն, Աստուած, չի գըթացի՛ր Գուռն Հայուն
 Երբ մահաչունչ իր արիւնտա օրերուն՝
 Դառնակսկիծ տազնապներէ ջախջախուած՝
 Արգահատանքն ելաւ խնդրեց ա՛յն ազգաց՝
 Զոր գերագոյն բարձրացուցիր բազլիւզ առկ,
 Թողլով միշտ Հայն անոնց ծաղուն նըշուակ . . . :

Ու ցաւալից ա՛յն օրերէն մինչ ցոյսօր՝
 Զի բարձրացաւ Երկինք Քու շանթդ անաւօր,
 Կը շողջղայ միշտ մեր վըրայ անլըկանդ
 Մեր աշխարհին տալով աւեր, քար ու քանդ . . .
 Քարացուց շանթդ ամէն սիրտեր Հայուն գէմ
 Ճակատագիր Հայուն վճակց բա՛խտ գծխեմ . . .
 Զի խընայեց հաւար ձերին, ու մանկին
 Արամօրմոք ձայնին, ոչ ա՛լ հէք կոսին
 Դառն արցունքին ու ո՛չ իսկ քոջ պատանոյն՝
 Որոնք խո՛ւմբ խո՛ւմբ, ցերեկ գիշեր ու առտուն՝
 Քե՛զ կարգացին, Քե՛զ, Աստուծոյ գթութեան,
 Վառ հաւատքով՝ թէ կը փրկես Հայաստան :

Սակայն, եղբարք, ա՛լ թողունք մեր արցունքներ,
 Ո՛հ, արցունքներ երբէք չեղա՛ն պաղաքեր . . .
 Մեր ջանքերը պիտի պտակէ օր մ'Աստուած
 Զի մեր երկիրն Իրեն հողերն են օրհնած :
 Հայաստանն է այն աննրկուն Թաղուհին,
 Ճակատը վեհ, աչքերը վա՛ռ բողապին,

բազուկն հրգօր : սիրտն ու հոգին անվեհեր՝
 Որ Սաչն ի յաջ, ձախով բռնած մերկ սո՛ւտեր՝
 պիտի պարզէ գրոջակ կանաչ ու կարմիր՝
 Թշնամին իր սաքերուն տակ անյարիր . . .
 —Եւ ի՞նչ վընտա թէ կաթիլներն արիւնին
 Քիչ մը կարմիր ներկեն ծայրիկն ըզգեստին . . . :

Ու կը կարծէք թէ կը կոսի՞ Հայաստան . . .
 —Ան կը շարժի՛, քայլեր տաւ տխրանեան :
 Թող սեւ ամպեր անսր կամարն ըսքօղեն,
 Մահաչոչունչ չար խօրչաղներ թող փրչեն,
 Թո՛ղ թաթ մ'օտար գլխուն վըրայ ծանրանայ,
 Ու թո՛ղ հեռուանց բըռունցներովն ըսպանայ,
 Արիւնախանձ թո՛ղ սեւեռն՝ իր աչքեր,
 Թո՛ղ մութին մէջ ուզէ լարեք իր գաւեր,
 Հայաստան միշտ իր սիրգածեմ քայլերով՝
 Պըսակ ի գլուխ ու արիւնտա վէրքերով,
 Կարճամարճէ դաւն ու թախիծ վեհօրէն,
 Մրրկաց մէջլն կ'անցնի կ'երթայ հեզնօրէն :

Բայց գո՛ւն արեւ, որ Բարձր Հայոց լեռներէն
 Կ'ելլես առտուն կարմիր զունովք հըրեղէն,
 Աշխարհի վրայ շողեր սփռած վարգազոյն՝
 կեանք կը բոշխես, նս՛ր կեանք, նսր յոյս ամենուն,
 Թոյլ տո՛ւր, ա՛ղէ, որ ես ա՛յն յոյսն ունենամ՝
 Թէ իմ սիրուն Հայրենիքս ալ քեզ նըման՝
 Վերածնելով իր անսահման պարսպէն՝
 Պիտի փայլի օր մը փառքով պերճօրէն :

Պիտի վանէ ամպ, մառախուղ, մէզ, խաւար,
 Իրեն որդւոց նոր կեանք տալով մշտապա
 եւ թէ՛ անոնք որ այժմ խնդան իր վերան,
 Անոր կրակով պիտի մրկին յաւիտեան:

Գ Ի Յ Ե Ր Ը

Տեսէ՛ք գիշերը արխուր
 Կը տարածէ սև քողեր,
 Ու Բընութիւնն համայն լուռ
 Կարծես սարսափ է պատեր:

Սրարածները ողջոյն
 Տեսէ՛ք ի՞նչպէս կը հծծեն
 եւ հառաչներ տխրամոյն
 Մարդոց թռչին սիրտերէն:

Թէ՛ օղին մէջ, թէ՛ ջուրին,
 Թէ՛ սողարթուն ծառոց վրան,
 Թէ՛ դալարեաց մէջ դաշտին
 Ի՞նչպէս լուռ է ամէն բան:

Տեսէ՛ք չարժուն եղեգներ
 Ի՞նչպէս իրար փաթթուին...
 Կարծես սիրուն ամուլներ՝
 Կարօ՞տ միմեանց համբոյրին:

Ու միջա՛տը կապուտիկ...
 Տեսէ՛ք, օղին մէջ ի՞նչպէս
 Միջատ մ՛ուրիչ թըռուցիկ
 Կը հալածէ դէն ու դէս:

Տեսէ՛ք, ի՞նչպէս ղեփիւտիկ
 Ծաղկին վերայ գուրգուրոյ՝
 Որ կը ներհէ խաղաղիկ՝
 Կըքած իրեն թուփին վրայ:

Լուսատարածն ալ եթեր
 Ի՞նչպէս վըճիա առուակին,
 Ուղղած փալիլուն ակնարկներ՝
 Կը հեղնէ մութ գիշերին:

Տեսէ՛ք, աստղեր լուսեղէն
 Բնութեան պաշտպան են կանգներ...
 --Ձի երբ մարդիկ կը ներհեն՝
 Իրենց պաշտպանն են աստղեր:

Բայց ի՞մ գիշերս է անբուն...
 Ի՞մ աստղիս լոյսն է խաւար...
 Լո՛ւկ եմ ցուերս են անհուն...
 Ե՛ս եմ միայն անմիթաբ...:

Հ Ա Յ Ո Ր Գ Ի Ի Ն Ա Ն Է Մ Ք Ը

Ո՛վ Դուք, Սուրբ Նախնիք, Հայրենեա՛ց զոհեր,
Հովիւք անձնդիրք, Հայո՛ց Արեւներ,
Մեր հին Տաճարներն հիմայ աւերակ,
Ձեր սուրբ արխանա՛վ էին կարծրեր:

Դուք մեռաք, դաջիք Հայրենեաց սրտապան,
Ձեզ յաջորդ թողիք սառւերնե՛ր միտոյն,
Որ Հայ կեանքին վրայ կը տատանին լակ,
Ձանան մեռցընել անոր սպազան:

Հայ կեանքն է արխուր, օրերն ար անյոյս,
Օրեր՝ որոնց Դուք բացիք արշալոյս,
Հայ մեծերն անգութ, Հովիւներն անխոյժ,
Կը ջանան մարել Հայ ճբբագին լոյս:

Փառքն՝ իրենց ամօթ, Աստուած՝ որովայն,
Իրենց համար միշտ օտա՛ր մըն է Հայն...
Ձիրար դաւադրեն լո՛կ փ սուքի համար,
Ա՛յն է իրենց գործն ու վտաստին հոմայն:

Ա՛լ իրենց համար Ազգն, Եկեղեցին,
Որքն, այրին, աղքատն արմէք մը չ՝ունին,
Քմահաճոյքներու եղան խաղալիկ
Կեանք, հանդիստ ու փ սուք միտոյն ընարեցին...

Անիծե՛ն զանոնք թող Ձեր Աճիւններ,
Անէ՛ձք կործանեն անոնց սև սիրտեր,
Անէ՛ձք Երկինքէն, անէ՛ձք Դըժօխքէն՝
Թո՛ղ թափի՛ն անէձք, անէ՛ձք մահաբեր...

Փըչեցէ՛ք, հո՛ղմեր, գոսացէ՛ք օւժգին,
Թո՛ղ զողայ երկիր, վըժժ լուծէ Երկին...
Մըթապա՛տ ամպրոպք, խոպո՛տ մըրիկներ,
Քանցեցէ՛ք անոնց փ սուքի վէս անդրին:

Շո՛ւտ, հասի՛ր ևս դուն, ճըճմբո՛տ կայծակ,
Սուր միտքերու պէս սլացիկ ու արագ,
Խօլ փայլակներու հուր բոց թիւերով՝
Սարքն ու կայքն անոնց դարձօ՛ւր աւերակ:

Ձարկ, շա՛նթդ անաւոր, զա՛րկ ևս իմ գլխուս,
Արդար վըճիոն ա՛յս, ա՛յս է ամէնուս,
Ու Դուն որտու՛մ, կործանէ՛ զաշխարհ,
Ձի աշխարհ մոռցաւ Հաւսաք, Սէր և Յոյս...

Թուխ ամպոց մէջէն, ու՛ր կ՛առնես թուալ՝
Ձախջախէ՛ բնութիւնն այս լայնածաւալ,
Որպէս զի Անհունն հանկ նոր աշխարհ՝
Ո՛ւր մարդն իր սպառիկը, մընայ անայլայլ:

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Ն Ե Ր Կ Ա Ն



Հոն են անոնք, հո՛ն, անտառին մէջ մուժ,
 Շատու՛ր են, տիտէ՛ք, հրգօր ու ջրղուա,
 Միշտ պատասպարուած, զէնքով վառ ի վառ,
 Չ'ունի՛ն ո՛չ թմբուկ ու ո՛չ ալ փողար,
 Կեցեր են լուռ, մուռնջ, չունին բընաւ փոյթ,
 Հո՛ն են անոնք, հո՛ն, անտառին մէջ մուժ :

Հո՛ն են անոնք, հո՛ն մէ՛ջն են ձորերուն,
 Չ'են՛ գիմեր ի դուր իրենց զէնքերուն,
 Բայց թէ խեղճ Հայեր՝ սիրասերնուն ցուէն՝
 Վրէժ լուծել ուզեն այդ հրբէշներէն,
 Հինգ՝ մէ՛կ Հայու զէմ, տառնի զէմ՝ յիսուն
 Հո՛ն են անոնք, հո՛ն, մէ՛ջն են ձորերուն :

Հո՛ն են անոնք, հո՛ն, գիւղե՛րն են Հայոց...
 Գաղաններու պէս՝ թըշուառ գիւղացւոց
 Վըրան են ինկեր, կուտան ջարդ աւեր...
 Ողբեր ու ձայներն աշխարհք են բռներ.
 Կայրեն, կըսպաննեն, չորս կողմ կրակ ու բոց...
 Հո՛ն են անոնք, հո՛ն, գիւղե՛րն են Հայոց...

Հո՛ն են անոնք, հո՛ն, քաղաքներուն զիմաց,
 — Հայերն հո՛ն — կ'ըսեն — քիչ են վընասուած —
 Յախուռն յարձակմամբ մանեն նա՛հւ հո՛ն,
 Եւ՛ իրրեւ մէյմէկ սոսկալի ներսն.
 Ընկեր ընկերի ձայն կուտան կապղած...
 Հո՛ն են անոնք, հո՛ն, քաղաքներուն զիմաց :

Հո՛ն են անոնք, հո՛ն, անողք, վայրազ,
 Գանդեր, կործաներ խանութ, առն, արնակ,
 Աւեր ու թալան, ըսպանդ, մահ ու ջարդ
 Դիակներ զիզեն հո՛ս հո՛ն բարդ ի բարդ...
 Թեւազրոզն իրենց սիրան է խայտառակ,
 Հո՛ն են անոնք, հո՛ն, անողք վայրազ :

Հո՛ն են անոնք, հո՛ն Հայաստանի մէջ,
 Կիւ, դաշա, սար ու ձոր կ'ընեն կլեւէջ.
 Պղծեն տաճարներ արիւնսա ձեռքով,
 Վանքեր կործանեն անկրօն հաւատքով,
 Կը մանեն առններ, կ'իրքով ցոփ ու գէջ՝
 Հո՛ն են անոնք, հո՛ն, Հայաստանի մէջ :

Հո՛ն են անոնք, հո՛ն, խուժան աւազակ,
 Մեր երկիրն համակ կ'ընեն աւերակ,
 Կը մարեն մեր մէջ մեր յոյսն, ապաղան,
 Չար կ'իրքերն իրենց մեզ օրէնք կուտան...
 Հայեր՝, վըտանդը մե՛ծ է, անորա՛կ...
 Հո՛ն են անոնք, հո՛ն, խուժան աւազակ :

ԳԱՐՈՒՆՆ

ՈՒ

ՀԱՅՈՐԴԻՒՆ ԿԵԱՆՔԻ

Գեղազուարճ ահա՛ դարուն
Իմ ըտլորախքս է պատեր
Կեանքը զաշտեր են զալարուն՝
Լո՛կ իմ օրերս են ձըմեռ :

Ծիւղ են աըւեր ծառ ու ծաղիկ,
Սոխակ վարդին տայ համբոյր,
Մայէ զառնուկ, կ'երդէ թռչնիկ՝
Լո՛կ իմ բախտս է անհամբոյր :

Կեանք է աւեր համայն բնութիւն,
Փըչէ զիսիւն գարնանային,
Պայծառ Արեւն է ամէնուն՝
Լո՛կ իմ արեւս է մըթին...

Կ'ըսեն ինձի, — երջանիկ է
Ա՛ն՝ որ կ'ապրի անդորրիկ,
Հեռու կեանքի պայքարներէ՝
Կ'անցընէ կեանք մը մեհնիկ —

Բայց՝ ապրի՛լ է կեանք մ'անբեղուն
Նրման ծառի մ'անբողբոջ...
Լաւ չէ՞ ննջել քունը մահուան,
Կամ՝ անձն հողին առլ ո՛ղջ ո՛ղջ...

Ա՛ն, ի՛նչ անխիւ են գաղտնիքներ
Ժամացոյցին սլոքին տակ՝
Որ մանր ա՛յնքան ջարդէ օրեր
Մարդուս կեանքին զըժընդակ...

Չսպանակէն անոր թաքուն՝
Մարդ չէ՛ կարող թափանցել
Անոր ըտլոր գաղտնիքներուն՝
Որ կեանքի հեա են կոպուել :

Ու մա՛րդ է ան՝ որ անսարկեր
Մընայ զօղանկայ զէմ անհուն...
Ա՛ն, մա՛նուանդ՝ որ կարելէր
Սիրտ մը ունի ըզգայուն...

Բայց անիծեա՛լ ձեռքն արիւնստ
Որ իմ օրերս կաշկանդեց...
Եւ անիծեա՛լ մահն ալ դժկոտ՝
Որ իմ աչքերս չի փակեց...

— Հեո՛ւ ինձմէն, սի՛ն խորհուրդներ,
Հեո՛ւ եւ դու, մահ գժխեմ...
Ո՛չ, ո՛չ, ապրի՛լ կ'աւզեմ ես դու
Անդու թ բախտին հսկընդգէմ...

Թո՛ղ կաշկանդուիմ անդուի ձեռքէ ,
 Գարունս ըլլայ թո՛ղ ձրմեռ ,
 Թո՛ղ թըշնամին ինձ հայհոյէ...
 Ո՛չ, ո՛չ... ասորի՛լ կ'ուզեմ դեռ :

Յաւերուս մէջ դժբա՛ղդ եմ ես՝
 Երբ կամքիս մէջն եմ ազատ ,
 Ո՛ւր մարդկային կեանքի հանդէս :
 Շուրջըս բացուի անընդհատ :

Երջանիւթիւն հո՛ն կը տեսնեմ
 Հարսի մը պէս սըզաւոր՝
 Որ մեկուսի ու ակրողէմ
 Հեծէ սիրտով վերաւոր... :

Ու ժըպիտով մը ցաւաղին՝
 Դարձուցած դէմքը սիրուն՝
 Դուչակ մ'ստոյգ ապագային՝
 Կ'ըսէ ինձի — «Ապրէ՛ Դուն...»

ԵՐԿՆԻՑ ՊԱՏԳԱՄԸ

Գիշերն, ահա՛, լայնարձակ սև քողերով
 Կուգայ սքողել աշխարհն աղջախջ խաւերով
 Ու երկնից վրայ բոյլերն անհուն աստղերու՝
 Շող կ'արձակեն փողփողենէջ լոյսերով :

Երկինքն հողույս անձայրած իրն է մատան՝
 Ո՛ւր, զերգ հրեղէն տառեր, աստղերն հրաշաղան
 Վեհինաճեմ շարքովն իրենց պաղպաղուն՝
 Կը բացատրեն յաճախ ինձ կամքն Աստուածեան :

Աչքերս յառած դէպի անձիրն այն անհուն,
 Սքանչելաախպ այդ դաշտին մէջ լուսանուն,
 Ոսկերողբոջ աստղերու ջինջ ջահերով՝
 Տեսայ ստէպ փառքն ապագայ օրերուն :

Տագնապալից հոգիս թո՛ղ եւ ա՛յս անգամ
 —Մինչ զըլանայ աշխարհն իրմէն պատասխան—
 Թո՛ղ հարցընէ այդ աստղազարդ Երկինքին
 Ու թո՛ղ անկէց առնէ պատգամն Աստուածեան :

— Ա՛հ, ո՛վ երկինք, համատարածդ ովկէան,
 Ո՛վ յայտարարդ անհուն զաղանեաց խորութեան,
 Ո՛ւր սուղեցան Քաղղեան Մողուց ակնարկներ
 եւ ո՛ւր տեսան հրաշքն աշխարհի փրկութեան...

Ու Դուք, ա՛ստղեր, ա՛ստղեր՝ պաշտպա՛նք իրա-
 ւանց,
 Ոյց ամբարիշտ աչքեր մընան անթափանց—
 Լուսահանդոյց ձեր աչքերուն մէջն են միշտ
 Գաղանիքն ամէն հըրաշքներու գիտութեանց...

Յո՛յց արեւ՛ք ինձ ուրեմն այն շնորհն երկնային,
 Այն Գեղեցիկն, այն ճշմարիտն ու Բարին...
 Ըսէ՛ք, Ե՛րկինք, մեր երջանիկ օրերուն
 Ո՛ւր է թաղուեր այն Աստղիկը լուսածին...

Արգարութիւնն ո՛ւր՝ իր անթիւր նըմարով,
 Ո՛ւր է և Յոյսն իր սրաթուիչ թևերով,
 Ո՛ւր է հանդէսը Աստղն ազդարար Փրկութեան
 Որ փառք ծագէ հրեշտակներու ձայներով:

— Դըրդղեցան յանկարծ երկնից կամարներ,
 Ու շողացին իրենց վըրայ լոյս տառեր,
 Փունջ փունջ աստղեր Սէ՛ր ցոլացին լուսողէն,
 Զայն որոտաց յերկնից— «Հա՛յեր, ունի՛ք Սէ՛ր...»

ՉՈՐԱԿԸ

(Le Valon)

(Թարգմանութիւն Ֆրանսերէնէ)

Հեղինակ ԼԱՄԱՐԹԻՆ

Յոգնած է սիրաս ամեն բանէ՛
 Մինչև անգամ յուսալէ,
 Ան իր մորմոքն երբէք չ'ունի
 Թէ ըզձից վերջն ո՛ւր յանգի...
 Դուն, ո՛վ Չորակդ իմ մանկութեան,
 Դո՛ւն շնորհ ըրէ՛ միմիայն՝
 Գո՛նէ օրուան մ'ինձ ապաստան՝
 Ո՛ւր ըսպատեմ ես մահուան:
 Կը տեսնեմ կեանքն ևս ա՛յս տեղէն՝
 Որ ամպի մը ներքեւէն՝
 Ինձի համար ա՛լ կը ցնդի
 Ըստուերըն մէջ անցեալի...
 Սէ՛ր՛ և եթ չէ՛ մոռցըւեր՝
 Որ իբրու վեհ մի պատկեր,
 Խօլ անուրջի մը մէջ միայն՝
 Երբ կ'արթննաս՝ կա՛յ կենդան...
 Մէջն այս վերջին ապաստանիս
 Հանդիսա ըրէ՛, ո՛վ հոգիս,

Այն յուսալից ճամբորդին պէս՝
 Որ չի մտած քաղքէն ներս,
 Վայրիկ մը դրան քով կը հանդչի
 Անոյ՛ջ օդովն երեկի։
 Գու օրերդ կարճ ու թախծուն՝
 Հանգոյն աշնան օրերուն՝
 Բստուերի պէս կ'իջնեն խոնարհ
 Բլբրակներուն դարն ի վար։
 Բնկերի սէր քեզ կը դրժէ
 Գու թ. ճըզէ զքեզ երեսէ
 Ու Դուն մենիկ՝ Գերեզմանին
 Կ'իջնես անձուկն այն ուղին...
 Սակայն Բնութիւնը միշտ հո'ն է՝
 Քեզ կը կոչէ, քեզ զգուէ,
 Գընա՛, թաղուէ՛ ծոցը անոր՝
 Որ բա՛ց է քեզ ամէն օր։
 Թէ քեզ համար փոխուի համայն՝
 Այլ Բնութիւնն է նոյն սակայն։
 Օրերո՛ւզ ալ նո՛յնն է Արև...
 Արև նո՛յնն է քու վերև...
 —————

ՀԱՅ ՈՐԲՈՒԿՆԵՐՆ ՕՏԱՐԻՆ ՁԵՌՔԸ

Խեղճ Հայ որբին աչքն արցունքով է լեցուն,
 Մա՛յր կ'երազէ գիշերն ի բուն, բայց առտուն
 Ձի կա՛յ մայրիկ՝ որ համբոյր սայ շերտին...
 Օտարին քով կ'արթննայ մո՛ւթն ու լուսին։

Խե՛ղճ մայրեր՝ որ կ'երանգէք յոյս օտարէն,
 Եւ օտարին կը վազէք շուտ ետեւէն...
 Գիտէ՞ք արդեօք թէ արձան մ'է այդ օտար,
 Երեսը ցուրտ, զէմքն անժըպիտ, սիրտը քար։

Եւ ի՛նչ դառն է ժամն՝ երբ մայր մ'իբ զաւկին
 հետ՝

Խոււ վիշտերու մէջ տոգորուած առ յաւէտ,
 Ինքըզինքը կը նըւիրէ խեղ բախտին,
 Օտարին ձեռքն յանձնէ հատորն իբ սիրտին...
 —————

Ձիկա՛յ օտար մը Հայուն զէմ անձնուրաց,
 Օտարն երբէք Հայ որբին վրայ չի գըթա՛ց...
 Հայուն շնորհիւ բախտ կը չինէ այդ օտար,
 Խեղճ որբուկն Հայ մընայ սակայն միշտ թշուառ...
 —————

Տեսնեմ Հայ որբն՝ որ օրն ի բուն քրտինք պող
 Թափէ՝ կրելով քար, փայտ ձեռքովը մատաղ . . .
 Եւ ի՛նչ կայտառ Հայ զաւակներ հալ ու մաշ
 Եղան ա՛յսպէս՝ տանելով կեանք մը չարքաշ . . .

Օտար շահուն զոհեց Հայ որբն իր ժամեր,
 Մոռցա՛ւ լեզուն . . . կարծես թէ Հայ ծընած չէ՛ր . . .
 Եւրոպն ողջոյն Հայ արիւնէն օգտուած՝
 Ինքն յղփացաւ, որբը ծամեց ցամաք հաց . . .

Կարծես քիչ էր Հայուն կրած ստաւապանք
 Որբ մընացած զաւկի՛ն ալ տուաւ մեծ զրկանք . . .
 Մոռցո՛ւց անոր կրօնքն ու աւանդն ազգային . . .
 Մեռցո՛ւց աւելնն ու մարեց հո՛ւրն իր սիրտին . . .

Կապուեց կարմիրն Հայ որբին թարմ այտերէն՝
 Մահահանգոյն գալուէլ զբօշմեց փոխարէն . . .
 Ժամ, Պատարազ, Հայ կեանք չ՛ունի հայ որբուկ,
 Օտարին ձեռքն օտա՛ր է ա՛ն, կեանքն է սուգ . . .

Մայրե՛ր, եկէ՛ք, ա՛ն . . . ձեր անմեղ զաւակներ
 Տեսէ՛ք, ինչպէ՛ս թօշնած վարդեր են դարձեր . . .
 Հայ որբի մը հարցուցի թէ՛ — մայրն ու՛ր էր,
 — « Մայրիկս » — ըսաւ — « Գուրդ մ՛իւր տունն է
 փախուցեր » :

Եւրոպացին ա՛յսպէս խաբեր էր որբին . . .
 Այսպէ՛ս կ՛ապրին Հայ որբեր ձեռքն օտարին . . .
 Վիշտերուն մէջ Ազգիա՛ վերջի՛նն է այս խաչ,
 Որ խեղճ Հայուն մընայ, ափսո՛ս, անձանաչ :

Վ Ա Լ Ա Ն Ի Կ Ը

Ճանչցա՛յ լա ղինքը . . . նո՛յն գէմքն էր սիրուն,
 Դաշար ման կուգար, քայլերն երեբուն,
 Աչքը արցունքօտ սևեռուն, անթարթ . . .
 Վահանիկն էր ա՛ն . . . սիրաը անհանդարտ :
 Միաքը պաշարուած վիշտով մ՛անսահման՝
 Զիս տեսաւ, փախաւ կայծակի նըման . . .
 Երեսն ըսպիտակ, կարծես թէ կաթ էր,
 Մեղոյն աչքերէն ցաւ, վիշտ կը կաթէր,
 Հնոց մը կար կարծես՝ բորբոք հողոյն մէջ՝
 Ո՛ւր հուրն էր խիզախ, ո՛ւր բոցն էր անչէջ :
 Վազեցի խնայն հասայ հտուէն՝
 Հեւ ի հեւ եկած՝ բունեցի թուէն . . .
 — Վահանիկ — ըսի — ամիսն է Մայիս,
 Ծաղիկ, դալարիք չաւրջք են, չի նայի՞ս . . .
 Հառաչ մը թոցուց իր սիրտին խորէն,
 Ա՛լ ձայն չի հանեց . . . նստաւ ափսօրէն :
 Նստանք երկուքս ալ այնտեղ քով քովի,
 Ճակատնիս տըւած անոյն, գով հովի :

Մէջէն ծագիազարդ լաշնածիր դաշտին
 Գեառակ մը սողար լըռին ու հեշտին՝
 Որուն վէավէաներն շողով արեւին
 Կարծես երկինքէն դոհար թափուէին :
 Վահանին սիրտն էր յոյզերով գեռուն՝
 Այն ինչ բոլորած դեռ քսան դարուն ,
 Արցունքը բիծեր զրոշմեր էր գիծ գիծ՝
 Ճերմակ ալանուն , ճակարկն վրայ անբիծ . . .
 Չէի՛ տեսեր զայն , կար երկու տարի ,
 Շա՛ա կորովի էր , կայտառ ու արի .
 Ի՞նչ էր պատահեր որ՝ ա՛յսպէս հիւժուած՝
 Հո՞մ վիշտերու մէջ էր խորատուղուած . . .
 —Տե՛ս , վա՛հան — ըսի — երկնից կամարին
 Բեհեզ ամպիկներն ի՞նչ շուտ կը մարին
 Զինջ էր ճակատդ ալ երկինքին հանդոյն
 Ինչո՞ւ եղեր է վշտագին , անդոյն
 Խօսէ՛ , վա՛հանիկ , այդ ամպերն ոչի՛նչ . . .
 Թո՛ղ մարին , ցնդի՛ն ճակարկդ վըրայ ջինջ :

* * *

—Ե՛լ — ըսաւ — երթա՛նք գետակին քովը —
 Ոտք ելաւ սիրտին բոլոր յոյզքովը . . .
 Գեառակն էր մօտիկ , ճիշտ ստտափ մըն էր՝
 Որ վէավէաներով կ՛անցնէր կը թափուէր ,
 Եւ կարծես դաշտին քնքուշ թագուէին՝
 Մընջիկ ճայներով երգ մը կ՛երգէր հին :
 —Ձրպէ՛ գիտ — ըսաւ — ա՛լ ժամս է վերջին ,
 Ճիւղակներ , կարծես , չորս կողմըս շըրջին .

Անհուն այս Բնութեան վայելքն անհամար՝
 Ո՛հ , ա՛յլ եւս ոչինչ են ինծի համար . . .
 Ա՛լ չ՛ունիմ հաճոյք տակն այս արեւին՝
 Երկինք աչքերուս խաւար կ՛երեւին . . .
 Խաւար է արեւն իմ գլխուս վերեւ ,
 Յոյսերըս բոլոր ելան ի գերեւ . . .
 Ի՞նչ փոյթ թէ մեռնիմ , չունիմ մէկ լացող
 Դիակիս գետա՛կն է միայն լացն ու հող . . . —
 Եւ ուզեց նստուիլ այն գետակին մէջ . . .
 Անյոյս սիրտն անդուլ կ՛ընէր ելուէջ :

* * *

Իրա՛ւ վահանիկ դժբախտ անձ մըն էր ,
 Պատմեց թէ գլխէն ինչե՛ր անցեր էր . . .
 Հայրն էին զարկեր տարի մը առաջ ,
 Մայրն հիւժեր էին ցաւերն ու հառաչ ,
 Երկու քոյր ունէր երկուքն ալ սիրուն ,
 Զոհն էին եղած անգուլթ Գուրգերուն . . .
 Թալաններ էին , տուն , տեղ , ստացուած ,
 Ա՛լ բա՛ն չէ՛ր մնացեր՝ բայց ինքն , իր Աստուած . . .
 Յոյս մ՛էր ունեցեր , յոյս մ՛անուշիկ ,
 Յոյս՝ զոր կ՛երազէր ա՛ն յուշիկ յուշիկ ,
 Նըշանածն էր ա՛ն՝ սիրուն նըւարդը ,
 Գանձը իր կեանքին , իր սիրուն վարդը ,
 Նոյն դաշտին մէջ , ճիշտ քովիկը գետին . . .
 Զա՛յն ալ անգութներ փռե՛ր էին գետին . . .
 Հո՛ն կ՛ուղէր Վահան վերջ տալ իր կեանքին ,
 Հո՛ն՝ ո՛ւր ինկեր էր իր նըւարդն անդին . . .

Ճակատն էր պատեր թալուկը մահուան,
Սիրտ կը ճմլէին իրեն ան ու վահն...

* * *

Թէպէտ ինքնասպան չ'եղաւ վահանիկ,
Բայց ինչպէ՛ս ապրէր մենիկ միայնիկ...
Մեռած ապրեցաւ քանի մը օր ալ,
Չի կրցաւ վայրկեան մ'իր ցաւը մոռնալ...
Եւ օր մը առաուն՝ նոր ծագած արև՝
Մեռելի մոմ մը իր գլխուն վերև՝
Լոյս կը դողդոջէր աղօտ սրգաւոր
Այն ճակատին վրայ՝ ո՛ւր մահն անաւոր՝
Անգութ, անողոք, ողջոյն օրերով՝
Անթարթ կը հակէր իր սեւ թեւերով:
Մեռա՛ւ վահանիկ իր փափաքն էր սա...
Մեռա՛ւ գարնան մէջ հասակին դեռնաս...
Չունեցա՛ւ երբէք իր վըրայ լացող՝
Միայն չիրմին վրայ երկնից կ'իջնայ ցօղ:
Հայրենեաց զոհեր դեռ գիտէ՞ք ո՛րքան,
Փակեցին դռներ տանն իրենց հօրկան...

Ա՛ն... Ա.Ի.Ա՛ղ...

~~~~~

Քանի՛ աչքերս դէպ Հայաստան սեւեռուն՝  
Հայ կոյսերուն նային սուգի սեւերուն,  
Քանի՛ դժբախտ Հայրենիքիս գիրգ հարսունք,  
Սրտակըտուր թափեն արիւն ու արասունք,  
Քանի՛ խեղին աւպարէզը արձա՛կ է  
Ու լուծի տակ անմեղն հառաչ արձակէ,  
Տ'որքան Հայերն՝ իրենց ամէն քայլերուն,  
Չո՛հ կը դառնան մարդախոշոշ գայլերուն,  
Իմ սրգաւոր քնարիս թեւերն աղաւաղ՝  
Բեկբեկ ձայնով պիտի գոչեն ա՛խ... աւա՛ղ...

Երբ Հայաստան կը պաշարուի դողերով՝  
Որ կը գուժուին սրամօրմօք տողերով,  
Բայց ծածկուած ներքեւ սեւ վերարկուի՝  
Ամէն ոճիւր անմեղ հայուն վերարկուի...  
Մինչ բանա, աքսոր շարունակուին անգագար  
Ու Հայուն ցաւն ա՛լ չ'ունենար գուլ դագար,  
Երբ Սէրն ու Գութ իսպառ վերնան աշխարհէ  
Ու չի՛ լսուիր ո՛րքան որ մարդ աշխարհէ...  
Իմ սրգաւոր քնարիս թեւերն աղաւաղ՝  
Բեկբեկ ձայնով պիտի գոչեն ա՛խ... աւա՛ղ...



Երբ կը մթնէ Հայոց աշխարհ փառունակ ,  
 Կը խորտակուի հայ բուսակին բարունակ ,  
 Հայ սիրտերուն երբ կը մարի յոյսն անոյշ ,  
 Կակիժներու ձայներ կ'ըլլան ա'լ անյուշ . . .  
 Հայ վարդենեն երբ կը դեղնի իր գոյնէն ,  
 Սոխակն ալ լուռ . . . ա'լ չ'արթննար իր քունէն ,  
 Երբ Հայն հրաժեշտ կուտայ իր հին կարգերուն  
 Ու կը գտնէ իրեն մի ա'յլ կարգ հեռո՛ւն ,  
 Իմ սրգաւոր քնարիս թելերն աղաւաղ՝  
 Բեկբեկ ձայնով պիտի գոչեն ա'խ . . . աւա՛ղ . . .

Ու կ'անհետի երբ փայլն Հայոց փառքերուն ,  
 Կը խառնուի մէջը օտար բարքերուն ,  
 Երբ Հայ Զօջեր՝ խաբուած յուսով մը չնչին՝  
 Իրենց համբաւը կը դռհեն ոչինչին ,  
 Երբ անձնուրաց Հայ մը գտնելն է դժուար՝  
 Որ մորմոքի՝ թէ Հայն ինկեր է թշուառ ,  
 Մինչ կըզերն ալ՝ որ փառքին լոկ հետապինդ՝  
 Կապուած մընայ իր շահերուն հետը պի'նդ ,  
 Իմ սրգաւոր քնարիս թելերն աղաւաղ ,  
 Բեկբեկ ձայնով պիտի գոչեն ա'խ . . . աւա՛ղ . . .

Բայց կա'յ Աստուած մը Երկինքի մէջ անհուն  
 Որ Գըթութեան միայն ունի Ինքն Անուն ,  
 Որ կը գննէ խորը ամէն սիրտերուն  
 Ու կը տեսնէ արգար սիրտերը ետուն ,  
 Պիտի քննէ օր մը Հայուն այս վիճակ  
 Ու կործանէ ազգակործան այս վիճակ . . .

Եւ այն ատեն տարաբախտիկն ՀԱՅՈՐԳԻ՛  
 Իր հեան առած սիրտով ամէն հայորդի՝  
 Ուրախութեամբ պիտի դոչէ ա'խ , աւա՛ղ  
 Անոնց՝ որոնց դործերն եղան աղաւաղ :

## Ա Ռ Ո Ւ Ղ Ե Ի Ո Ր Ն

Երբոր տեսնես զաչա մը սիրուն՝  
 Ուր ծաղիկներ են ծիլ տըւած ,  
 Որոնց նախշուն թերթիքներուն  
 Երկնից կապոյտը խառնըւած՝  
 Զով զեփիւօին հետ ատտըւան  
 Սիրտատրիիկ կը սլվլըւան ,  
 Հայրենիքիս սուրբ դաշտն է այն ,  
 Իմ ողջօյններըս աա'ր առ այն :

Երբոր տեսնես լեռ մը սիրուն՝  
 Պըտակուած նոր հարսի մը պէս՝  
 Որուն դադաթը պաղպաղուն  
 Բօղք մը կայ նուրբ՝ ճերմակ բեհէզ ,



Իբրև գշտոյ մը վեհափառ՝  
 Որուն Արևն է սիրահար,  
 Հայրենիքիս սուրբ լեռն է ա՛յն,  
 Իմ ողջոյններս տա՛ր առ այն :

Երբոր տեսնես պուրակ սիրուն  
 Սաղարթախիտ սօսիներով՝  
 Ո՛ւր գեղգեղներ սոխակներուն  
 Ուղեւորին կ'ազդեն գորով  
 Հո՛ն Արևն ալ կալով պատկառ՝  
 Կաթ է շողերն իր սիրավառ,  
 Հայրենիքիս պուրակն է այն,  
 Իմ ողջոյններս տար առ այն :

Երբոր տեսնես հովիտ սիրուն՝  
 Ուր գետակ մը ջինջ ու վըճիտ  
 Դըզիչներովն իր ջուրերուն՝  
 Կը փարատէ ցաւը սիրախոյ,  
 Ուր վայրահակ ուռենիներ  
 Կարծես պըսակ են բոլորեր  
 Հայրենիքիս հովիտն է այն,  
 Իմ ողջոյններս տա՛ր առ այն :

Բայց երբ տեսնես կոյտ կոյտ հողեր՝  
 Որ արցունքով են ողողուած,  
 Որոնց վըրայ գողգոջ ձեռքեր  
 Կարմիր վարդի փունջեր սըփռած,

Ո՛ւր ողբերու ձայներ տըխուր  
 Սիրառը կ'ընեն աղեկըսուր...  
 Հայրենեացս են դերեզմաններ  
 Տա՛ր, հո՛ն թափէ իմ արցունքներ :


## ՀԱՅՈՐԴԻԻՆ ԲՈՂՈՔԸ

Ասաղը այգւոյն երբ կը շողայ երկնից վըրայ  
 Աչքերուս մէջ թեթեւ յոյս մը կը ցոլայ,  
 Լուսափըթիթ այդ աստղկան միշտ յառած՝  
 Կը մոռնամ պա՛ն մ'իմ ցաւերըս ախրազդած :  
 Բայց աստղին հեռ թեթեւ յոյսս ալ կ'անհետի...  
 Ու սէդ արևն իր կըրակովն Հըրասի՝  
 Կարծես խօսք մէկ ըրած սիրախոյ բոցին հեռ,  
 Հին ցաւերուս կ'աւելցընէ նոր աղէս...  
 Ուրեմն ա՛լ ի՞նչ կ'ըսպասեմ ես ինձ համար,  
 Ինձ՝ որուն ուշն, ա՛լ ապստամբ մ'անդադար,  
 Ձի՛ հաւատար թէ՛ աշխարհիս վըրայ յոյս մը կայ՝  
 Վի՛ն մ'անյատակ՝ ու՛ր դժբախտը լո՛կ կ'իյնայ...  
 —Որո՞ւ գիմեմ դէթ նըշոյլ մը գանեղու,  
 Կամ բարեկամ ձայն մը՝ սիրտիւն վիշտերու... —



Աշխարհքիս մէջ մեռած են Գուլթն ու Հաւատ,  
 Երկինքն անհուն ա՛լ դարձեր է անապատ...  
 Գիտե՛մ, Աստուած մը կայ, Աստուած ահաւոր,  
 Որուն ինկած եմ ես Ձեռքին տակն հըզօր,  
 Ու այս մենիկ վիճակիս մէջ քայքայուն՝  
 Այդ Աստուծոյն կըստասեմ հին օրերուն,  
 Ու՛ր դիւախրոխտ կործաներ են ներոններ,  
 Փարաւոնեան ու՛ր բաղուկներ ջախջախուեր...  
 Ա՛յն օրերուն՝ ու՛ր լոկ անուներ — ԱՍՏՈՒԱԾ —  
 Սարսափ կուտար՝ ինչպէս շանթիկն հըրամած :  
 Բայց, ո՛վ Աստուած վըրէժխնդիր, ի՞նչ եմ ես՝  
 Ձօր ահարկու Բազիկիդ ներքեւ կը ճնշես...  
 Իմ քայլերուս հանդէպ անդունդ մըն ես Գո՛ւն՝  
 Ու՛ր թէ գլորի՛մ... հո՛ն մէ՛կ վայրկեանն է անհուն...  
 Կ՛աւելնա՞յ փառքդ եթէ ինձ պէս մէկ արկար  
 Կնոջմէ ծընած մահկանացու մը թշուառ  
 Ձո՛նը ըլլայ Քու Աստուածեան վրէժներուդ,  
 Ինչպէս չնչին շիւղ մը՝ մոնջող հողմերուդ...  
 — Բայց, ի՞նչ կ'ըսեմ... Դու չե՛ս այլեւս Եհովան՝  
 Որմէ երբեմն հուր, շանթ ու բոց ժայթքեցան...  
 Գողգոթայի Խաչին այն Մեծ Ձոնն ես Դուն՝  
 Ոյր Արիւնէն կարմիր կաթէ ԳԹՈՒԹԻԻՆ :  
 Թափէ՛ շանթերդ, հալածէ՛ զիս, կործանէ՛,  
 Արդար Արեանդ վրէժն ինձմէն պահանջէ՛.  
 Կայծակներէդ թո՛ղ ես զողամ հալածուած...  
 Միայն յիշէ՛ թէ ԳԹՈՒԹԵԱՆ ես ԱՍՏՈՒԱԾ :

Յ Ի Շ Է՛ Զ Ի Ս . . . .



Երբ վարդամասն Արշալոյս՝ արծաթածամ վար-  
 սերով,  
 Մտուեաց պղպջուն բարձունքէն կը ծագէ նոր առաւօտ  
 Ու գիշերն այ մըրամկոտ՝ իր սեւաթոյր խոնկրով,  
 Անհունին մէջ կ'անհետի՝ թռչըակով գեղեւկոտ,  
 Երբ դայլայլեն սոխակներն հովիտներուդ հովանուս,  
 Երբ ձայնակցին Հայ կոյսեր սիրաբաղձիկ երգերուդ՝  
 Ա՛հ, անուշի՛կ Հայրենիք, սիրատարփի՛կդ իմ Գա-  
 ւատ,  
 Ես կը մաշիմ կարօտովդ... ա՛հ, յիշէ՛ զիս, մի՛  
 մոռնար :

Յիշէ՛ արևուր այն վայրկեանն՝ երբ գծխեմ  
 բախտն անըմբեր՝  
 Մէ՛կ հարուածով զիս խըլեց քու Մայր ծոցեդ գրգա-  
 սուն...  
 Յիշէ՛ թէ՛ ցաւ վիշա, աքսոր, սև օրեր, սև անոթներ  
 Կը կործանեն ժամ առ ժամ սիրախ վառ յոյսն ու  
 աւիւն...  
 Յիշէ՛, յիշէ՛ թէ ց'ո՛րքան արկար սիրառն բաբախէ՛  
 Ձայն մը կայ, ձո՛յն հառաչող՝ որ անդադար քեզ կ'ըսէ  
 — Ա՛հ, անուշի՛կ Հայրենիք, սիրատարփի՛կդ իմ  
 Գաւատ,  
 Ես կը մաշիմ կարօտովդ... ա՛հ, յիշէ՛ զիս, մի՛  
 մոռնար :



Յիշէ՛ զիս՝ երբ Հայ կուսանք, քու քոյրերըդ  
 Նուիրական Անունիդ ձօնուած անոյշ երգերով՝  
 Գեղածիծաղ դաշտաց մէջ պարեն, կայառեն զեղամոյն՝  
 Գրլուխներնին զարգարած խորհրդաւոր փունջերով,  
 Յիշէ՛ թէ ա՛յն երգոց մէջ մրմունջ մը կայ խառնըւած՝  
 Մրմունջ դժբախտ աարազրի մ'անհուն սիրովի տալըց-  
 ուած...  
 — Ա՛հ, անուշի՛կ Հայրենիք, սիրտտարի՛կդ իմ  
 Գաւառ,  
 Ես կը մաշուիմ կարօտովդ... ա՛հ, յիշէ՛ զիս մի՛  
 մոռնար:

Ու մի՛ մոռնար՝ երբ ա՛յս տեղ, այս վայրերուս  
 մէջ անյոյս, Սիրտըս լքուած, ես անյուշ, ամփոփեն զիս սեւ հողեր  
 կամ երբ լրեւ թէ՛ վայրի վարդի թուփ մը մենաբոյս՝  
 Գերեզմանիս վրայ ցուրտ իրեն թերթիքն է բացեր.  
 Գիտե՛մ, զիս ա՛լ չե՛ս տեսնար ... բայց իմ հողիս կեն-  
 դանի,  
 Վառուած սիրոյդ կըրակով, շուրջըդ պիտի սաւառնի  
 Ու քեզ ըսէ — Հո՛յրենիք, սիրտտարի՛կ սուրբ  
 Գաւառ,  
 ՀԱՅՈՐԴԻՆ քեզ զո՞ն եղաւ... ա՛հ, յիշէ՛ զայն... մի՛  
 մոռնար:



Տուէ՛ք իմ թեւերս, թռչիմ ու սլանամ,  
 Բոյն դընեմ Մասեաց սարերուն վըրայ,  
 Հայոց աշխարհէն ձեզ աւետիս տամ,  
 Թէ վարդ ու շուշան կոկոն կը բանան:

Տուէ՛ք ինձ քընարս, մօտենայ գարուն,  
 Չօնեմ իմ երգերս Հայոց արեւուն,  
 Արթնցեր կ'երգեն սարեակն ու սոխակ,  
 Ու դեռ ես մընամ միշտ այսպէս 'ի քուն:

Տուէ՛ք իմ սըրինդ, սուլեմ հանգարտիկ,  
 Չայնիս կըսպասեն սչխար ու գառնիկ  
 Կեանքըս նորոգութի, լըսեմ սիրտսուն  
 Հայ գառնուկներուն երգելը ՄՍՅիկ:

Տուէ՛ք իմ ցուպըս նժդեհ մ'եմ, թըշուառ,  
 Վըրան կըթընիմ, անցնիմ լեռ ու սար,  
 Ճակատըս դընեմ հայրենի հողին,  
 Դալարեաց վըրայ արցունքներս հոսին:



Տուէ՛ք հայրենի ձորձերբս հազնիմ,  
 Զոր կապտեց ինձմէն անգութ թշնամին,  
 Ո՛հ, իմ այս սուգն, ալ հերի՛ք է, հերի՛ք,  
 Թողէ՛ք դարնան հեա մեկտեղ զարգարուիմ:

Տուէ՛ք իմ փունջեր, պըսակ բոլորեմ,  
 Հայ կուտից քնքոյշ գլուխներ զարգարեմ,  
 Թող սգաւորի պարեգօան հանեն,  
 Կարմիրներ հազնին, երգեն ու պարեն:

Տուէ՛ք իմ վարդեր, հարսնուկն ու յասմիկ,  
 Արիւնով ծըլած կը մընան փափկիկ,  
 Հայց հարսները՝ սիրելեաց սիրուն՝  
 Ճակասնին զընեն թո՛ղ սիրելաղիբի:

Տուէ՛ք իմ զըրիչ գրեմ իմ տաղեր  
 Երգեմ Հայրենեաց Հողոյն մատաղներ.  
 Փոխան նղբերգի՛ զովեասներ հիւսեմ,  
 Թո՛ղ փայլին անոնց սուրբ յիշատակներ:

Տուէ՛ք ինձ, տուէ՛ք իմ բահս ու փայտատ  
 Անոնց քով բըրեմ իմ ցուրտ գերեզման,  
 Տար աշխարհ ապրիլ՝ անոնցմէ անջատ՝  
 Այդ ինձ համար, ո՛հ, մա՛հ է յաւիտեան:

Տուէ՛ք ինձ իմ խաչս ու Աւետարան,  
 Ամբարիչաք առին ու գերի տարան,  
 Տուէ՛ք Հայրենեացս յանձնեմ Տէրաէրին՝  
 Որ նոքօք կնքէ իմ ալ գերեզման:

### ՀԱՅ ՈՐԲՈՒՀԻՆ ԻՐ ԳԱԳԱՂԻՆ ՄԷՉ

... Իր Դագաղին շուրջը լացող մը ջ՛ռնէր.  
 Մաղիկ մ՛իսկ չէ՛ր դրուած անօր ցուրտ ճակաին,  
 Անցուցե՞ր էր տասը դարուն... - չեմ գիտեր... -  
 Սե՛ւ օրերն, ո՛հ, միթէ գարո՞ւն են կեանքին...

Ձե՞ան թէ մարմար արձանի վրայ կը պըլպուտ  
 Լոյս մը ազօտ արխուր մութին մէջ մահուան...  
 Բայց չէ՛... արմոյն է ձիւնն անգոյն է մարմար,  
 Այնքա՛ն ճերմակ էր զէմքն ամբիժ աղջըկան.



Հառաչ մը կար, կարծես, վըրան իբ շուրթին,  
 Հառա՛չ մ'անղոր՝ ա՛յն զեփիւռին պէս դարնան՝  
 Որ չի՛ շարժեր թափուած թերթերն այն վարդին՝  
 Թեթեւ սլացքով մը վաղանցուկ ու անձայն:

Գլխուն վերեւ թոյլ ցուքերը այն լոյսին  
 Գեղեւէին անոր շուրջը վեհերոս,  
 Ու մութն ալ լըզ մեղամաղձիկ գիշերին՝  
 Անոր անաքէն կը դողգոջէր պատկառոս...

Գեղեցիկ էր ա՛ն... Բընութեան մէկ գանձը,  
 Գեղեցի՛կ զեռ լըռութեան մէջն իսկ մահուան...  
 Անգութ Բառան էր գրաւեր իբ անձը՝  
 Թողլով Սէրը՝ որ սուգ ասնէ իբ վըրան...

Ու երկինքէն փոքրիկ հրեշտակ մը մեղոյն՝  
 Անոր հոգւոյն վըրայ թառած թեւոպար,  
 Կը հիանար... ա՛ն ալ հրեշտակ մ'էր քնքոյն,  
 Կամ գրգանոյն Ողի՞ մ'իբեն սիրահար...

Շող մ'արձակեց արեւն ամբիժ կոյս գէմքին  
 Շուրթնեղուն վրայ անմեղ ժըպիտ մ'երեւաց...  
 Արդեօք ժըպի՞տն էր այն՝ ուղղած Մայրիկին՝  
 Որմէ հեռու՝ մահուան ցուրտ գիրկն էր ինկած

Ու տխրերգը քանանային պատկառոս՝  
 Ովաննային խառնըւելով հրեշտակին՝  
 Խեղճ որբուհւոյն դագաղն սուին խնկահոս,  
 Ամբիժ մարմինը յանձնեցին սև հողին:

## Գ Ի Ի Յ Ա Ձ Ն Հ Ա Յ Գ Ե Ղ Ղ Կ Ո Ւ Շ Ի Ն

(Երական դ.պֆ)

Օր մ'էր աշնան, զեռ արևը նոր ծագած,  
 Գիւղին մօտիկ՝ բըլրակի մը վըրայ ցած,  
 Հայ աղջիկ մը հաղիւ քըսան տարեկան,  
 Տարածուած էր գետինն իբրև անկեղան,  
 Որուն գէմքին վըրայ վէտեր բռնագոյն  
 Փոխեր էին կերպարանքը զեղջիկուհոյն:  
 Ուսին վրայ կային արևան սև բիծեր  
 Ու գեանին վրայ սև արիւն մ'էր լըճացեր,  
 Դիաթաւալ քիչ հեռուն Գուրգ մ'ալ հսկայ՝  
 Ճապաղիքի սև արևան մէջ անդգայ.



Դժոխաշունչ հասած իր հուսկ բողբոջին՝  
 Բերնէն փրփուր ժայթքեցընէր գիււային :  
 Յանկարծ բրդաւ գիւղին մէջ մեծ վայնասուն ,  
 Ան ու սարսափ պատեց սիրտերն Հայերուն ,  
 Ու գիւղացին բոլոր՝ թէ՛ Հայ թէ՛ Տաճիկ  
 Փոյթ քայլերով գիմեց բլուրն այն մօտիկ ,  
 Սաակած էր Գուրդն՝ որուն զէմքը զըժնդակ  
 Կը պատկերէր ոճիր մ'անկղ խայտառակ ,  
 Կարծես ճիւղ մըն էր եւ կամ նոյն խկ մահ .  
 Որ ժանտաժուա գաղանի պէս սովամահ՝  
 Իր անդգայ այդ գիւրքին մէջն այլանդակ  
 Կ'ուզէր մընալ իր որսին հետ միայնակ . . .  
 Բայց կուտական զէմքին վըրայ աղջըկան  
 Վրէժի մը սուրբ փառքը փայլէր յաղթական . . .  
 Ու վառ աչքեր յառած անթարթ գէպի վեր՝  
 Անբիծ սիրտէն մրմունջ մ'էին խնկանուէր . . .  
 — Անցան օրեր ու նեղութիւն , վիշտ հազար  
 Տըւին թուրքեր խեղճ Հայերուն անդադար . . .  
 « Զինուոր մ'էր Գուրդն — ըսին — զոր Հայկեալուներ  
 Բլուրին վըրայ գիւտամբ էին ըսպաններ : »  
 Բայց թէ ո՞վ էր այն խեղճ աղջիկն հոգեւորքի՝  
 Որ արարած մ'իբրև ոչինչ ու անարգ  
 Յանձնըւեցաւ զժըտխտ մօրկանն աղեկէլ՝  
 Որուն մի'ակ յոյսն էր՝ սիրո՛ւն վարդի՛ պէս . . .  
 Զի հարցուցին , անզուժնե՛րը . . . ո՞վ էր այն՝  
 Որ նըւրգած ինկած էր իբր անկենդան . . .  
 Սակայն աղջիկն , օր մը , դեռ նոր կազգուրուած  
 Ու սեւ քօղով ծածկած երեսն տօթիկում՝

Գաղքին ճամբան բռներ կ'երթար հեւ ի հեւ  
 Հորիզոնէն նոր բարձրացած դեռ արեւ :  
 Մըտաւ քաղաք Գիւցաղնուհին կարեւէր  
 Ո՛ւր բանտ նեառած էին գիւղէն շատ Հայեր . . .  
 Դիմեց իսկօյն դատաւորին անողոք՝  
 Սիրաը յուզուած , աչքերը վառ ու բորբոք . . .  
 « Սպաննողը ե՛ս եմ — ըսաւ — այն Գուրդին ,  
 Թո՛ղ սուր Հայերն . . . զուր տեղն ինչո՞ւ տանջը-  
 լին . . . »  
 Գուրդին կեանքը ե՛ս աշխարհէս վերցուցի .  
 Պատուոյս վըրէժն ի՛ր գաշոյնով լուծեցի . . .  
 Թո՛ղ սուր , կ'ըսեմ . Հայերն , ու զիս խրկէ բանտ ,  
 Ատօ՛վ , գոնէ , արդար ըլլայ դատաստանդ . . .  
 Զի դո՛նեցի՛ իմ պատիւս այդ վայրագին ,  
 Ա՛յդ փառք է ինձ , թող ես մեռնիմ խնդագին . . . :  
 — Այո՛ , ինքն էր պատուոյն պաշտպանն անվըկանդ ,  
 Որ պիղծ կեանքէն լաւ վարկած էր մահ կամ  
 բանտ . . .  
 Խեղճ աղջիկ մը , այրի կնոջ միամօր ,  
 Տըկար մօրկանն մի'ակ նեցուկն ամէն օր . . .  
 Բայց թէ ինչպէ՞ս ձեռքն ինկեր էր այդ Գուրդին . . .  
 — Ո՛հ , չեմ մոռնար պատմութիւնը վշտագին :  
 Ասկից տասնեակ տարի տառջ այն երկրին  
 Փըճացած էր մամոզջ ցորենն ու գարին ,  
 Սով կը սպառնար երաշտութիւնն ամէնուստ ,  
 Պաշարեր էր սարսափն աղքատ թէ հարուստ ,  
 Խեղճ գիւղացին չորցած հացի մ'էր կարօտ ,  
 Զօրցեր էին երկրին մարգերն ու արօտ :



Ձի, եզ ու կով կը մեռնէին անսընունդ,  
 Գիւղացիներ կը դաղթէին գունդագունդ:  
 Ա՛յն աարին էր. օր մը, դեռ չէր ծագած լոյս,  
 Խեղճ աղջիկը, չունենալով ո՛չ մէկ յոյս,  
 Գիւղին մօտիկ բլուրն էր գիմեր զողբջոտ՝  
 Օրապահիկ հաւաքելու քիչ մը խոտ:  
 (Ա՛յս էր սընունդն հէք աղքատիկ Հայերուն,  
 Մա՛նաւանդ, երբ սով կըսպառնար խեղճերուն)  
 Մայր ու աղջիկ մին աըկար, միւսն հիւանդոտ,  
 Չորս հինգ ամիս կերածնին էր միտայն խոտ...  
 Շա՛տ սիրուն էր դէմքը՝ դեղձոն մօզերով,  
 Սեւուկ աչքեր՝ կամար կապած յօնքերով,  
 Կարմիր այտեր, նըչանն Հայոց կոյսերուն,  
 Ու նարմանաղ հասակ երկար բարեմօյն...  
 Բայց խեղճն, ախո՛ս, դարձեր էր վարդ մը  
 թռչնած...

Կայտառ դէմքը հիւժէր էր չար այդ արկած...  
 — Սե՛ւ օր ո՛ւր այն բլուրն էր ելեր՝ անխձեալ՝  
 Թեղանն հաւքած թեւերուն վրայ ծալ ի ծալ,  
 Մենիկ մնջիկ ժողվէր փըշոտն այն բուսակ՝  
 Իբրև վայրի կանկաւ խոտի մը տեսակ:  
 Աղէտաբեր սակայն վայրկեանն էր հասած...  
 Ժանա՛նայուածքով՝ Բուրդ մ՛անդգամ, վայրայած՝  
 Սովալըլուկ ինչպէս դայլ մը իր օրսին,  
 Յարձակած էր վըրտն անմեղ այդ կոյսին...  
 Ահե՛ղ էր ժամն, առանձին վայրն, ինքն անզօր,  
 — Աստուած միտայն անձին պաշտպանն էր հըզօր -  
 Ճարը հատած՝ ա՛լ չողմեր էր այդ խեռն,  
 Ինչպէս Յուդիթ անապօրոյն Հողերեռն.

Ու խելայեղ Բուրդին տօփոտ վիճակէն  
 Օգարւելով, անոր գաչոյնը մէջքէն  
 Հաներ մըխեր էր կուրծքն անգութ սեղեխին՝  
 Որ կասաղի հըրնչիւնով իր սիրաին՝  
 Իսկոյն անչունչ դիտաւաւ էր ինկած՝  
 Անթոյր արիւնն իր սև ոճրին խառնըած:  
 Սակայն աղջիկն անաբեկած արիւնէն,  
 Ճիգ մ՛էր ըրած խոյս տալ դժոխք այն վայրէն...  
 Բայց զզլած ու քայլերով նըւաղուն՝  
 Բեան արիւնոտ՝ ինկած էր, հոն, քիչ հեռուն...  
 Արի՛ւն անարգ... զոր հարուածը վրիժհան  
 Վաղցուցեր էր կուրծքէն Բուրդին այն դատան:

\* \* \*

Ամիս մը ետքն, անձրևոտ օր մը աըխուր,  
 Անչուք գազաղ մը ծածկըւած սեւաթոյր,  
 Լըպիրչ կանանց բանաէն մէկ Հայ Տէրութրով  
 Եկեղեցին կը տարուէր խուլ երգերով...  
 Գեղջիուհի՛ն էր... չէ՛ր գիմացի տանջանքին...  
 Մեռե՛ր էր խեղճն հառաչներով ցաւաբին...  
 Յաջօրգ օրը, խեղճուկ կին մ՛ալ կարեվէր՝  
 Հողակոյսին վըրայ փուռած՝ կ՛արտասուէր...  
 Հէք աղջըկան մայրն էր՝ անօք ու թշուառ՝  
 Որ մէկ օր ետքն ինկաւ մեռաւ վշտահար...



## ԳՈՀԱՐՆ ՈՒ ՕՀԱՆԸ

( Երական գեպէ մը առնուած )

...Նըմանը կա՞ր իր գիւղին մէջ՝ Գոհարին ,  
 Նըմանն անոր նուրբ ու ճըկուն իրանին...  
 Իրա՛ւ, գիւղին անգին շողակն էր Գոհար ,  
 Լուսածաղիկ իբրեւ աստղիկ մը պայծառ :  
 Անթափանցիկ ճիկաին իջած շէկ մազեր  
 Գըլխուն վըրայ պըսակ մ'էին յօրիներ ,  
 Վառվառ աչքեր՝ բոցափայլ սեւ բիբերով  
 Ու հեղեղուած համակ պայծառ արեւով  
 Իրենց ծաւի նայուածքէն՝ լոյս սփռէին՝  
 Հըմայելով աչքերն ամէն նայողին :  
 Ժըպիա մ'անմեղ կը խաղար նուրբ բերնին վրայ :  
 Զեփիւռն ինչպէս ծաղկին վըրայ կը սուրայ ,  
 Ու հիւսկէններն ոսկեփնջիկ վարսերուն՝  
 Աւեճըփիկ ինկած վըրան ուսերուն՝  
 Հընչաակի մը կը փոխէին գէժքն անոր՝  
 Իր նորածին գեղոյն տալով փայլ մը նոր :  
 Հազիւ թէ կար ա'ն տանըճինդ տարեկան .  
 Լուս հովաի մէջ ծըլած վայրի մի շուշան ,

Որուն վըրայ պլպուէլ գեռ չէ՛ր գայլայէր ,  
 Որուն ծանօթ չէ՛ր ասկաւին՝ ի՞նչ է սեր...  
 Բայց օր մը , երբ լի՛ ջուրով կուժն իր ուսին՝  
 Տուն կը գառնար աղբիւրէն՝ մօտը գիւղին ,  
 Սիրահար աչք մ'իրեն զըպաւ նեաի պէս...  
 Զայն մը մնջեց... — « Ա՛խ , Գոհար , զիս կը սիրե՞ս... »  
 Դողաց խեղճը... կտրնցուց ուշն ու ուժը...  
 Ինկաւ ուսէն , ջախջախուեցաւ իր կուժը...  
 Բայց հիտաթափ ոտք ելաւ ու վազն ի վազ՝  
 Սրաի գողով իր տունն հասաւ հաղիւ հաղ .  
 Հինգ տարի կար , մեռած էր հայրն աղջըկան ,  
 Բայց պապը ծեր կը դուրգուրար իր վըրան ,  
 Մօյրը ասողջ , չորս զաւկի տէր ու կայտառ՝  
 Գոհարին վրայ քանի՛ նայէր կը դողար...  
 « — Էրնէ՛կ անոնց — կ'ըսէր — որ չ'էն խորտիկ ,  
 Խորտա աղջիկ Քրդին ճանկին է մօտիկ : »  
 Երբոր տեսաւ աղջիկն անմեղ շլմորած՝  
 Դողաց խեղճը... Հ'ըլլա՞յ բան մ'էր պատահած...  
 « — Ա՛խ , ի՛նչ ունիս , դուրպան , ինչի՞ ես գեղներ...  
 Ի՞նչ եղաւ քեզ » — հարցուց անոր գէժքն ի վեր :  
 « — Դէ՛ , մայրիկ ջան , գէ՛ , բան չիկա՛յ մի վախեր...  
 Երբ աղբիւրէն տուն գառնայի գարն ի վեր  
 կուժը ուսէս թապլեցաւ ու ինկաւ վար...  
 Էս վախեցի . ընկայ է՛ս տեղ դողահար : »  
 « — Էտիկ դա՞րդ է... ի՞նչ կայ էգտեղ վախելիք... » —  
 Բաւա մայրը ու ամանով ջուրը լի՛ք ,  
 Խմցուց անոր որ անցնին դողն ու սարսափ՝  
 Երկու այտերն համբուրելով սիրատարի :



Բայց խեղճ աղջիկն ամբողջ գիշեր չ'եղաւ քուն ,  
 Ծագեր էր լոյսն ու գեռ Գոհարն էր արթուն ...  
 Իր ականջին գեռ մնջէր ձայնը կարծես ...  
 Միշտ նոյն ձայնը ... « Ա'խ Գոհար զիս կը սիրե՞ս ... »  
 Կոյս սիրաին մէջ կոյս սիրոյ կայծն էր վառուեր ...  
 Հէք գեղջկուհին ա'լ իր անձին տէրը չէ'ր ...  
 Կրնա՞ր ըսել — « քեզ կը սիրեմ կեանքիս պէս ... »  
 Ահա' , ինչ որ կը ճմլէր սիրան ազէկէզ :  
 Առաւօտեան փըջէր զեփիւռն հեշտաբոյր ,  
 Կուժ մը առաւ , ուղղըւեցաւ դէպ աղբիւր ,  
 Սարին վերէն արև ծագէր բոցափառ  
 Ու զեղջկուհւոյն սիրան էր համակ սիրաւառ :  
 Գողձօջ քայլով ելաւ վերելքն այն սարին ,  
 Տեսաւ ցանցիբ հո'ն բեկորներն իր կուժին ,  
 Լըսեց կրկին իր սիրաին մէջ սիրակէզ  
 Նոյն ձայնն հըզօր — « Ա'խ , Գոհար , զիս կը սիրե՞ս ... »  
 Ու խօլ վազքով ձորակն իջաւ դարն ի վար ,  
 Ուր առաբւան թռչունները թեւադարձ  
 Աղբիւրէն մօտ ուսնեաց վրայ խոյացիկ՝  
 Սիրատարիիկ ճուղէին երգեցիկ :  
 Հո'ն , քիչ հեռուն , բարձրաբերձ զոյգ սօսիներ՝  
 Սաղարգազարդ իրենց սիրուն կատարներ  
 Տատանելով սիրասլացիկ զեփիւռէն՝  
 Կարծես զերար կը գրկէին մեղմօրէն :  
 Գեղջկուհիներ եկած էին կանուխէն՝  
 Լեցնելու իրենց կուժերն աղբիւրէն ,  
 -- Ժամագրավայր են աղբիւրներ Գիւղացւոյն ,  
 Հո'ն հաւքը-ին առաւօտ թէ՛ իրիկուն ,

Հո'ն կատարուին իրենց է'ն լուրջ խորհուրդներ ,  
 Հո'ն կը արուին նաև սիրոյ խօսքիւսներ—  
 Ամբիժ աղջիկն , հո'ն , սրտայոյզ՝ իր կուժը  
 Լեցուց ջուրով՝ ամփոփելով իր ուշը ...  
 Բայց գեղեւեց նոյն վայրերէն հեռանալ ,  
 Կ'ուզէր լըսել , ա'հ , նոյն ձայնը անգամ մ'ալ ,  
 Կ'ուզէր ըսել թէ՛ կը սիրե՞ր ... հողւոյն պէս ...  
 Ու աչքերը դարձնելով դէն ու դէս՝  
 Առաւ կուժը ճամբ ան բռնեց գիւղակին ,  
 Հասաւ գլուխը խորհրդաւոր այն դարին .  
 Հո'ն քիչ հեռուն երթատարդ մ'էր կանգնած  
 Ծի'չդ ա'յն անգուկն՝ ուր ջուրին կուժն էր կոտրած :  
 Սարսուց աղջիկն ու մաղ մընաց կուժն իյնար ...  
 Բայց սիրա ըրաւ ... վերցուց ուսէն դրաւ վար :  
 Երկու սիրակեր հոն կապուեցան իրարու ,  
 Աչք նեակեցին միմեանց վըրայ սիրարկու ...  
 Ձայնը մնջեց — Ա'խ , Գոհար , զիս կը սիրե՞ս ...  
 — Կը սիրե՞մ քեզ ... կուգաս , կ'ուզե՞ս զիս պապէս ...  
 Սէ՛ր երկնային ... կոյս սիրակերու ս'վ սուրբ Սէր ...  
 Հայ գեղջուկին Գու Գրո'ջմն ես սրբանուէր :  
 Հինդ օր ետքը , երբ լուսացաւ Կիրակին ,  
 Տէրաէրն եկաւ նըչան գըրաւ Գոհարին :  
 Զոյգ առտրակներ էին Գոհարն ու Օհան ,  
 Մէկը քնքոյշ մարի՝ միւսը վարուժան :  
 Օհան՝ գիւղին բէս Սաղօին աըղեկն էր ,  
 Սիրուն հասակ , դանդաւր մազեր , սև աչքեր ,  
 Տատնըինը դարուն հազիւ բոլորած՝  
 Գուռ գրացւոյն էն սիրելին է'ր եղած :



Հայրն հարուստ էր, պատկանելի ամենուն,  
 Իր տանն օջախը չէր մարեր օրն ի բուն,  
 Հարսներ թոռներ թովըռային իր չորս դին,  
 Բաց էր իր գուռն աղքատին թէ հարուստին:  
 Այլ ըէս Սագօն ա՛լ ինկած էր ալեւոր,  
 Կեանքը իրմէն ա՛լ խոյս կուտար օրէ օր,  
 Կուղէր շուտով պաղանել պըստին Օհանին,  
 Իր է՛ն սիրուն, է՛ն զեղեցիկ այս զաւկին...  
 Բայց Հայերն, ա՛խ, մա՛նաւանդ Հայ զիւզացիք  
 Միթէ օր մը ունեցե՞ր են զեղեցիկ...  
 Հայ զիւզացւոյն հարսն, աղջիկն եզն ու գաւար  
 Անգութ Քուրդին բուռնցքին տակն են աւար...  
 Իրա՛ւ «էրնէ՛կ անոնց՝ որ չե՛ն խորոտիկ,  
 Խորոտ աղջիկ Քրդին ճանկին է մօտիկ...»  
 —Նըչանտուքի օրէն ամիս մ՛էր անցեր  
 Ու հարսնիքին տասնըհինգ օր մընացեր,  
 Ա՛լ երջանիկ էին Գոհարն ու Օհան,  
 Իրարու վրայ իրենց սէրն էր անսահման...  
 Օր մը, յա՛նկարձ, զեռ կանուխ էր, երբ առաւուն՝  
 Գիւղին շուրջը ինկաւ մի մեծ վայնասուն.  
 Բըսանի չափ զինուած քուրդի մը հրոսակ  
 Պաշարեր էր զիւղին ծանօթն այն ձորակ  
 Ու հրազինուց պայթիւնները անդադար՝  
 Ամբողջ զիւղին կը սպառնային մահ, աւար:  
 Սոսկում պատեց Գոհարին Պապն ու մայրը,  
 Աղբի՛ւրն էր վա՛հ, իրենց քնքոյշ Գոհարը...  
 Հալւոր ծերուկն՝ ոտքը բոպիկ գլուխը բաց,  
 Աչքն արցունքոտ, ձեռքերն գլխուն կպցուցած,

Ուղեց երթալ, զտնել Գոհարն իր անդին՝  
 Բայց շեմին վրայ ինկաւ թշուառ ծերուհին...  
 Հեկեկ ձայներ կը լսուէին ամեն սեղ...  
 Տուն ու փողոց միեւնոյն ձայն էր անեղ...  
 «—Տարին... տարին... տարին Գոհարը Քրդեր...  
 Ա՛խ... վա՛խ, Գոհար... տարա՛ւ քեզ Քուրդն արուեսեր...  
 Խեղճ պապիկին հուսկ ձայնն եղաւ — վա՛խ, Գոհար...  
 Տըւաւ հողին... արցունքն աչքին կը շողա՛ր...  
 Իսկ դժբախտ մօրն ո՞վ զիմանալ կարող էր  
 Գալարումի՛ն... խեղճին լեղան էր կապուեր:  
 Վայնասուն մ՛ալ բրդաւ անդին, հեռուէն,  
 Ձիվան կարիճ մ՛իսկած Քուրդին գնդակէն՝  
 Կը բերէին լալահատաչ ձորն ի վեր...  
 — Հա՛րկ է ըսել — այն դժբախտն ալ Օհանն էր...  
 Յարձակեր էր Քուրդերուն վրայ խենդի պէս՝  
 Պաշտպանելու հողւոյն Գոհարն աղեկեղ...  
 Ճակատն գնդակ մը փռա՛ծ էր զինք գետին՝  
 Աչքին առջեւն իր սիրական Գոհարին...  
 Ճակատէն արիւնը կը հոսէր գետի պէս...  
 Գոչէ՛ր արիւնն — « Ա՛խ, Գոհար, զիս կը օրերես »  
 Ու երկու տուն մէկ ժամուան մէջ ցիւրուցան  
 Վայրագ Քուրդին զոհերն եղան յաւխտա՛ն...  
 Վառ օջախն ալ մարեցա՛ւ ըէս Սագօին,  
 Ամիս չանցած խեղճը արւին սեւ հողին...  
 Ձորն այն օրէն անուանեցաւ ՍԵՒ ԱՂԻԻԻՐ  
 Ուր թափուեցան արիւն արցունք հազար, բիւր:



### ԱՆՅԵԱՒՆ ՈՒ ՆԵՐԿԱՆ

(Ունայտնից)

Երջանի՛կ օրեր, ու՛ր Մայր Հայաստան  
 Պանծալի փանքով պճնէր Հայ Ոստան,  
 Հայուն վեհ դէմքէն սէր, դուրս կը կաթէր,  
 Վատին դէմ մի՛այն իր սիրտն երկաթ էր :  
 Թշուառին հանդէպ չէ՛ր վարուեր յամբոյր ( 1 ),  
 Հայն Հայուն կուտար Միտ թեան համբոյր :  
 Զարն հալածելու ո՛չ մին զեղեւէր,  
 Ամէն ծանր լուծ իրեն թեթեւ էր :  
 Ազգերու առջեւ ունէր Հայն համբու,  
 Հասար ամէնուն բարիքն էր անբաւ :  
 Փոքրիկ մանուկն իսկ Սէ՛ր կը թոթովէր,  
 Հայրենեաց աւիւն սիրտեր կը թովէր :  
 Ամէն բան երկրին մէջ ունէր համ, բոյր՝  
 Զիկա՛ր երբէք մէկն ըլլար անհամբոյր :  
 Երկիրն ու երկիր ժըպիտ մ՛ունէին՝  
 Զի հայերն համայն բարեմոյն էին :  
 Հայն իր հաւատքով՝ բոլոր սա սըւած  
 Բարիքին համար կ՛օրհնէր միշտ զԱստուած,  
 Զի սուրբ հաւատքէ բարիք կը բուսնի,


( 1 ) Անուշադիտ կերպով :

Սուրբ հաւատքն իրեն սիրոյ բոյն ունի,  
 Անով դժուարինն իսկ զիւր կ'աւարտի,  
 Ա՛ն կապէ ճակատի պըսակը վարդի :  
 Ո՛վ չ'ունի հաւատք՝ ա՛ն է միշտ թշուառ՝  
 Սիրոյ ձայնն ըզգալ՝ անոր է դժուար ... —  
 Հիմայ նայէ՛ Հայ զեհիթէն ու տե՛ս՝  
 Թշուառութիւնն է տիրեր դէն ու դէս ...  
 Բուրդն ու թուրք Հայը միշտ յափշտակեն,  
 Մերկացընեն զինքն իր հուսկ փըշտակէն, ( 1 )  
 Հարս, աղջիկ Բուրդին ո՛րս են թէ՛ դերի,  
 — Վա՛յ, որ դաշտերը մենիկ զեզերը ... —  
 Բայց չե՛նք խորհիւր ի՞նչ է պատճառն ասոր ...  
 Թէ է՛ր կը տանջուինք չարաչար այսօր ...  
 Կեղծիք մ'է դարձեր հաւատքն ամէնուս,  
 Ամէնուս սիրտէն վերցեր ամէն յոյս ...  
 Սէրն եղեր մեր մէջ միշտ շահու աղբուր,  
 Որու՛ն հող թէ Հայն հառաչէ ա՛յս բիւր ...  
 Ու թո՛ղ Հայաստան՝ դժբա՛խտ Թագունին՝  
 Լա՛յ՝ թէ կորսնցուց իրեն թագը հին ...  
 Լա՛նք մենք ալ մինչեւ խիղճէ ազգըւած՝  
 Հաւատա՛նք անկեղծ՝ թէ կա՛յ մի Աստուած,  
 Թէ Ա՛ն է մեր հուսկ պպաւէնն անքոյթ,  
 Թէ Ա՛ն կործանէ Փարաւոնն անգութ,  
 Ա՛ն է որ շարժէ զաշխարհ եւրոպէ,  
 Հըրաչք կը գործէ օր, ժամ եւ րոպէ :

( 1 ) Դանկ, մանղըր



## ՄՐՏԻ ՅԱՒԵՐ ԱՌ ԱՐԵԻ



« Ha, Wies in meinem Herzen reiszt ! »

( GCETHE )

« Ո՛հ, ի՞նչպէս սիրս կը մտնո՞ւմքի... »

( Կէթէ )

Ո՛հ, կը մորմոքի սիրաբա բոցակէզ,  
Երբ Արեւն, առտուն, կարմիր լուսաղէս՝  
Շող մը կ'արձակէ ճակատիս մըռայլած  
Ու կարօտավառ աչքերուս գիմաց  
Կը պարզէ յուշքերն Մայր Հայրենիքի...

Հողի՛ս կը քաղուի,  
Սիրաբա կեղեքուի :

Վառուած է սիրաբա հո՞մ վիշտերու մէջ,  
Ինձ՝ իմ Հայրենիքս հուր, բոց մ'է անշէջ,

Արե՛ւ, որ ծագիս Հայոց լեռներէն՝  
Պակսեցո՛ւր բան մը հողւոյս վերքերէն  
Որ ինձ մոսցընէ վիշտերս երէկի...

Հողի՛ս կը քաղուի,  
Սիրաբա կեղեքուի :

Հայ լեռներուն վրայ Գուն սէր ես, Արե՛ւ,  
Է՛ր խիստ կը ծագես, հո՛ս, գլխուս վերեւ...  
Մասեաց բարձունքէն չողերդ մինչեւ հո՛ս՝  
Սորչակ կը դառնան հողւոյս վշտակո՞ծ,  
Նոր ցաւ, նոր աղէտ բանան նոր վէրքի...

Հողի՛ս կը քաղուի,  
Սիրաբա կեղեքուի :

Ա՛հ, ի՛նչ գժբախտ եմ... Հայրենիքէ զուրկ՝  
Շուրջս են պաշարեր հողիներ ըստրուկ...  
Գո՛նէ գտնայի՛ հոս սիրոյ ողջոյն...  
Ո՛չ... խեղճ է տիրեր սիրահրն ամէնուն...  
Զինուած են ամէնքն ընդդէմ ամէնքի...

Հողի՛ս կը քաղուի,  
Սիրաբա կեղեքուի :

Կարծես թէ փուշ եմ ամէնուն աչքին...  
Կամ ըստրուկ մ'իրենց անիրաւ կամքին...  
Սուտն իրենց՝ իրաւ, իրենց սիրտն է սնւ,  
Կ'ուզեն որ մարի իմ կեանքիս արեւ...  
Ա՛հ, ա՛յսպէս, օրերս արուած հոսանքի՝

Հողի՛ս կը քաղուի,  
Սիրաբա կեղեքուի :



Ա՛րև, Դուն գիտե՛ս, օրերըս գարնան  
 Հազար ցաւերով սահեցան, անցան...  
 Դարման չի զըսայ ամրան օրերուս,  
 Ինձ անէ՛ծք մ'եղար, զարկիր իմ գլխուս...  
 Ա՛յ ձըմեռս եկաւ, հեռացի՛ր մէկդի... .

Հողի՛ս թո՛ղ քաղուի,  
 Սիրալըս կեղեքուի:

Բայց որքա՛ն ապրիմ՝ ձըմեռն այս կեանքիս՝  
 Որքա՛ն թաւալիմ մէջն այս հոսանքիս,  
 Որքա՛ն տրոփէ սիրտս՝ առտու, իրիկուն,  
 Գիտցի՛ր թէ անէ՛ծք մ'ես հոս ինձի Դուն...  
 Զի բացած վարդերդ ուրիշին տըւիր,  
 Միայն փուշերն ինձ բաժին հանեցիր... .

Հողիս քաղեցի՛ր...  
 Սիրալըս մեռուցի՛ր... .

## ՍԵՒ ՕՐԵՐ

Կրնա՞մ ես մոռնալ... ա՛հ, սե՛ւ ժամ, սե՛ւ օր...  
 Ո՛ւր լեռներ, դաշտեր, սարեր սրբաւոր  
 Ողբային տըխուր դժբախտն Հայաստան՝  
 Երբ Անոր փառքին մարիլը տեսան...  
 Ահա ո՛ր էր ժամն, ահե՛ղ էր վայրկեանն...  
 Ո՛հ, կրնա՞մ մոռնալ, ի՞նչ սեւ օր էր ան:

Երբ առտուն երկինքն ամպեր չողային  
 Խառնուրդին նըման վարդին, շուշանին,  
 Կրնա՞մ ես մոռնալ այն օրը տըխուր՝  
 Ու՛ր անդութ ձեռքեր առած սուր ու թուր  
 Երկինք հանեցին շոյիներ արեան...  
 Յիշեցէ՛ք, հայեր, ի՞նչ սեւ օր էր ան:



Ի՞նչ սև օր էր ան, երբ ձիւնը ձմրան  
 Դաշտերուն վրայ սփռած իր սաւան՝  
 Դեղնոտ արեւով փայլէր պըսպըղուն  
 Ու կարմրով արեան առած ծիրան գոյն՝  
 Շողի կը հանէր շրղարչի նրման . . .  
 Կ'ոլորուէր երկինք . . . Ի՞նչ սև օր էր ան :

Ու մոռնա՞մ լալկան այն ուռնիներն՝  
 Որ սըգատերև օրրելով ոստերն՝  
 Նրման հերարձակ լացող կոյսերու՝  
 Կը հեծեճէին շուրջը շամբերու . . .  
 Իրե՞նք ալ, կարծես, զոհերն այն օրուան՝  
 Սառ կարած էին . . . Ի՞նչ սև օր էր ան :

Ա՛հ, ինչպէ՛ս մոռնամ դժբախտ այն հարսներ՝  
 Որ ալեճըփիկ վարսից հիւսկէններ՝  
 Փետտելով իրենց սիրելեաց գլխուն՝  
 Դիակներն անոնց լային գալարուն . . .  
 Ճա՛ւն էր անորակ, վիշտն էր անսահման . . .  
 Թո՛ղ երկինք ըսեն, ի՞նչ սև օր էր ան :

Երբօր բարձրացան բոցերու ամպեր,  
 Դարձուցին մոխիր տուներ, Տաճարներ . . .  
 Երբ հարսն իր ամուլն ու մայրն իր դաւակ  
 Տեսան զխապաստ քուրդ ոտքերուն տակ,  
 Երբ որոտացին գնդակն ու հրացան,  
 Ինչպէ՛ս չը յիշեմ . . . Ի՞նչ սև օր էր ան :

Ու ճըւճըւուկն ալ անաէր որբերուն  
 Երբ արձագանգեց Հայոց լեռներուն,  
 Երբ հրեշտակի պէս ամբիժ մանուկներ,  
 Վարդերու, կարծես, քնքոյշ կոկոններ, --  
 Իրենց մօր ծոցէն գեախն թափուեցան . . .  
 Կրնա՞յ մարդ մոռնալ . . . Ի՞նչ սև օր էր ան :

Բայց Դուն, Աստու՛ած իմ, տեսար այս ամէնն,  
 Տեսար, գիտեցիր Երկնից բարձունքէն,  
 Ու չի շարժեցի՛ր Բազուկդ Աստուածեան,  
 Թողուցիր անլոյժ վըրէժն Հայ արեան . . .  
 Անցան, սահեցան երկար տարիներ,  
 Սակայն Հայուն զեռ չանցա՛ն սև օրեր . . .  
 Սև օրեր չանցա՛ն թշուառ Հայութեան,  
 Աստու՛ած, չե՛ս յիշեր, ի՞նչ սև օր էր ան :



ԵՐԿՈՒ ՀԱՅ ՀԱՐՍՆԵՐԸ

( յեզև ցտկույ )

Տասնըութին ան գիշերն էր տխրամոյն՝  
Ո՛ւր Հոկտեմբերն անձրևուտ, ցուրտ ու տըմոյն  
Երկնից աստղերը ծածկած էր թուխ ամպերով,  
Մինչ Լուսինն ալ, սեւասքողուած, սարսափով  
Մեղամաղձոտ լուսով մ'երկնից երեսէն  
Փախչել կ'ուզէր Պինկէօլ լերանց ետեւէն :

Լուռ էր քաղաքն ողջոյն ու մութ ամէն տուն,  
Բայց լսուէին ողորմ ձայներ քիչ հեռուն —  
Դըժոխալուր կոտորածին սեւ օրուան  
Դիշերն էր ա՛ն՝ մօտ հազիւ կէս գիշերուան .  
Անշուշտ քաղքին մէկ անկիւնն՝ ո՛չ շատ հեռուն՝  
Կը թափէին արիւնն անմեղ Հայերուն —

Անհետացաւ լուսինն ու խոր պատեց մութ...  
Լալ ըսկըսան երկինք ի սես այն անգութ  
Ոճիբներուն՝ որ Հայն աւեր դարձուցին՝  
Չ'անխայելով անոր կոծին ու լացին  
Չորս կողմս ալ մութ... պատեր էր մո՛ւթն յաւիտեանց .  
Մո՛ւթ խորհուրդներ, թշուառութեան մո՛ւթն անանց,  
Մո՛ւթ յոյսեր, մո՛ւթ, ապագայի մո՛ւթ օրեր...  
Ամէն բան մո՛ւթ... ա՛ն, լոյսն ալ մո՛ւթ կը ծագէր...

Ա՛լ չի դողրաւ արցունքն անքուն աչքերէս,  
Ու առգորուած վիշտերուս մէջ սրտակէզ՝  
Երբ մութին մէջ վարանէի կեղակարծ՝  
Սրտաճմրկի ձայներ դուրսէն յեղակարծ՝  
«—Աստուած սիրէք— պոռչըտեցին մէկ բերան—  
Աստուած սիրէք, եկէ՛ք, հասէ՛ք օգնութեան :»

Շըւարեցայ... թողուցի վիշտն ու սարսափ,  
Դուրս վազեցի, մութերու մէջ, առ խարխափ,  
Եւ... Աստուած իմ, ի՞նչ տեսարան անաւոր...  
Հարիւրապետ մ'ու խըժագէմ չորս զինուոր  
Երկու Հայ կին՝ հերարձակ ու գեղեցիկ,  
Կը տանէին քաջբըշելով բռնաձիգ...  
Բոկոտն՝ ու քա՛յլ մ'իսկ առնելու անկարող,  
Տղմաթաթաւ, վայրավատին, սիրա ի դող,  
Երբ զիս տեսան՝ խեղճերն ինկան նըւաղած,  
Կենդանութեան ցոյց չի տալով ո՛չ մի կայծ...



Մըմբաշունչ մըշուչ մ'առած էր չորս զին,  
 Ասարւան մօտ, աչնան սոտուան մը մըթին,  
 Լո՛ւս էր ամէն կողմ, քողաքն ալ սրգազգած,  
 Կարծես համակ սև քողերով էր պատած:  
 Խեռ խուժանին բացուեր էր լո՛կ սոպարէզ,  
 Հայն իր տան մէջ սուգն էր պատեր աղեկէզ...  
 Զի հնչեցին զանգակները Տաճարին  
 Օրհներգ ձայներն ալ լըոեցին աւօտին...

Լըպիւրչ զօրքերն արիւնըռուչտ ու վայրազ՝  
 Փորձ մը ըրին յանկարծ վըբաս տալ յարձակ,  
 Բայց ես խիզախ ձայնով մ'անոնց — «Ո՛ւր — ըսի —  
 Այս խեղճերը կը քաշքըչէք բըրընցի...»:  
 Հարիւրապետն՝ որ սակայն չէ՛ր անձանօթ,  
 Մածկել ուզեց իր այս ոճիւրն ու ամօթ,  
 Ըսաւ — «Փողոցն էին փախած ահաբեկ,  
 Մեր հետն առինք՝ որ անվըտանդ տուն յանձնենք»:  
 — «Թողէք — ըսի — ես կը յանձնեմ Տէրտիրուն»  
 Որ տանի տայ իւրաքանչիւրն իր տիրուն»  
 — «Խընզի՛ր կեալուր» մը մըթմըթաց զայրոյթէն  
 Ու կորագլուխ առաւ քալեց այն տեղէն:

Կոչել արւի Տէրաէրն խկոյն իր խուցէն  
 Ու խեղճերը վերցընելով փողոցէն՝  
 Փոխադրեցի զանոնք տեղ մը ապանով,  
 Ուր կազդուրուան տակաւ, պատչաճ խընամքով:

Բայց զեսարոյս այդ անմեղներն ո՛յք էին՝  
 Որ ճանկն ինչած այդ անողօք դաղանին,  
 Խըթղըթաբար քաշքըչուէին հերարձակ՝  
 Իբրև զո՛նի պատրաստըւած զըւարակ... —  
 Ահա՛ ինչ որ ինձ պատմեցին կէտ առ կէտ՝  
 Որուն սոսկմամբ ունկնդրեցի ակընդէս:

— Երկու եղբօր կիներն էին այդ զոհեր,  
 Որոնց կեանքի զարուն շիւ նոր էր ծաղկէր,  
 Նոր հարս էին երկուքն ալ նոյն այն տարուան,  
 Մին տասնըութ տարեկան՝ միւսը քըսան:  
 Մէկ տան երկուքն ալ զեղեցիկ սասարակներ,  
 Բարեսոճմիկ լուրջ՝ ընտանեաց մը զարդեր,  
 Հովանւոյն տակ ըսկեսրայր մ'եւ ըսկեսրոջ՝  
 Նորաստեղծիկ ծաղիկներու զայդ բողբոջ՝  
 Երկու եղբարց սիրոյն եւեթ նը իբուած՝  
 Հայ ինքնատիպ կեանքով մ'էին զարդացած:

Կոտորածին առաուն երկու եղբայրներ,  
 Երբ անդիտակ օրուան զէպքին՝ անվիհեր  
 Կ'երթան կանուխ ընել իրենց տուրեաւ՝  
 Ա՛լ իրիկունն իրենց տունը չեն գտնար:  
 Զարդեր հազար եղան այն օրն աղեկաուր,  
 Քաղքին չորս կողմը շողացին սուրն ու թուր...  
 Աստուած՝ զիտէր թէ կարիճներն այն երկու  
 Ո՞ղջ թէ զոհերն էին եղած թուրքերու...



Երկու հարսներն եւ ըսկեսուր, ըսկեսրայր  
 Ինկեր էին մորմոքներու մէջ հազար —  
 Ծընողքն իրենց լացեր էին ջիւաններ,  
 Իսկ խեղճ հարսերն իրենց սիրտին հատորներ...  
 Երբ տանը գուռն, յա՛նկարձ, մօտ կէս գիշերին,  
 Զարկեր էին հարուածներով ահագին:  
 Բանայի՛ն գուռն... որո՞նք էին որ այնպէս  
 Ուժգին կերպով գուռ դարնէին՝ մանել ներս...  
 Սիրելիներն... որոնք գուցէ հազիւ հազ  
 Պատե՛հ մի ժամ զըտած՝ իսկոյն վազն ի վազ՝  
 Մեծ խուճապով վերադարձեր էին տուն՝  
 Փարստելու կասկածները խեղճերուն...  
 — «Ո՛վ էք — հարցեր էին ներսէն — ի՞նչ կ'ուզէք...»  
 — «Հասան Աղա — ձայն մ'ըսեր էր — շուտ բացէք,  
 Բացէ՛ք, կկեր ենք ձեր տունը պաշտպանել,  
 Անձանօթներ հի՛մայ կուգան թալանել...»:  
 Ճանչցեր էին խեղճերն Հասան Եիւզ-Բաշին,  
 Ճանչցեր էին այն բարեկամն Օննիկին՝ (\* )  
 Որ շատ անգամ տուն կը բերէր, կը շահէր՝  
 Իբրեւ թէ միշտ իրեն անձին պաշտպանն էր:  
 Բայց թուրքը ե՛րբ անկեղծ կղեր է Հայուն,  
 Ե՛րբ թուրքն անմեղ մը չէ՛՝ զոհեր իր շահուն... —  
 Թուրք տարրին այս նկարագիրն անգիտակ՝  
 Խեղճերն իսկոյն բացեր էին տան դռնակ

(\* ) Երկու եղբայրներէն մին:

Հասան զոնէն սողակէր էր օձի նման,  
 Ժպտուն գէմքով վեր տանելով քիճկնակ,  
 Պարզամիտներն եղեր էին ապահով՝  
 Թէ պաշտպաններ կկեր էին իրենց քով...  
 Ու զոնէն գուրս՝ սուրերով չորս զինուորներ,  
 Իբրեւ պահակ ժամերո՛վ են սպասեր,  
 Բայց քիչ յետոյ վար տանելով զիմակը՝  
 Խոժոս գէմքով ցոյց էր արւեր դանակը...  
 Զարչըրկիւով տանէր զժբախտ ծերունին  
 Տեղը ցոյց աւլ իր գոյքերուն թանկագին,  
 Կողոպտակ էր անդուժն ինչ որ տան մէջ կար,  
 Արծաթ, սակի սպասներ, զըբամ ու զոճար...  
 Խեղճ պատուին ալ սաքն ու ձեռքը կապելով՝  
 Թողեր էր որ հողին ելնէ հեալով՝  
 — Սրտածմլիկ ձայներն էին վայնասուն՝  
 Զոր գիշերանց լըսեր էի ես հետուն —  
 Գո՛հ չէ՛ր կղեր սակայն գողանն այսքանին...  
 Գոհացում մ'ալ սալ ուղեր էր չար կիրքին...  
 Պահանջեր էր անսովթը քիչ մ'օղի,  
 Որ ֆեյվ ընէ հարսնէրուն հեա քով քովի,  
 Բայց անմեղներն ամփոփելով իրենց ուշ՝  
 Գիտցեր են թէ գէ՛մ գընելու չ'ունին ուժ,  
 — «Աստուած» — ըսեր են երկուքն ալ վառ սրտով,  
 Դուրս են ելեր օղի բերել կեղծելով...  
 Խօսք ըրեր են պատուհանէն վար նեաուրի՝  
 Մին անվեհեր՝ սակայն միւսը գեռ ջահիլ՝  
 Փողոց նայեր ու սարսափած բարձունքէն՝  
 Ուղեր է ես կենալ յանդուզն արարքէն...



Բայց մեծ հարսը դրկելով զինքն առնաբար՝  
 Անմիջապէս զըլորեր է վերէն վար,  
 Ու ետէն ինքն ալ փողոց նետուելով՝  
 Կարծեր են թէ ա՛լ աղատ են այսպէսով . . .  
 Հոն քիչ մ'ատեն մընացեր են ուշաթափ,  
 Ու փախուստի կորուսեր են ուժ ու թափ :  
 — Ա՛ն, Հայ կընծջ մեծ է հաւատքն առ Աստուած . . .  
 Սուրին զէմ իսկ իր պատիւնն է պաշտպանած,  
 Հարիւրներով զիտեմ այսպէս անմեղներ՝  
 Որոնք պատուոյ համար անձերն են զոհեր . . . —

Ա՛լ վատչուէրն իր որսերէն յուսահատ,  
 Խուզարկելով սան մէջ զանոնք անընդհատ՝  
 Շան պէս կատղած գազանային զայրութէն՝  
 Դուրս էր ելեր հաղճեպով մը տան դռնէն,  
 Ու զէս ու զէն փնտրուելով զայրազին՝  
 Տեսեր էր, հո՛ն մէկ անկիւնը փողոցին՝  
 Զոյ՛ք անմեղներն որ իրարու փաթթըւած՝  
 Իրենց մահուան կը սպասէին անկասկած . . .  
 Գամբռի նրման յարձակեր էր վըրահին,  
 Զ՛էր խղճացեր անոնց մարմնում վիճակին,  
 Ու խըժաբար հարուած տալով անխընայ՝  
 Բերէր էր հո՛ն ուր որ զանոնք ես տեսայ . . .  
 Անզգամին չի տոկալով բռնութեան,  
 Ու ճնշուած բռունցքի ներքեւ խըժական՝

Հո՛ն ուր մտ էր եկեղեցին Հայերուն՝  
 Գոչեր էին՝ որ դան հասնին յօղնութիւն . . .  
 Աներեսին նըպատակն էր՝ լոյս չեղած՝  
 Խեղճ զոհերը տանիլ իր որջն անիծած,  
 Կորսընցընել անոնց հեռքերն յաւիտեան . . .  
 Եւ ո՛վ էր որ պիտի ընէր դատաստան . . .  
 Թուրքն ազատ էր ուզածն ընել Կեալուրին . . .  
 Ա՛յս էր հրամանն անշուշտ մեր Grand-Saigneurին . . .  
 Սակայն խեղճերն ազատեցան Գազանէն,  
 Ան իր պատիժն յանկարծ զըտաւ քիչ օրէն . . . —  
 «Ա՛հն անմեղին մ'առներ — կ'ըսէ առածը —  
 Շո՛ւտ կը հանէ զայն Երկինքի Աստուածը» —  
 Հրոսախումբ մը հալածելու էր գացեր,  
 Սասկեցուցին զինքն հերոսին գնդակներ :

Աստու եղաւ . . . ձիւն կը տեղար բարդ ի բարդ,  
 Յուրան էր ուժգին ու հողմն ու սիրտս անհանդարտ . . .  
 Խեղճ հարսնիւրը յանձնեցի տան տէրութիւն՝  
 Խնդրելով որ խընամք տանին առանձին՝  
 Մինչեւ տեսնել՝ թէ ի՛նչ կ'ըլլայ ապագան  
 Ու խեղճերուն դանել ազգու մի պարման . . .



— Դադրեր էին կոտորածին աւերներ,  
 Հայ զոհերուն կը գրուէին հաշիւներ,  
 — Տասնի տեղ մէկ, կամ, հարիւրին տեղ յիսուն՝  
 Պաշտօնական հաշիւն ա՛յս էր թուրքերուն—  
 Հայ թաղերը պաշտօնեաներ մասնաւոր  
 Ման կուղային քննել մէ՛ն մի Հայ տնուոր,  
 Գացեր էին տունն ալ զժրախտ հարսներուն,  
 Տեսեր էին դիակն անբախտ ծերունուն  
 Ու խեղճ պառաւն ինկած, փռուած անկենդան,  
 Տանը մէջն ալ թալան եղած ամէն բան...  
 Սակայն երկու եղբայրներէն չի կար լուր  
 Ըստաննըւած էին, կամ ո՞ղջ սակայն ո՞ւր...  
 Իրենց դիակն ո՞ր անկիւնն էր մընացիր...  
 Թէ ողջ էին՝ ինչո՞ւ չէին երեւեր,  
 Դժբախտ հարսներն անշուշտ քըչիկ մը ուրախ՝  
 կը մոռնային տակաւ իրենց ա՛խն ու վախ...  
 Բայց թէ մեռա՛ծ, այն թըշուառներն ալ խկոյն  
 կը մեռնէին ցաւէն իրենց սիրտերուն:

Անցաւ Կոնստանտնուպոլիսի զէպարներէն,  
 Ու լուր չ'ստին հարսներն իրենց այրերէն...  
 Եւ ո՞վ պատմէ անոնց ցաւերն ու մորմօք...  
 Ի՞նչ ընէին անպատասպար ու անօք...  
 Օգուտ կ'ընեն թըշուառին յոյս, բախտանք՝  
 Մինչ ակներև կը տեսնէ՛ վիշտն ու վրաանք...  
 Բայց լըսեր էր Տէրն այդ անմեղ զոհերուն,  
 Պահեր էր կեանքն անոնց կարիճ այրերուն:

նոյն օրը կարս փախեր էին երկուքն ալ՝  
 Արբա առնելով թուրք խուժանին զոհ չըլլալ:

Հարսներն այսպէս վերստացան իրենց կեանք,  
 Այրերուն քով գըտան իրենց բախտանք:

## ՏԻՈՒԻ ՅԻՇԱՏԱԿՆԵՐ

—\*—

Դաշտէն կ'անցնէի ես արշալուսին,  
 Իմ անձրս տըւած անուշ զեփիւտին,  
 Մանարիկ ծաղիկներ մարգերուն քնքուշ,  
 Իրենց բոյրն ու թոյր շուրջս սփռէին:

Անդին, քիչ հեռուն, արժըթէ վըտակ՝  
 Խառնըւած գոյնովը երկնից կապուտակ,  
 Մեղմիկ գըղիջով սարի մը կուշտէն  
 կը սողար, կ'անցնէր՝ լայն, օղակ օղակ:



Սարակն էր սիրուն՝ քողքով հարսի պէս  
 Դաշտին մէջ հեռուանց կ'ելլէր ի հանդէս,  
 Պըսակ կար դլխուն Սաչ մը շողշողուն,  
 Արեւէն ինկած կըտոր մը կարծես:

Դաշտն էր հայրենի, հողը Բազրեւանդ,  
 Սարակը դրաւիչ՝ վանքին Դարեւանդ,  
 Հընչէր դա՛շն ի դա՛շն՝ առարւան զանդակն՝  
 Արձաղանդ տալով ձայնին աստ եւ անդ:

Բնութիւնն ըզմայլիչ կարծես կը խնդար,  
 Արեւը ցաթէր, կարմիր՝ վառ ի վառ,  
 Ու ջուրջը դաշտին՝ լեռներ վեհաշուք  
 Բեհեղներ հազո՞ծ՝ փայլէին փա՛ս փա՛ս:

Սասար երկիրէ մենիկ ուղեւոր՝  
 Ոտք դըրած էի Հայրենիք դեռ նո՛ր,  
 Իջայ վար ձիէս՝ ճակատըս հողին՝  
 Աղօթք մ'ուզղեցի առ Աստուած հըզօր...

Ելայ ոլորտիկ սիրուն սարն ի վեր՝  
 Դեպ ի Մենաստանն ուղղած իմ քայլեր,  
 Վանահայրն այնտեղ՝ դեղձուկ զեղզեղով  
 « Զսորիք, փա՛ոք իմ » ը կը ներդաշնակէր:

Հողիս Հայրենեաց փառքով խանդավառ՝  
 Մունջ մըմունջներուս եղաւ վա՛ս բուրվառ,

— « Զարթո՛ւ — ըսի — Տէ՛ր փառքը Հայ Ազգին...  
 Թո՛ղ, զարթնու, ինդայ Հայաստան աշխարհ: »

Հոգիչունչ երգոց դադրան շարականք,  
 Սոխակն բսկըսաւ երգին զեղզեղանք,  
 Հո՛ս դառնուկ մայէր, հո՛ն եզ բառաչէր —  
 Ճի՛շտ կ'ըսեն թէ՛ — « Վա՛նք, Վարդապետի կեանք ».

Հայրսորբն էր կայտառ՝ պաշտպան իբ վանքին,  
 Բարեկամ Հայուն, Բուրդին ու Թուրքին,  
 Յարգ կուտար Հայուն՝ թուրքին ալ չողոմ,  
 Շահուն համար չէ՛ն այդ Մենաստանին:

Գիշեր մ'անցուցի՛ գիշեր մ'անուշիկ —  
 Ա՛հ, սարին վերէն դաշտն ի՞նչ սիրունիկ —  
 Վանքը բարձրաբերձ պանծար պերճափառ  
 Հայ գիւղերուն վրայ՝ իրարու մօտիկ:

Գիշերը՝ լուսին դաշտը կ'արծըթէր,  
 Արեւն ալ, առտուն, ոսկի կը ներկէր,  
 Պարարտ որաներ բա՛րդ բա՛րդ լեռնացած՝  
 Պըսակներն էին դա՛շտին պտղաբեր:

— Ո՛վ էր քեզ նըման, ա՛հ, սիրուն Գաւառ  
 Միլիդ, ծաղիկիդ ու ջուրիդ պայծառ,  
 Դրախտ էին լեռներդ ձորով, ձործորով,  
 Փայլէին յուռթի դաշտերդ ոսկեփառ. —



Մեկնեցայ վանքէն անճառ յոյգերով՝  
Տաճարին վերջին համրոյր մը տալով,  
Ու սարակն ի վար՝ լըռին ու ժպտուն՝  
Ճամբաս բռնեցի անջինջ յուշերով :

Երեք տարիներ սահեցան, անցան, ( 1 )  
Ու միտքէս չ'եկան հրճուանքն այն օրուան ...  
Ափսո՛ս ... իմ վերջին վերելքս է եղեր ...  
Ա՛լ չի տեսա՛յ ա՛ն սարն ու Մենաստան :

Ափսո՛ս ... չի տեսա՛յ ես գեղածիծաղ  
Ո՛չ բեղուն այն դաշտն, ո՛չ հօտն ու հօտաղ,  
Կարօ՛տ մընացի վրճէտ ջուրերուն,  
Կարօ՛տը քաշեմ բոյսերուն մասաղ ...

Ինչպէ՛ս չ'ափսոսամ ... դաշտն է արդ խոպան,  
Գիւղերն անկենդան, հայեր ցիր ու ցան ...  
Վանքը կիսաւեր ... խունկն ու պատարագ  
Ա՛լ չե՛ն բուրեր հո՛ն ... ինչպէ՛ս չ'ափսոսամ ...

Մէկ գիշերուան մէջ խուժանն անօրէն  
Քանդեց կործանեց վանքն անգըթօրէն ...  
Պղծեց Սրբավայրն իր լըպիրշ ձեռքով,  
Տաճարն ու սեղան մերկացուց փառքէն ...

Միաբան, մըշակ, դժբախտ Վանահայր  
Ինկան ջարդըւած, հո՛ն, պատառ պատառ,  
Տը՛ ին կըրակը՝ դարձուցին մոխիր՝  
Վարեցին աւար ոչխար ու արջառ :

Սեւեր է հագեր սարակն այն սիրուն,  
Խաչին տեղ վա՛ն մը կայ հո՛ն տխրամոյն ...  
Ու վերելքն ի վար՝ վըտակը մինչեւ  
Անմեղ դո՛հերուն կը հօտի արին ...



## Պ Ա Տ Ր Ա Ն Ք Ը

Սոսկալի էր տաքն , ամէն կողմ երաշտ ,  
կ'երէր , կը մրկէր լեռ , ձոր , սար ու գաշտ ,  
կեանք տըռող բնութեան անձրիւն էր միայն . . .  
Անձրե՛ւ կը գոչէր Երկիրը համայն . . . —  
Ամպ մը ծաղեցաւ ճի՛շտ Արեւմուտքէն ,  
Թնդաց , որոտաց , շանթեց դոռալէն ,  
Բայց այդ ամպը թուլս ու շանթն ալ անեղ  
Անհետ եղան մեր յոյսին հետ մէկտեղ . . .

Երկիրն է ցամքած ,  
Երաշտն է տիրած :

Սով հասաւ Երկրին , ժամն էր անաւոր  
կարօ՛ւան էր հացի աղքատ , ունեւոր ,  
Վըտանդ կը սպառնար կեանքը ամէնուն ,  
Անցնիւր կը սպասէր իր մահուան ժամուն . . .

Գըթութեան ձայներ հասան կարեկից ,  
Սիրտեր ըսփփանք զրտան յուսալից . . .  
Բայց այդ գըթութեան ձայները զօրեղ  
Անհետ եղան մեր յոյսին հետ մէկտեղ . . .

Երկիրն է ցամքած ,  
Սովն է միշտ տիրած :

Սովին երեսէն սաստիկ էր աւեր ,  
Ամէն կողմ Երկրին մահը կը տիրէր ,  
Հիւժուեցան շատեր գրե՛թէ անկենդան ,  
Շատերն անսրւաղ մըտան գերեզման . . .  
Հեռու ծովերէ եկան բըժիշկներ ,  
Տըւին ամէնուն կեանքի նոր յոյսեր ,  
Բայց յոյսերն անոնց եւ դարմանն ու գեղ  
Անհետ եղան մեր յոյսին հետ մէկտեղ . . .

Երկիրն է ցամքած ,  
Մահն է միշտ տիրած :

Սարսափով լըսեց աշխարհ այս գոյժը ,  
Հո՛ն դարձուց Եւրոպն իր բոլոր ուշը ,  
Գոռաց , որոտաց անլոյժ ամպի պէս ,  
Շանթեր արձակեց անեղ զէն ու գէս . . .  
Բայց շանթերն իրե՛ն օգնեցին միայն ,  
Ինքն իր շահերուն կանգնեցաւ պաշտպան . . .  
Ու սովն ու մահը հալածելու տեղ  
Անհետ եղաւ մեր յոյսին հետ մէկտեղ . . .

Երկիրն է ցամքած ,  
Աղէտը տիրած :



Այսպէ՛ս Հայաստանն ալ տարաբաղդիկ  
 Եւրոպայի ձեռքն եղած խաղալիկ ;  
 Տակաւին դաժան լուծի տակ նըկուեն՝  
 Օտարէն սպասէ իրեն օգնութիւն . . .  
 Բայց օտարն , աւա՛ղ , զրժեց իր ուխտին ,  
 Հայուն աւելցուց վըտանդը կեանքին . . .  
 Եւ իր օգնութեան ձայներն առ ետեղ  
 Անհետ եղան մեր յոյսին հետ մէկտեղ . . .

Երկիրն է ցամքած ,

Չարիքն է տիրած :

Տեսաւ բռնակալն այն անագորոյն ,  
 Բաւ -- « Թո՛ղ օգնէ՛ Եւրոպն Հայերուն . . . »  
 Հեգնեց ու ծաղրեց ձեռնարկներն անոր . . .  
 Չար չարի վըրայ բարդեց ամէն օր . . .  
 Սակայն պատմութիւն բանայ սու էջեր ,  
 Ուր Հայ արիւնը գրոշմէ իր տառեր . . .  
 Հո՛ն իր համբաւին փայլը փառահեղ  
 Չ՛ա՛նհետիւր իրեն յոյսին հետ մէկտեղ . . .

Չի Հայոց Աստուած

Վրէժիւնդիր է Աստուած :

## Ա Ի Օ Ի Ն Տ Ղ Ո Ի Ն Հ Ա Ր Մ Ն Ի Ք Ր



Չ՛եղլեր միտքէս Սուրբ Սերգիսի կիրակին . . .  
 Չիւնը սաստիկ , հողմը գոռար մօլեգին ,  
 Բայց գիւղացին՝ տանն օջախին բոլորտիք ,  
 Հո՞գն էր իրեն թէ՛ դուրսը ձիւնն էր սաստիկ :

Այն օրն Աւօն ուրախ էր չա՛տ ու զըւարթ ,  
 Աչքի լուսի կու դար իրեն ամէն մարդ ,  
 Ու Թմբուկները սրինգներուն ձայնակից՝  
 Բորբոքէին սիրտերն ամէն խնդալից : —  
 Աւօն իր լաճը կը կարգէր միամօր՝  
 Իրեն համար է՛ն երջանիկն էր այն օր :

Էտինքին մօտ , յա՛նկարծ գիւղէն հարեւան  
 Թմբուկներու գոռ ձայները լսուեցան ,



Այր, կին, աղջիկ, աղայ, ամբոխ անապին,  
Դէմ գընելով կաողած հողմին ու փութին,  
Բերէին հարսն ուրախ, ցնծուն երգերով,  
Ու հրացաններն որոտացին գոտալով:

Աւօն խկոյն խուճրը կաղմեց հարսնեւոր,  
Անոյշ գինուով ամէնքն առոյգ, ողբուր,  
Թո՛ղ փըչէր հողմն, որքա՛ն կ'ուզէր անողոք՝  
Իրենք կայտառ...: ցուրտն ու ձիւնը որո՞ւն հող:  
Բերին հարսը կարծններով պաշարուած,  
Մազ ու մորուս ամէնքին ալ սառ կարած,  
Ու դրան սեմին վըրայ, հարսին ոտքին տակ  
Մորթըւեցաւ ոչխար մ'իսկոյն պարարակ,  
Աղն ու հացն ալ չէ՛ր մոռցըւած տոհմական՝  
Հարսին բերած երջանկութեանն ի նըշան:

Բոլորուեցան մեծ ու պզտիկ խուճր ի պար,  
Լի բաժակներ պարպըւեցան խանդավառ,  
Հարսն ու փեսան զոյգ ամուսներ սիրարկու  
Ժպտուն զէմքով ձեռք կուտային իրարու:  
Յանկարծ լսուաւ ձայնն հալւորիկ Տէրտէրին՝  
Ու եկած էր հալւաւն օրհնել փեսային,  
— « Աչքերըդ լո՛ւս — ըսաւ Տէրտէրն — Աւօ՛ջան, »  
— « Օրհնեա՛ ի Տէր, լուսով մընաս, Տէ՛րտէրջան: »  
Ու գինւոյ լի՛ տալով անոր մի բաժակ՝  
Հատ մըն ալ ինքն... ու կոնծեցին ցըյատակ:

Թմրուկները ձայներն անդէն լըռեցին...  
Ձեւն ու կապան մէջտեղ բերին նոր փեսին,  
Ու նըշանաւն ամէնքն ալ հոն՝ մէկ բերան՝  
Իրենց զեղջուկ ձայնովն երգել ըսիւսան:

Սուրբ Սերգիսին հողմն ու ձիւնն է զօրաւոր,  
Գիւղին ծայրն էր Տաճարը Սուրբ Թաղաւոր,  
Հայ գիւղացի պապենականն իր աւանդ  
Պահէ սակայն՝ ըլլա՛յ աշխարհ քար ու քանդ,  
Պէտք էր երթալ Եկեղեցին անխափան  
Ու հո՛ն պապնել սըսակն որդւոյն սիրական:

Օրն իրիկուն, միտնելու մօտ էր արդէն,  
Եկեղեցին լցուած էր շա՛տ կանուխէն,  
Տէրտէրին հետ ժամուն աւագ Տիրացուն  
Կը սպասէին Հարս ու փեսին ժմեւուն (1):

Չիւնը զաղրած, հո՛ղմն ալ ա՛յնքան չէ՛ր ուժգին,  
Բայց ձեան մըրրիկն էր փակած զուռն ամէնքին,  
Հայ կարծններ փողոց ինկան քաջի պէս,  
Ճամբաները բացին բշտապ զէն ու զէս:

(1) Հայաստանի գիւղերուն մեջ, շատ տեղ պատկը  
Կիրակի իրիկուն՝ արեւմտեֆեկ ետքը կ'ըլեն:



Թմբուկն ու պար առաջքն ինկան թափօրին ,  
 Ու բացարձակ ջահերու լոյսը չորս գին՝  
 Ձիւնին վըրայ ձըղած շողեր պաղպաջուն՝  
 Շափիւղաներ էին կարծես փողփողուն՝  
 Ու ոտքերնուն տակ ցանուած Հարս ու Փեսին՝  
 Նոր փայլ տային հարսանեկան հանդէսին :

Եկեղեցւոյ դուռը հասան խիստ հեշտիւ ,  
 Ուր արտակարգ եղան իրենց փառք պատիւ ,  
 Ու Տաճարը՝ թէպէտ անշուք , գիւղական ,  
 Լուսավառուած էր մօմերով բաւական ,  
 — Աւօն գիւղին մէջ վայելէր մեծ համբաւ ,  
 Հարուստ էր ա՛ն ու բարիքներն ալ ամբաւ .  
 Պըսակն եղաւ պարզ՝ այլ պատշաճ հանդէսով ,  
 Ներքողն ըրաւ Տէրտէրն անկեղծ եռանդով :  
 Հարսին , Փեսին մաղթեց օրեր երջանիկ ,  
 Կարիւ սիրով , տեսնել իրենց թոռ , թոռնիկ :  
 Տէրտէրն Աւօն ալ չի մոռցաւ յիշելու .  
 — « Պըսակն — ըսաւ — համբուրես շատ թոռներու ,  
 Ադն ու հացը թող չի պակսի շէնլիքէդ ,  
 Թո՛ղ չի ճոկէ Աստուած քեզ քու օջախէդ : »

Վերըսկըսան որոտալ թուսդ թմբուկներ ,  
 Թափօրն ելաւ՝ ամէնուն ձեռք վառ մօմեր ,  
 Փեսան թուրով , Հարսն իր քօղքով նազաքայլ  
 Հետեւէին երկու մանկանց մօմակալ :

Դրոզդեցաւ այն գիշերը գիւղն ողջոյն՝  
 « Էրնէ՛կ » տային ամէնքն հարսուն ու փեսուն ,  
 Երբ հարսնեաան հասաւ թափօրը մօտիկ ,  
 Ըսկըսաւ երգն — « Որդի՛ք Սիօնի , զարթիք » ,  
 Իայց ձեան գէղ մը թաւլըլիւով երգիքէն՝  
 « Յաղթեաց մահու իշխանութեամբ » ը մէկէն  
 Տիրացուն բերանը մնաց սարսափով  
 Ու ներս մըսան ամէնքն ահով ու դողով . . .  
 — « Չար նազար է » — ըսին — եկաւ ու անցաւ .  
 Մարի օջախն՝ որուն նազարը գըպչաւ . . . :

Պատրաստ էր ճաշն , ամէն բարիք լիառատ ,  
 Գինին լեցու էր բաժակները անընդատ ,  
 Տէրտէրն հաղար օրհնենք կու տար ամէնուն ,  
 Հաղար մաղթանք կը լսուէին եռանդուն . . .  
 Երգ , շարական յաջօրդէին իրարու՝  
 Աղթթքներով միշտ երջանիկ օրերու :  
 Աւօին ա՛լ չափը չի կար խնդութեան ,  
 Իրեն համար երջանկութիւն ամէն բան . . .  
 Ինքը հազիւ քոտսուն տարին բօլորած ,  
 Սիրուն , նախշուն հարսի մը աէր էր եղած ,  
 Հարսի մը ժիր՝ որ նըշանուած իսկ օրէն՝  
 Անօրէններ խըլեր էին իր ձեռքէն ,  
 Սակայն արի եւ անվըկանդ իր կամքին՝  
 Դէմ գըրած էր իր գէ՛մ լարուած հընարքին . . .  
 — « Արեւն Աստուած՝ պահէ — կ'ըսէր — իմ Հարսիս ,  
 Գլխուն թագն է իմ մէ՛կ հատիկ զաւակիս ,



Տէրն ալային (1) զաւկիս պէսը պարզիւէ,  
 Թո՛ղ իմ աչքըս անոնց սեւ օր չի տեսնէ » :  
 Կ'ըսէր ասոնք ու կը կոնծէր սեւ գիւնին՝  
 Անոյ բերքը իր աննրման այգիին . . .  
 — Զմրան ատեն, մանաւանդ լա՛ւ օրերուն՝  
 Գիւնին միա՛կ ըսիտփանքն է գիւղացուն —

Առտու եղաւ, մշուշ ծածկեր էր չորս կողմ,  
 Դադրեր էին թէպէտ սաստիկ ձիւնն ու հողմ,  
 Տիրապետէր ցուրտն իր ուժգին զօրութեամբ,  
 Պարն ալ տաքցած էր ցուրտին դէմ ապստամբ . . .  
 Բայց լուրջ ձայնին վըրայ հալւոր Տէրտէրին՝  
 Վերջ տրուեցան պարին, երգին, թմբուկին :  
 Տէրտէրն ըրաւ կարգը թագի վերացման  
 Ու մեկնեցաւ ուրախութեամբ մ'անսահման :  
 Հարսնեւորներն ալ քիչ ետքը խմբովին՝  
 Մեծարուելով նախաճաշով մ'առտընին,  
 Բաժնըւեցան հարսնետունէն դո՛ս սիրտով՝  
 Հարսին, փեսին տալով մաղթանք լի՛ բերնով :

. . . Տիրեց լուսթիւնն յանկարծ գիւղին մէջ ողջոյն,  
 Բնութիւնն ալ լուս . . . լո՛ւս էր նաև. Հարսոնց առն . . .  
 Ազոտաները՝ ձմրան ձիւնին սիրահար՝  
 Գողըռային սաւտոնելով անդադար . . .

(1) Ամէնուն :

Ու գիւղական սալորոյթին համ սճայն՝  
 Տուն մընտցին Փետան ու Հարսը միայն :  
 Աւօն գընաց իր եզրօր տունը մօտիկ՝  
 Հո՛ն անցընեյ օրն ու գիշերն հանգարտիկ,  
 Իսկ գիւղացին քընտա՛ թափովը գիւնոյն  
 Արդէն մըտած էր՝ ըզզլիսած, ի խօր քուն . . .

Երեքշաբթի լուսնար տըխուր առտօս,  
 Երկինքն ամպոս ճապաղէր լոյս մը աղօս :  
 Աւօն կանուխ արթնցեր էր իր քունէն՝  
 Կ'ուղէր իր տունն երթալ, տեսնել կանուխէն . . .  
 Տաղնապալից խօլ ու մղձուկ երազներ  
 Գիշերն ի բուն իր քունն էին վրդովեր . . .  
 Միտքը ինկաւ ձիւնին դէզը երգիքին . . .  
 — « Կաւ նշան չէր — ըսաւ — ցուցանքն երկինքին . . . »  
 Առտու կտպոն, ելաւ, ցոտկեց դուրս՝ փողոց՝  
 Բընաղբի մը մօրմօքներով վշտակոծ . . .  
 Վաղեց, գընոց, հասաւ մինչև տանը դուռ  
 Զորս հինգ անգամ հարուած տըւաւ խիստ տմուր . . .  
 Զի կա՛ր շարժում . . . չ'ելա՛ւ երբէք ձան ու ձուն,  
 Վարանեցաւ . . . արդեօք արթնո՛ւն են թէ քուն . . .  
 Ու մըտածկոտ՝ պահ մը կեցաւ դրանն առջին . . .  
 Գընաց, եկաւ քայլ մ'առգին, քայլ մը անդին . . .  
 Զարկաւ նորէն . . . զարկաւ ուժգին, զօրաւոր . . .  
 Բացող չի կա՛ր . . . ու կասկածներ նորանոր  
 Տակն ու վըրայ ըրին զինքը սրտայոյզ . . .  
 Մէ՛կ մ'ալ գարկաւ . . . ունկնդրեց . . . ո՛չ, չի կա՛ր  
 յոյս . . .



Պատեց զինքը անն ու վախն անկարեկիր...  
 —(Յա'րօ (\*) — Պօռաց — Յա'րօ, Յա'րօ, արթնցի'ր...)  
 Լս'ւա էր չորս զին... ո'չ, չ'արթնցաւ իր Յարօն...  
 Շըւարեցաւ... ո'հ, ի'նչ ընէր խեղճ Աւօն...  
 Տատամեցաւ երկար ատեն... կանուխ էր...  
 Խօսք չէ'ր ուղղեր մէկուն... սիրան էր կարէվեր...  
 Եւ ի'նչ ըսեր... կը խորհէր... օրն էր կնճռոտ...  
 Որո՞ւ ըսէր... մի սյն իր սիրան էր տենդոտ...  
 Գիշ մ'ալ կեց ու... նորէն ձայնեց... բայց ի զո'ւր...  
 Մարդ չիկա'ր հոն... բայց ո'ւր դացեր էին, ո'ւր...  
 Չէին կրնար երթար արտեր... ձըմեա էր...  
 Չէ', անանկ օր Յարօն տունէն չէ'ր ելլեր...  
 Բայց Հա'րսը... ո'հ, ի'նչ եղեր էր խեղճ Հարսը...  
 Անչուշտ Հարսը լըսեր զըրան հարուածը...  
 Զարկաւ հե'ղ մ'ալ, զարկաւ բոլոր իր ուժով...  
 Ոչի'նչ... ու իր եղբօրը գնաց զողալով:

Ա'լ Աւօին հատեր էր ճարն ու ճարակ...  
 Ա'լ իր սիրտին խալառ մարեր էր ձըրագ...  
 Ժողկեց զլիտուն գիւղին մեծերն ու զրկից,  
 Ամէնքն իրեն սիրտով, հողւով կարեկից:

Գոց էր դուռը մինչեւ եզաւ իսկ կէս օր,  
 Հաւքըւեցան Թուրք Պաշտօնեայ ու զինուոր:

(\*) • Փետին՝ այսինքն՝ իր ազունն անուանն էր:

Զախջախեցին, բաժնեցին դուռն երկուքի  
 Ու խուժեցին ներս խուճապով տագնապի...  
 Ո'հ, Աստուած իմ, ի'նչ անուելի տեսարան...  
 Չըվան մը վիզն՝ հարսը փռուած անկեղան...  
 Ու խեղճ Յարօն, անգութ կերպով, հինգ կողմէն  
 Վերաւորուած՝ ինկած էր վար անկողնէն...  
 Սենեակին մէջ սեւ արեւններ թանձրացած՝  
 Բտամեցուցիչ լիճեր էին ձեւացած...  
 Իսկ խեղճ հարսին դէմքն եղեր էր անճանաչ...  
 Ինչպէ'ս պատմել վայնասուններն Աւօին...  
 Մարեցաւ խեղճն ու փոռեցաւ հո'ն, գետին...  
 Իսկ մօրկանը չէր զիմացուեր ողբերուն,  
 Ճըւիկ ճըւիկ՝ փետէր մաղբըրը զլիտուն...  
 Անողսք էր հարուածն՝ ոճիբն էր անլուր  
 Մահն եղած էր վայրկեանական, մունջ ու լուռ...  
 Հարսանեկան տունը սուգի փոխուեցաւ,  
 Ուրախութեան ա'ղ տիրեցին վիշտ ու ցաւ...  
 Անոյ ձայներ զոյգ տատարկաց լըուեցին,  
 Անոնց մահերն ողբաց ամբողջ գիւղացին...  
 Ու նոյն օրը կոյս ու ամբիժ ամոլներ  
 Արտասուտխաւսըն ծածկեցին սե'ւ հողեր...  
 Խիստ քննութիւն մ'ոճրին գաղնիքն հանեց լոյս,  
 Բայց ոճրագործն երկրէն շո'ւտ էր տըւած խոյս...  
 Ան հարուան գիւղի Պէկին էր տըղան՝  
 Որ խեղճ Հարսին սիրոյն վառուած անտահման՝

Խիստ քննութիւն մ'ոճրին գաղնիքն հանեց լոյս,  
 Բայց ոճրագործն երկրէն շո'ւտ էր տըւած խոյս...  
 Ան հարուան գիւղի Պէկին էր տըղան՝  
 Որ խեղճ Հարսին սիրոյն վառուած անտահման՝



Առեւանդեր էր՝ սպառնալով իր կեանքին ,  
 Ուրացում տալ իր քրիստոնեայ հաւատքին :  
 Բայց ժըրադուսի աղջիկն արի , անձնուրաց ,  
 Արդէն վաղուց Յարօին հետ նըշանուած ,  
 Ձի գրծելու համար կրօնքին ու սիրոյն՝  
 Անդրամին կեզներ էր աւլ հաճութիւն ,  
 Բայց օրէնքով ներկայացաւ երբ Ասեան՝  
 Մընացեր էր հաւատքին վրայ անասան ,  
 — « Քրիստոնեայ եմ — ըսեր էր — զիս բանութեամբ  
 Փախցուցին ու թրքացընեն ստիպմամբ » :  
 Դըժոխային սիս մ'էր պահեր դաւաճան ,  
 Վրէժը լուծել վճուեր էր թուրք սըրիկան . .  
 Երկուշարթին՝ այդ գաղանը լըրսըսը  
 Շուռ եկեր էր զիւղին շուրջը անդադար ,  
 Ու զիշերը պատերէն տան պարաէզին  
 Սողոսկելով , պահուած էր մէջն ախոսին  
 Եւ լըտութեան մէջ անշըշուկ ու անձոյն՝  
 Յեղակարծունն յարձակ աւալով անոնց վրան՝  
 Գաղանական վրէժն էր լուծեր չոր կամքին՝  
 Անմեղ կենաց վերջ աւալով զոյգ ամուլին . . .

Պէկին սիրուն՝ չեղա՛ւ բրնտը գոտ ստան ,  
 Երկու ամիս բանաը եղաւ բուսական . . .  
 Հայ զիւղացոյն լաւ օրին այս է վիճակ՝  
 Որուն խեղճը տակայ կամքով զըժընդակ . . .

Խեղճ Աւօին զըտուիքն խպառ փակուեցան . . .  
 Ունեցածը ծախեց , զընայ Ռուսաստան :

## Լ Բ Ա Ճ Ե Շ Տ

Ողջա՛մբ մընա՛ Դու , Թագուհի՛դ Հայոց ,  
 Որուն վառուեցայ սիրովդ հուր ու բոց . . .  
 Աչքերդ արցունքոտ , թէպէտ զէմքդ հիւժուած՝  
 Սիրուն ես դարձեալ , Բամբի՛չդ հայրենեաց , —  
 Ահա՛ կ'երթամ ես . . . Դուն կեցի՛ր բարով ,  
 Կը մեկնիմ քեզմէ իմ անճառ սիրով ,  
 Ու չե՛մ գիտեր ու՞ր աստղըս չարամոյն  
 Ձիս պիտի վարէ յածուն ու ծրփուն . . .  
 Այլ սակայն կ'երթամ , Բամբի՛չդ իմ սիրուն ,  
 Հեռո՛ւն , շա՛տ հեռուն ,  
 Քայլով երերուն . . .



Թէպէտ կ'երթամ ես, բայց շրթանցըս վրայ  
 Համբոյրդ հրաբորբոք միշտ վաս կը մընայ . . .  
 Մօակցուք ձեռքըդ, սրտիս վըրայ դի'ր .  
 Տե'ք, վէրքեր կան հո'ն, վէրք՝ որ չե'ն անցնիր . . .  
 Հո'ն հանգչեցար Դուն երկա՛ր աօրիներ . . .  
 Սիրոյ վէրքերն հո'ն, ա՛հ, Դո'ւն ես բացեր . . .  
 կը բամբուլիմ ես միշտ նոյն վէրքերով  
 Ու կը թողում քեզ անվերջ յոյզքերով . . .  
 կ'երթամ ես հեռուն, Բամբի՛չդ իմ սիրուն  
 Հեռո՛ւն, շա՛տ հեռուն,  
 Քայլով երերուն . . .

Թախիծն ու հրապոյր այս բսմանման մէջ  
 Խորը ծով սրտիս կ'ընեն ելու էջ,  
 Թախիծս է անհո՛ւն՝ երբ կը մօրմսքիս,  
 Բոց մըն է հրապոյրդ, կը վառէ հոգիս . . .  
 Արցունքներուդ մէջ սիրաբդ կը արօփէ  
 Ու ձայն մ'ինձ կ'ըսէ — « Կընա՛, բայց տպրէ՛ »,  
 Սրտիս մէջն սէրդ . . . ո՛չ, չե՛մ մեանիր ես,  
 Մինչև որ ձեռքովդ աչքերս չի գոցես . . .  
 Այլ սակայն կ'երթամ, Բամբի՛չդ իմ սիրուն,  
 Հեռո՛ւն, շա՛տ հեռուն,  
 Քայլով երերուն . . .

Պահէ՛ սէրս եւ՛ Դուն՝ ծոցիդ մէջ հրաշունչ,  
 Պահէ՛ գայն գունատ իբրև ծաղկի փունջ,  
 Թո՛ղ երջանկութիւնն հանդչի՛ սըղաւոր՝  
 Իր յիշատակներն հետս են ամէն օր . . .

Ու՛ր որ ալ երթամ՝ լքուած, ջախջախուած,  
 Թէ՛ բանտ, թէ՛ աքսոր, ինձ հետ համընթաց՝  
 Անո՛նք են միայն որ կը սփոփեն զիս  
 Ու կ'ուղղըին քեզ խորերէն սրտիս . . .  
 Ես տանիմ գանոնք, բամբի՛չդ իմ սիրուն,  
 Հեռո՛ւն, շա՛տ հեռուն  
 Քայլով երերուն . . .

ՀԱՅՈՐԴԻՆ ԻՐ ԱՍՏՈՒԾՈՅՆ ՇԵՏ

( Բ . Թագ . Գլ . ԻԲ )

Աստու՛ած հըզօր, Դո՛ւն ամբութեան ես վահան,  
 Քեզ կը յուսամ, Դո՛ւն ինձ Փրկիչ, պահապան,  
 Դո՛ւն իմ պաշտպանս ու փրկութեանս եղջիւրն ես՝  
 Որ իմ օրերս անխրտէն կը փրկես :  
 Պիտի կարգամ ես առ Աստուածն յաւիտեանց,  
 Իմ թշնամեացս Ա՛ն կը գընէ միայն սանձ ,



Քանզի ինձմէն վիշակերն եղան անպակ սս  
 Աւ պոչարեց շուրջըս մահուան դառն օրհաս :  
 Տիրապետեց երկունքն անօր մարմնոյս մէջ ,  
 Սեւ ողիներն բրին իմ շուրջս ելեւէջ :  
 Ճաւերուս մէջ եւ գիմեցի Աստուծոյս ,  
 Ականջ զբրաւ իմ ողբագին ձայներուս :  
 Երկիրն ողջոյն զըզբրդեցու հիմերէն  
 Սարսեց նաև երկինքն իրեն սարսափէն ,  
 Աստուածային զայրոյթն հուր , բոց արձակեց ,  
 Շանթն ու կոյճակ շտապեցին անընկէց :  
 Ետնարհեցուց երկինքն Աստուած , իջաւ վ օր ,  
 Իր ոտքերուն ներքեւն էր մէզն ու խաւար ,  
 Քրովբէներու բողմած էր վրան թեւերուն՝  
 Թոխն էր արագ՝ թեթև թեթև հողերուն :  
 Ետաւրն իր շուրջը կը կազմէր մի խորան  
 Եւ օղին մէջ ամպերն իսկոյն թանձր սցան :  
 Փողփողենէջ լոյս մը կ'երթար առջեւէն ,  
 Ահեղ շանթեր բորբոքեցան հըրեղէն :  
 Բարձունքներէն սրասց Տէր եհօվան ,  
 Աչխարհաս սաս աստուածային Չոյնն էր ա'ն՝  
 Ար թշնամբքս հալածեց իր նեակերով ,  
 Աւ կայծակներ բորբոքեց իր հուրերով :  
 Տիեզերքին յայանըւեցան հիմունքներ ,  
 Ավիէանին բացուեցան խոր անդունդներ :  
 Մինչ բարկութեան հողմերն յա'նկարձ շնչեցին՝  
 Սարսափ պտտեց բոլորախըռ սէնքերն ,  
 Բայց Աջն հրզօր ինձ կարկասեց երկինքէն ,  
 Ենեւ ծովերուն զիս ազատեց յայգրերէն :

— Տագնապալից անցուցի եւ չա'ս օրեր ,  
 Իմ ապաւէնս եղաւ միայն երկնից Տէր ,  
 Փրկից իմ անձս ու զըբաւ զիս յանդորբու՝  
 Զի կը լըսէ Ա'ն սրտաբուխ ձայներու :  
 Արգար ես , Տէ'ր , անոնց՝ որ սուրբ են սրտով ,  
 Գո'ւթ եւ անոնց՝ որ կ'ապրին լս'կ Բու սիրով ,  
 Փրկիչն եւ Դուն միշտ վշտագնեայ ազգերու ,  
 Բայց սարսափն եւ ամբարտաւան աչքերու :  
 Դո'ւն եւ իմ ճրագս , ո'վ յաւիտեանց Դու Աստուած ,  
 Լուսաւորէ' ինձ իմ օրերս խաւարոյձ ,  
 Քեզմո'վ միայն եւ կ'ընթանամ մենագէն ,  
 Քեզմո'վ կ'անցնիմ վշտաց յանգուզն որմերէն :  
 Քեզմէ հըզօր ո'վ կայ ուրիշ , Աստուած իմ ,  
 Կա'յ ժայռ մ'ամուր՝ որուն փարիմ ու կառչիմ ,  
 Դո'ւն եւ միայն՝ որ զօրութիւնս եւ անհուն ,  
 Ամուր նեցուկ , ապաւէն Դո'ւն ամէնուն՝  
 Որ թեթևեաւ ոտքերս հանգոյն կզջերուաց ,  
 Զիս կը կանգնեաւ այս վիճակէս հալածուած :  
 Թէ վշտագնի'մ իսկ , օրերուս ցաւաղին  
 Դո'ւն եւ գործեայ յոյսս ու սփոփանքս անմեկին :



### ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՅԼԵՐԳ

ՀԵՏԵՒՈՂՈՒԹԵԱՄԲ ԵՒ ԵՂԱՆՍԿԱՒ

LA MARSEILLAISE ԻՆ



Օ՛ն, զաւակունքըդ Հայրենեաց,  
 Ելէ՛ք, փառաց ժամն է հասած,  
 Բռնակալին դրօշն արիւնոտ՝  
 Ամէնուս դէմն է պորզըւած :  
 Դաշտերուն մէջ տեսէ՛ք, Հայեր,  
 Կը մըռընչին վայրագ դօրքեր  
 Ու կուգան որ ձեր բազկաց մէջ  
 Մորթեն անմեղ ձեր զաւակներ :

Ի դէ՛ն, օ՛ն, թոռյթ ի թոռյթ  
 Ի կա՛րգ, օ՛ն, փոյթ ի փոյթ  
 Յառա՛ջ, յառա՛ջ,  
 Պիղծ արիւններ  
 Ողողեն մեր դաշտեր :

Ի՞նչ կուզէ հրոսն ըստրուկներու  
 Իշխաններով իր դաւարկու,  
 Վաս թակարդներն ու չղթաներ  
 Որո՞ւն համար են, որո՞ւ...  
 Արհամարհե՛նք զանոնք, Հայեր,  
 Եռա՛ն, զեռա՛ն մեր արիւններ,  
 Անոնց չար կամքն է որ ըլլանք  
 Անարգ լուծի տակ ըստրուկներ :

Ի դէ՛ն, օ՛ն, թոռյթ ի թոռյթ  
 Ի կա՛րգ, օ՛ն, փոյթ ի փոյթ,  
 Յառա՛ջ, յառա՛ջ,  
 Պիղծ արիւններ  
 Ողողեն մեր դաշտեր :

Միթէ՛ օտար այդ հրոսակներ  
 Կազմակերպեն մեր երկիրներ,  
 Լէգէօններ միթէ վարձկան  
 Տապալին մեր դիւցազուններ...  
 Պիտի թողո՞ւս, ո՛վ մե՛ծք Աստուած,  
 Որ մեր ձեռքերը չղթայուած,  
 Իբրև ըստրուկ գըլուխ ծըռենք  
 Յա՛մ ու անարգ բռնակալաց :

Ի դէ՛ն, օ՛ն, թոռյթ ի թոռյթ,  
 Ի կա՛րգ, օ՛ն, փոյթ ի փոյթ,  
 Յառա՛ջ, յառա՛ջ,  
 Պիղծ արիւններ  
 Ողողեն մեր դաշտեր :



Նենդաւորներ, սասանեցէ՛ք  
 Երկինք թափեն ձեզ բիւր անէծք,  
 Հայրենամա՛րս էք, դո՛ւք, վատեր,  
 Զեր վարձքն օր մը պիտի տունէք...  
 Ո՛վ որ Հայ է՝ զինուո՛ր է ա՛ն,  
 Մեր կարիճներն երբոր իյնան՝  
 Նո՛ր նո՛ր քաջեր կը կանգնին կազմ՝  
 Ի սուր, ի թուր, եւ ի հրացան :

Ի զէ՛ն, օ՛ն, թոռյթ ի թոռյթ,  
 Ի կա՛րդ, օ՛ն, փոյթ ի փոյթ,  
 Յառա՛ջ, յառա՛ջ,  
 Պիղծ արիւններ  
 Ողողեն մեր դաշտեր :

Ո՛վ գուք, վեհա՛նձն Հայ մարտիկներ,  
 Խընայեցէ՛ք ձեր գնդակներ  
 Սա՛ խեղճերուն՝ որ ակամայ  
 Մեզի գէ՛մ զէ՛նք են վերուցեր :  
 Բայց անողոքն այդ վատ գազան  
 Եւ ապիրտան այդ դաւաճան  
 Օ՛ն, անխընայ հարուածեցէ՛ք՝  
 Զի քանդեցին մեր Հայաստան ,

Ի զէ՛ն, օ՛ն, թոռյթ ի թոռյթ,  
 Ի կա՛րդ, օ՛ն, փոյթ ի փոյթ,  
 Յառա՛ջ, յառա՛ջ,  
 Պիղծ արիւններ  
 Ողողեն մեր դաշտեր :

Ո՛վ Հայրենեաց Սէ՛ր Սրբազան,  
 Դո՛ւն պահպանէ՛ ըզ Հայաստան,  
 Դո՛ւն, պաշտելի՛դ Ազատութիւն,  
 Պաշտպաններուն կանգնէ՛ օճան :  
 Թո՛ղ Հայկազնեան դրօշիդ ներքեւ  
 Յազթանակիդ փայլի՛ արեւ  
 Ու թշնամիքդ օրհասական  
 Պսակըդ տեսնեն ճակարիդ վերեւ :

Ի զէ՛ն, օ՛ն, թոռյթ ի թոռյթ,  
 Ի կա՛րդ, օ՛ն, փոյթ ի փոյթ,  
 Յառա՛ջ, յառա՛ջ,  
 Պիղծ արիւններ  
 Ողողեն մեր դաշտեր :

Երբոր երէց մեր եղբայրներ  
 Մեռնին մարտին մէջ կարելէր,  
 Պիտի մտնենք մենք ասպարէզ՝  
 Փընտըտելով անոնց հեաքեր,  
 Ու փոխանակ փափաքելու  
 Անոնցմէ հաքը ապրելու՝  
 Պիտի ստանանք փառքը վըսեմ  
 Անոնց վըրէժը լուծելու :

Ի զէ՛ն, օ՛ն, թոռյթ ի թոռյթ,  
 Ի կա՛րդ, օ՛ն, փոյթ ի փոյթ,  
 Յառա՛ջ, յառա՛ջ,  
 Պիղծ արիւններ  
 Ողողեն մեր դաշտեր :



## ԱՊԱՇԱԻՔ ՀԱՅՈՐԴԻՈՅՆ

« Ողորմեա՛ ինձ . կսուռսձ ,  
 ըստ մեծի ողորմութեան  
 քում . . . » ( Սաղմ . ՄԱ . )

Ըստ մեծի քում ողորմութեանդ , ո՛վ Աստուած ,  
 Ողորմեա՛ ինձ , եւ զանօրէնս իմ յանցուած  
 Հաճեա՛ց բազում զըթութեամբբդ քով քսեւել ,  
 Ի չար զործոց իմոց լըւա՛ առաւել ,  
 եւ յիմ մեղաց պահեա՛ , Տէ՛ր , զանձն իմ արդար՝  
 Զի ես ինձէն դիտեմ զիմ մեղս անհամար ,  
 եւ զոր գործեաց անձն իմ՝ չարիք ամենայն՝  
 Առաջի իմ յամենայն ժամ կն եւ միան ,

Միայնոյ քեզ մեղայ ես , Տէ՛ր բարերար ,  
 եւ արարի առաջի քո ես ըզ չար .  
 Որպէս արդար ի բանքս քո եղիցիս .  
 եւ յաղթական ի դատել քեզ ծանիցիս :  
 Ի յարգանդի յըղացաւ զիս ի մեղանս .  
 եւ ի նոյն մեղս անդէն մայր իմ ես ինձ կեանս :  
 Այլ սիրեցիր ճշմարտութիւն Դու , ո՛վ Տէ՛ր ;  
 Իմաստութեամբ քով ինձ զանյայտս յայտնեցիր :  
 Յօղեա՛ ի յիս մշտեաւ եւ սուրբ եղէց ես ,  
 Լըւա՛ եւ քան ըզձիւն սպիտակ արասցես :  
 Տէ՛ր , լըսելի արա՛ ինձ ձայն ի ցնծալ  
 եւ ցնծասցեն յիս ոսկերք իմ տառապեալ :  
 Դարձո՛ զերեսքս քո մեղացս ի հոյլէ  
 եւ քաւեա՛ զիս ի բովանդակ ի չարէ :  
 Սիրա սուրբ ի յիս , Տէ՛ր Աստուած իմ հաստատեա՛  
 եւ յիմ փորի հոգի ուղիղ նորոգեա՛ :  
 Յերեսաց քոց մի ընկենուր զիս , ո՛վ Տէ՛ր ,  
 եւ ըզհոգի քո սուրբ յինէն մի հաներ :  
 Տո՛ւր ինձ , Տէ՛ր , տուր փրկութեան քո ցնծութիւն  
 եւ պիտութեանդ հոգւով արա՛ հաստատուն :  
 Զճանապարհքս քո ուսուցից անուղղայց  
 եւ ամբարիշտք միշտ արասցեն առ քեզ դարձ :  
 Աստուած՝ , փրկի՛չ իմ , փրկեա՛ զիս յարեմէ ,  
 Յարգարութեան քում լեղու իմ ցնծասցէ :  
 Եթէ՛ զըթութունս իմ բանաս , Տէ՛ր , բերան իմ  
 Զօրհնութիւնքս քո երգեսցէ սրտագին :



Քէ կամէիր՝ հանէտք շեղ պատարադ՝  
 Բայց ողջակէզք իսկ չեղէն քեզ ընդունակ :  
 Պատարազ Տեանն՝ հողի խոնարհ , հեղ եւ ցած ,  
 Սիրտ սուրբ , զհողի խոնարհ ատեսայ ո՛չ Աստուած :  
 Բարի արա՛, Տէ՛ր , կամօք քովք Սիրոնի  
 Եւ չինեսցին պարխազն անդէն Սաղէմի :  
 Յայնժամ լիցիս հաճ ընդ արգար պատարազս՝  
 Մինչ պատարազք ուխտից հանցեն քեզ զուարակս :

ԱՌ ԾԵՐՈՒՆԱՓԱՌՆ

Ս - Յ Ե Լ Ե Կ Ե Պ Ն

ՆՕՒԷՐ « ՀԱՅՈՐԳԻ » ԷՆ

Այս օրերուս մէջ տրամա թեան  
 Չայնդ անուշ է , Ֆե՛լէկեան ,  
 Ու ձերոյթի այդ օրերուդ  
 Վա՛ն աւիւնն է երգերուդ :  
 Քնարիկ թելեր նըւիրակն  
 Բեկբեկ ըլլան թէ թուլնան,  
 Մեղտախներ ասն խանգալատ  
 Ըլլայ գիշեր թէ խաւար...  
 Ու կա՛յ ձայն մը ա՛յնքան ազու  
 Զարնող սրտի թելերու՝  
 Որքան զըզէն հեղիկ ատուի  
 Լեռներու մէջ ամայի...



Բայց ի՞նչ օգուտ. — յաճախ ըզգալ  
 Եւ ըստխոյութիւլ լուս մընալ՝  
 Մերձե՛լ է այն անզըթօրէն  
 Բոյժն ու դարմանն իր խանդէն ,  
 Կամ իր հոգւոյն մէջ բուժանել  
 Վիշա ու մօրմօքն անարգել ,  
 Կա՛մ արգիլել լոյսը ջանին  
 Մութերուն մէջ իր բանտին . —  
 Այլ քու Գըն.սրգ , ի՛մս Ֆէլէկեան  
 Իզձ մըն է ինձ անսահման  
 Որ կ'արթնցնէ իմ սրտիս մէջ  
 Չայնիզ քնքոյշ ելեւէջ :  
 Յիշատակը նոր այդ Չօնիզ՝  
 Անգին նըւէրն է սրտիզ  
 Եւ երբեմնի կեանքիզ կայտատ  
 Անզուգականն է գոհար ,  
 Անո՛վ կ'առնեն կեանք իմ երգերս ,  
 Կը վերերդեն հառաչներս . . .  
 — Եւ հառաչներ երբ մընան լուս  
 Անոնց ժամերն են արխար . . .  
 Թշուառութեանս այս օրերուն  
 Քաջալեր մ'իւնձ՝ միա՛յն Դուն  
 Հաղարներէն նըւիրակամ  
 Դո՛ւն եղար ինձ Բարեկամ :

Ա՛հ , որքա՛ն ճիշտ Չայնն օրհնեցաւ՝  
 Չայնն ազգարար սրտերու՝  
 Թէ « Բու Տունէդ չի՛ պակօր ծեր՝ »  
 Ծեր՝ որ գիտէ բուն ցաւեր . . .  
 Արդ , ի՞նչ կուզես Չօնիզ փոխան  
 Որ Բեզ ձօնեմ , Ֆե՛լէկեան . . .  
 Ա՛ն , ընդունէ՛ , սիրաբա Բեզի ,  
 Սիրա կարեկէբ

ՀԱՅՈՐԴԻ

Վ Ե Ր Զ



ՎՐԻՊԱԿՆԵՐ

Հեղինակին լայնակաշարեան պատճառաւ հետեւ  
 եւս սխալները ստորոգծ են, զորս հարկ տեսնուած է  
 ուղղել :

| Էջ | Տող | Սխալ                             | Ուղիւ                                         |
|----|-----|----------------------------------|-----------------------------------------------|
| 20 | 11  | Գարրիէլ                          | Գարրէլ                                        |
| 22 | 5   | Հրեշտակ կամ զեւ                  | Հրեշտակ եւ կամ զեւ                            |
| 22 | 23  | Գոցի, տեսայ սիր-<br>տալ զալարուն | գոցի, տեսայ, տե-<br>տա՛յ սիրտալ զ-տա-<br>րուն |
| 30 | 20  | Որ                               | ու                                            |
| 31 | 4   | Դողդղղալ                         | դողղղար                                       |
| 42 | 3   | « Հուգոց »                       | « Հուգոց »                                    |



| ԼԶ  | Տող | Սխալ               | Ուղիղ                         |
|-----|-----|--------------------|-------------------------------|
| 42  | 8   | Փուլթացի'ր         | փուլթացիբ                     |
| 44  | 3   | Երանի' քեզ ո'վ Հայ | երանի' քեզ , ո'վ դու<br>Հայոց |
| 48  | 19  | Այնչափ             | անչափ                         |
| 53  | 13  | Բաժակէն            | բաժակին                       |
| 58  | 19  | Վըրայ              | վրայ                          |
| 59  | 23  | Տանըս մէջը         | իմ տանըս մէջ                  |
| 60  | 4   | Իբ տունը           | իբ տունն                      |
| 60  | 24  | Մ'աստուծով         | մ'Աստուծով                    |
| 66  | 17  | Լարառ              | լարած                         |
| 66  | 20  | Կը բորբոքին        | կը բորբոքէ                    |
| 69  | 18  | Աշխարհը            | աշխարհն                       |
| 70  | 11  | Իսկու թեանդ        | Իսկու թեանրդ                  |
| 81  | 23  | Եմ                 | իմ                            |
| 82  | 19  | Քմահաճոյքներու     | քմահաճոյքներու                |
| 85  | 1   | Քաղաքներուն        | քաղքներուն                    |
| 85  | 6   | Քաղաքներուն        | քաղքներուն                    |
| 86  | 10  | Գարնանային         | դարնայինին                    |
| 87  | 3   | Մահուան            | մահուն                        |
| 97  | 19  | Յոյս մ'անուշիկ     | յոյս մը անուշիկ               |
| 99  | 18  | Աշխարհէ            | աշխարէ                        |
| 100 | 5   | Վարդենեն           | վարդենին                      |
| 116 | 5   | Ճեկաին             | ճտկաին                        |

| ԼԶ  | Տող | Սխալ                                   | Ուղիղ                               |
|-----|-----|----------------------------------------|-------------------------------------|
| 121 | 17  | դինք                                   | դինքը                               |
| 124 | 2   | Reizst                                 | reizst                              |
| 133 | 8   | Ծաղկէր                                 | ծաղկեր                              |
| 134 | 23  | Նկարագիրն                              | նկարագրին                           |
| 136 | 22  | Բերէր                                  | բերեր                               |
| 148 | 20  | Ու                                     | Որ                                  |
| 151 | 12  | Անընդատ                                | անընդհատ                            |
| 154 | 11  | Երթար                                  | երթալ                               |
| 154 | 14  | Լըսէր                                  | լըսէր                               |
| 155 | (*) | (Տե'ս վարը « մոռցուած » հատուածին մէջ) |                                     |
| 158 | 18  | Սրախ մէջն սէրդ                         | սրախ մէջն է սէրդ                    |
| 163 | 4   | Որուն համար<br>Են որո՞ւ ...            | Որուն համար են ,<br>ո'ն , որո՞ւ ... |
| 167 | 7   | Սիրեցիր                                | սիրեցեր                             |
| 167 | 8   | Յայտնեցիր                              | յայտնեցեր                           |
| 165 | 4   | Պաշտպաններուն                          | պաշտպաններուդ                       |

ՄՈՌՑՈՒԱԾ

(\*) Երես 155, իններորդ տողէն սկսեալ հետեւեալ կերպով կարդալու է :

Իսկ խեղճ հարսին դէմքն եղեր էր անճանաչ ...  
Աչքերը դուրս , գոյնը կապուտ ու կանաչ ...

Այս վերջին տողը բոլորովին մոռցուած է տպագրութեան մէջ :



|                                               |     |
|-----------------------------------------------|-----|
| 1. ՍԱՍՈՒՆ և ՋԷՅԹՈՒՆ, ութամայ,                 |     |
| 160 էջ (Սիմոն Յէլէկեան) Գահիրէ 1900. Գահ. ողջ | 10  |
| 2. ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ                    |     |
| քառամայ 62 էջ. (արասապուժ) Գահիրէ 1901.       | 12  |
| 3. ՎԵՐՉԱՆՅՈՒ ՉՍՅՆԵՐ, ութամայ                  | 78  |
| էջ (Սրիմեան Հայրիկ) Գահիրէ 1901.              | 10  |
| 4. ՅԱՆԵՐԳԻ ՀՍՅՐԵՆԵՍ, ութամայ                  |     |
| 184 էջ (Հայրազի) Գահիրէ 1902.                 | դին |
| Թղթակազմ                                      | 10  |
| Կիսակաշի լաթակազմ                             | 20  |
| Ոսկեզօծ փառակազմ                              | 100 |
| Փղզակրեայ զեղակազմ                            | 500 |

ՄԱՄԼՈՅ ՅԱԿ

## ԱՔՍՈՐԻ ԿԵԱՆՔՍ

« ՀՍՅՈՐԳԻ »

ԾԱՆՈԹ. — Այս 5,000 օրինակ սպաղրելի հրատարակութեան հասոյթին մէկ ամենակարեւոր մասը բարեկործական հաստատութեանց և օրբանոցներու պիտի յատկացնէ ՀՍՅՐԵՆԱՆՈՒԷՐ հեղինակը :

## ՅԱՆԿ ՆԻՒԹՈՅ

|                                  |    |
|----------------------------------|----|
| 1. Յառաջարան                     | 3  |
| 2. Չօն առ Տիկին Կատարեր Մ. Շ ... | 5  |
| 3. Նուէր Արգաղիը                 | 7  |
| 4. Նուէր համակրանաց              | 9  |
| 5. Աքսորականը                    | 11 |
| 6. Տեսայ ևս զինքը                | 13 |
| 7. Նժդեհ Հայրազին                | 15 |
| 8. Որքան լացի ևս                 | 17 |
| 9. Իմ ողիս                       | 19 |
| 10. Խեղճ Մասօին առնը             | 24 |
| 11. Աս Խաչն                      | 27 |



|                                                  |    |
|--------------------------------------------------|----|
| 12. Հայ գիւղացին                                 | 29 |
| 13. Վտարանդիին յոյզը                             | 32 |
| 14 Առ ծաղիկն Հայրենեաց                           | 34 |
| 15. Ես կուզեմ տեսնել                             | 36 |
| 16. Առ ողին Հայաստանեայց                         | 37 |
| 17. Կորուսած հրեշտակը                            | 39 |
| 18. Հայունին ( Իրական լէպ )                      | 41 |
| 19. Ջմեռն եկաւ                                   | 45 |
| 20. Ամանորի վարդը                                | 47 |
| 21. Առ ծիծեռնակն                                 | 49 |
| 22. Առ արեգակն                                   | 51 |
| 23. Ժպիտին հրամեշտ                               | 53 |
| 24. Գարնան իրիկունը Հայաստանի գիւղե-<br>բուն մէջ | 54 |
| 25. Նաղէնիկը ( իրական )                          | 56 |
| 26. Աղօթք առ Աստուած                             | 62 |
| 27 Դէպի լեառն Զիթենեաց                           | 65 |
| 28. Յոյս առ Աստուած                              | 67 |
| 29. Վաղամուտիկ Հայ աղջիկը                        | 72 |
| 30. Հայաստանի դաշտերն ու Հայ մշակը               | 73 |
| 31. Ի Ծնունդ Փրկչին                              | 75 |
| 32. Բողոք մը առ Աստուած Էւ յոյս ասպազային        | 77 |
| 33. Գիշերը                                       | 80 |

|                                                    |     |
|----------------------------------------------------|-----|
| 34. Հայտրդիին անէծքը                               | 82  |
| 35. Հայաստանի ներկան                               | 84  |
| 36. Գարունն ու Հայտրդիին կեանքը                    | 86  |
| 37. Երկնից պատգամը                                 | 89  |
| 38. Զորակը ( Թարգմ. )                              | 91  |
| 39. Հայ որբուկներն օտարին ձեռքը                    | 93  |
| 40. Վահանիկը                                       | 95  |
| 41. Ա՛խ... Աւա՛ղ...                                | 99  |
| 42. Առ ուղեւորն                                    | 101 |
| 43. Հայտրդիին բողոքը                               | 103 |
| 44. Յիշէ՛ զի՞ս                                     | 105 |
| 45. Իզձք                                           | 107 |
| 46. Հայ որբունին իր դաղազին մէջ                    | 109 |
| 47. Դիւցազն հայ գեղջիկունին ( Իրական գէպք )        | 111 |
| 48. Գոհարն ու Օհանը ( Իրական գէպքէ մը առ-<br>նըւած | 116 |
| 49. Անցեալն ու ներկան ( բոնայանդ )                 | 122 |
| 50. Սրտի ցաւեր առ արեւ                             | 124 |
| 51. Սե՛ւ օրեր                                      | 127 |
| 52. Երկու Հայ հարսները ( Իրական գէպք )             | 130 |
| 53. Տխուր յիշատակներ                               | 139 |



ՅԱՆԿ ՆԻՒԹՈՅ

|                                       |     |
|---------------------------------------|-----|
| 54. Պատրանքը                          | 144 |
| 55. Աւօրն աղուն հարանքը               | 147 |
| 56. Հրամեշա                           | 157 |
| 57. Հայտրդին իր Աստուծոյն հետ         | 159 |
| 58. Հայկական քայլերդ                  | 162 |
| 59. Ազաշաւք Հայտրդւոյն                | 166 |
| 60. Նուէք Հայտրդիէն (Առ Ս. Ֆէլէկեան)  | 169 |
| 61. Վրիպակներ                         |     |
| 62. Յանկ նիւթոց                       |     |
| 63. Բացաարութիւն մը ( Ե . Քորսոսեան ) |     |



1

ՀՀ Ազգային գրադարան



NL0349830



37944